

ԷԶՄԻԱԾԻՆ



1965



ՌՆԺԴ

ԻԲ ՏԱՐԻ



Յոննուս

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ա


1965





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— «Թաց մեզ, Տե՛ր, զղուտն ողորմութեան» Ամանորի առթիվ Ամենայն Հայոց Մայրազույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծնություն Ս. Տ. Վազգեն Ա Հայրապետի և պետական պաշտոնական անձնավորությունների միջև փոխանակված ողջույնի հեռագրերը Փրկչի հրաշափառ և Սուրբ Մենդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրազույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծնություն Ս. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Բայր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները Ամանորի և Փրկչի հրաշափառ և Սուրբ Մենդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրազույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծնություն Ս. Տ. Վազգեն Ա Հայրապետի և եվրոպետական Արքունիքի ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և Բարոզ Մայր Տաճարում Փրկչի հրաշափառ Մենդյան տոնի առթիվ Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետի ապրիլյան եղևնի հիմնամյակի առթիվ Բայր եկեղեցիների հոգևոր պետերին ուղղված 24 սեպտեմբեր 1964 թվակիւր նամակի պատասխանները Հաղորդագրություն Ամենայն հայոց վեհափառ Հայրապետի Ազդիս-Արքիւս ուղևորության մասին ՄԱՅՐ ԱԶՈՒԽՄ Ամանորը Հոգևոր ճիմարանում Գ. ՀԱՆՈՐԱՆ— Գրիգոր Տղա Հ. Ք. ՍՐՐՈՒՆ— Կոմիտասին հետ Ա. Խ. ՍԱՅՐԱՍՏՅԱՆ— Կոտայեղեմյան հայոց Պատրիարքարանի կողմից Թուրքիայի աղադատության և զավանգների միջխառնության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու բաժնիքները Ս. ՔՈՒՆԱՋՅԱՆ— Տրանսիլվանիայի հայերի պայմարը ազգային ինքնությունը պահպանելու համար Ե. ՄՈՄՃՅԱՆ— Կիրովականի զավառագիտական բանգարանը	3 5 7 17 20 23 25 27 29 31 35 40 48 56
---	--



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱՇԽՆ
«ԷՋՄԻԱՇԽՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
 Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1965 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՔԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

«ԲԱՎՑ ՄԵՋ, ՏԷՐ, ԶԴՈՒՌՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ»

(խոհեր ամանորի և Ա. Ծննդյան առթիվ)

Ամանոր և Ա. Ծնունդ...:

Մի անգամ ևս նոր ժամանակի և նոր կյանքի մեծ խորհրդի առաջ ենք կանգնել, երբ հուլուժով ճանապարհում ենք իրադարձություններով հարուստ անցնող տարին ու անկուտրում հուլիսով, վառ երազներով ու խոհերով բացում գալիքի՝ նոր ժամանակների դուռը, սրտագին աղոթքը մեր ջրթներին. «Բավց մեկ, Տէ՛ր, պղուռն ողորմութեան»:

Աշխարհի և բովանդակ մարդկության համար, նոր տարվա սեմին, նորից բացվում են աստվածային շնորհների և բարիքների անսպառ աղբյուրները:

«Ամեն մարդու հավասար թող բաժնվի ամեն զանձ,
Թող պարտեզները բացվին և թող խուժեն հոն մարդիկ,
Բայց չկուտրեն ոչ մեկ ծառ, չճգմեն ոչ մեկ ծաղիկ...»:
(Վ. ԹԵՋԵՅԱՆ)

Գալիքի նկատմամբ վառ հույսի, անկուտրում վառատեսության մեջ է, որ աշխարհը ավելի է գեղեցկանում և զգացվում է կյանքի վեհությունը, օրերի երաժշտությունն ու հավերժի բերկրանքը:

Ամանորի և Ա. Ծննդյան խոհերի և հանդիսությանց մեջ կա շուկը Աստուծո և հավիտենականության: Աստուծո ներկայության ու հավիտենականության խորհուրդն ենք պզուժում ու ապրում նոր տարվա գալուստով:

Տարին, ժամանակը նորանում է մարդու կյանքի մեջ, նրա հավատի, հույսի, սիրո և գործերի մեջ:

«Զի հինն անց, և արդ նոր եղև ամենայն» (Բ. Կորնթ. Ե 17):

Հին տարվա մայրամուտին և ամանորի ալգաբացին, որպես ժողովուրդ և Եկեղեցի, մեր մտածումներն առաջին հերթին պետք է կենտրոնանան Աստուծո զգացման և ներկայության վրա, մեր կյանքի մեջ:

«Դու, Տէր, Դու պալս ամ ի լրումն հասուցեր...
Տարւոյ քաղցրութեան Զե օրհնի պսակ»:

Այսպիսի սրտագին խոհերով և զգացումներով, ինչպես նաև քրիստոնեական վառ հավատով, հայ ժողովուրդը, թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ Սփյուռքում, դիմավորում է նոր տարին և Ա. Ծնունդը:

Մեր ժողովուրդի, մեր հայրենիքի և մեր Եկեղեցու համար բոլորվեց հավատով, հույսով, աշխատանքով ու բարի արդյունքներով հարուստ ևս մի տարի:

Մեր ժողովուրդը, իր վերածնված Մայր Հայրենիքում, 1965 թվականը դիմավորում է ազգային հպարտության ամենաբաղցր զգացումներով, ստեղծագործ և խաղաղ աշխատանքի պայմաններում:

1964 թվականին իրապես մեծ եղան ու անմոռանալի մեր Հայրենիքի ու մեր ժողովուրդի ձեռք բերած հաջողություններն ու նվաճումները:

Ազգային-եկեղեցական տեսակետից, անցնող տարին մեր եկեղեցական տարեգրության մեջ պատմական տարի հանդիսացավ նրանով, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ղեկավարությամբ, իր նախախնամական դերը շարունա-

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

«ԲԱՅ ՄԵՋ, ՏԷՐ, ԶԴՈՒՌՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ»

(Խորհրդ ամանորի և Ս. Ծննդյան առթիվ)

Ամանոր և Ս. Ծնունդ...:

Մի անգամ ևս նոր ժամանակի և նոր կյանքի մեծ խորհրդի առաջ ենք կանգնել, երբ հուլյանով ճանապարհում ենք իրադարձություններով հարուստ անցնող տարին ու անկտրում Ռուստով, վառ երազներով ու խոհերով բացում գալիքի՝ նոր ժամանակների դուռը, սրտագին աղոթքը մեր շրթներին. «Բա՛ց մեզ, Տե՛ր, պղտուն ողորմութեան»:

Աշխարհի և բովանդակ մարդկության համար, նոր տարվա սեմին, նորից բացվում են աստվածալին շնորհների և բարիքների անսպառ աղբյուրները:

«Ամեն մարդու հավասար թող բաժնվի ամեն գանձ,
Թող պարտեզները բացվին և թող խուժեն հոն մարդիկ,
Բայց չկտրեն ոչ մեկ ծառ, չճգմեն ոչ մեկ ծաղիկ...»:
(Վ. ԹեճեՅԱՆ)

Դալիքի նկատմամբ վառ Ռուսի, անկտրում լավատեսության մեջ է, որ աշխարհը ավելի է գեղեցկանում և զգացվում է կյանքի վեհությունը, օրերի երաժշտությունն ու հավերժի բերկրանքը:

Ամանորի և Ս. Ծննդյան խորհրդի և հանգիստության մեջ կա շունչը Աստուծո և հավիտենականության: Աստուծո ներկայության ու հավիտենականության խորհուրդն ենք զգում ու ապրում նոր տարվա գալուստով:

Տարին, ժամանակը նորանում է մարդու կյանքի մեջ, նրա հավատի, հույսի, սիրո և գործերի մեջ.

«Զի հինն անց, և արդ նոր եղև ամենայն»
(Բ. Կորնթ. Ե 17):

Հին տարվա մայրամուտին և ամանորի ալգաբացին, որպես ժողովուրդ և Եկեղեցի, մեր մտածումներն առաջին հերթին պետք է կենտրոնանան Աստուծո զգացման և ներկայության վրա, մեր կյանքի մեջ:

«Դու, Տե՛ր, Դու պալս ամ ի լրումն հասուցեր...
Տարույ քաղցրութեան Զև օրհնի պսակ»:

Այսպիսի սրտագին խորհրդով և զգացումներով, ինչպես նաև քրիստոնեական վառ հավատով, հայ ժողովուրդը, թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ Ափյուռքում, դիմավորում է նոր տարին և Ս. Ծնունդը:

Մեր ժողովրդի, մեր հայրենիքի և մեր Եկեղեցու համար բոլորվեց հավատով, հույսով, աշխատանքով ու բարի արդյունքներով հարուստ ևս մի տարի:

Մեր ժողովուրդը, իր վերածնված Մայր Հայրենիքում, 1965 թվականը դիմավորում է ազգային հպարտության ամենաքաղցր զգացումներով, ստեղծագործ և խաղաղ աշխատանքի պայմաններում:

1964 թվականին իրապես մեծ եղան ու անմոռանալի մեր Հայրենիքի ու մեր ժողովրդի ձեռք բերած հաջողություններն ու նվաճումները:

Ազգային-եկեղեցական տեսակետից, անցնող տարին մեր եկեղեցական տարեգրության մեջ պատմական տարի հանդիսացավ նրանով, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ղեկավարությամբ, իր նախախնամական դերը շարունա-

կեց կատարել մեր ժողովրդի քրիստոնեական և հոգևոր մխիթարության, դաստիարակության և առաջնորդության գործում:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, որպես բարի և արի նախապետը մեր Եկեղեցու, միշտ լավատես, ամեն կերպ աշխատեց կենդանի և վառ պահել Երուսաղեմի ողջագործման ոգին Սփյուռքի մի շարք այն տխուր երևույթների դեմ, որոնց նպատակն էր քայքայել նորից մեր եկեղեցական միությունը և ազգային միասնությունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը փրկության լաստ է ալեկոծությանց մեջ ծիպցող Սփյուռքի հայության համար, լույս և ճանապարհ՝ մութի մեջ, միություն՝ բաժանման դեմ, անխորտակելի ամբարտակ՝ ծուլման դեմ, ինչքան էլ նոր վտանգներ մոտենան հայոց երդիկներին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հայ ժողովուրդը և մեր վերածնված Մայր Հայրենիքը, նոր տարվա շեմքին, ավելի քան երբեք Պյոլր, հավատով լի, կանգնել են իրենց լուսավոր ապագայի նկատմամբ խանդավառող, հայրենանմեր, եկեղեցաշեն հեռանկարների առաջ:

Նոր տարվա լուսաբացի հետ Զրիստոնեական Եկեղեցու զանգերը ավետում են աշխարհին «Մեծ և սքանչելի խորհուրդ»-ը՝ ձուլողը խաղաղության իշխանին, Արդարության Արեգակին, «որ բնակեացն ի մեզ»:

Փրկչի ծննդյան խորհրդով, տեսիլքով ապրեց, ստեղծագործեց մեր ժողովուրդը և հաճախ նահատակվեց:

1965 թվականի գարնան լրանում է ապրիլյան արյունոտ եղեռնի 50-ամյակը: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 1964 օգոստոս 17 թվակիր սրբատառ կոնդակով, 1965 թվականը հռչակվել է ազգային սուգի և աղոթքի հոբելյանական տարի:

Ազգիս սրբազնատուրք և հայրենասեր Հայրապետի սրբատառ կոնդակի ոգով և Նրա իմաստուն թելադրությամբ, Սփյուռքում ամեն կողմ կազմվել են հոբելյանական հանձնաժողովներ, պատշաճորեն և մեր սուգին ու վշտին համապատասխան լրջությամբ, հայրենասիրությամբ նշելու ապրիլյան մեծ եղեռնի 50-ամյակը: Վեհափառ Հայրապետի անմիջական ղեկավարության տակ, Մայր Աթոռում ևս նախապատրաստական աշխատանքներ են կատարվում հայ տառապանքի և մեր հավաքական նահատակության 50-ամյակը ըստ արժանվույն նշելու համար:

Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մշտավառ մի կանթեղ է վետեղվելու «քրիստոնեության առաջին մարտիրոս Ս. Ստեփանոսի սեղանին վերե, ուր և այսուհետև պիտի մատուցվի հատուկ սուրբ պատառագ ամեն տարի ապրիլ 24-ին» (հայրապետական կոնդակ):

«Հայոց քրիստոնսատես այս Մայր Հողին վրա, մեր Մայր Տաճարի կողքին», կկատուցվի «արձան մը անմոռաց հուշի և սրբազան ուխտի» մեր նահատակների խնկելի և անմոռաց հիշատակին, որի սեղանի վրա «Մենք պիտի աղոթենք նաև մեր վերածնած ժողովուրդի կյանքի և բարօրության համար, որ ամա ավելի քան չորս տասնամյակներն ի վեր կապրի, կուճանա, կհպրաւա, հուճկու քաղուկներով ու հանճարի լույսով կվերաշինե և ծաղիկ կդարձնե Մայր Երկիրը մեր, Հայաստանը ամենայն հայոց» (Վեհափառ Հայրապետի Ս. Ծննդյան քարով):

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի 1965 փետրվար-մարտ-ապրիլ ամիսյալ համարների բացառիկը ամբողջովին կնվիրվի ապրիլյան եղեռնի հիշատակին:

Հայ ժողովրդի համար նվիրական է մեր նահատակների անմոռաց հիշատակը: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Ս. Էջմիածնի հոգևոր բարձունքից, Հայոց Աշխարհի Մայր Հողից, հանուն մեր նահատակների, պատգամում է, պատվիրում, որ «արդար է և խղճի սեպուհ պարտականություն բոլորիս համար, որ հայոց մեծ եղեռնի հիսնամյակի տարեկիցը սոփի հանդիսանա առավել ամրապնդումի մեր ժողովուրդի հոգևոր, ազգային ու հայրենասիրական միասնության»:

«Արդար է, այո՛, և սպասելի, որ այս տարի, զոհն այս տարի ի սպառ լոնն ամեն տեսակի ներքին հակամարտություններ ու տարակարծություններ, արտասահմանի հայության ծոցին մեջ, և մեր ժողովուրդի բոլոր զաւակները անխտիր միանան, միակամ դառնան, համապագային տիրական զգացումի մը մեջ, մեր նահատակներու սուրբ հիշատակով եղբայրացած, ավելի քան երբեք» (Վեհափառ Հայրապետի Ս. Ծննդյան քարով):

Արժան և իրա՛վ:

Ամենայն Հայոց հայրենասեր Հայրապետի սուրբ բերանով խոսում է հայոց պատմության ամենա ոգին:

Այս է նաև կրակն պատգամը մեր նահատակների:

Խոսողականիմբ և հետևիմբ:





**ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

ԵՐԵՎԱՆ

Մեզ համար մեծ հաճույք է ջնորհավորել Ձեր նոր տարին և մաղթել Ձեզ
ամեն բարիք ու փալլուն հաջողություններ՝ Ձեր հայրենանվեր գործերին:

Մաղթում ենք նաև ի սրտե, որ նոր տարին լինի փառավոր նվաճումներով լի
մի տարի մեր վերածնված Մայր Հայրենիքի համար և խաղաղության տարի ամ-
բողջ աշխարհի համար:

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷԶՄԻԱԾԻՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ ԶՈԶԻՆՅԱՆԻՆ**

ԵՐԵՎԱՆ

Հանուն Հայաստանյայց Եկեղեցու, սիրով ջնորհավորում ենք նոր տարին և
մաղթում ենք Ձեզ և մեր հայրենի հարազատ կառավարության բոլոր անդամներին
աննկուն եռանդ ու ջինարար ոգի, որպեսզի է՛լ ավելի հպորանա ու ծաղկի մեր Մայր
Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, բարօրության և խաղաղության մեջ:

Մաղթում ենք նաև, որ համայն աշխարհի համար նոր տարին լինի բարեկա-
մության և խաղաղության տարի:

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷԶՄԻԱԾԻՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ Կ. ԴԱԼԼԱՋՅԱՆԻՆ**

Ե Ր Ե Վ Ա Ն

Հաճեցեք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքները և բարեմաղթությունները Նոր տարվա առիթով անձամբ Ձեզ և Ձեր գործակիցներին: Մաղթում ենք, որ Նոր տարին լինի խաղաղության, բարօրության և Նոր հաջողությանց տարի համայն ժողովրդի համար:

Սիրով և ողջունիվ,

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

Ե Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Վ Ա Զ Գ Ե Ն Ա-ԻՆ**

Ե Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության և անձամբ իմ անունից ջերմորեն և սրտագին շնորհավորանքներ եմ հղում Ձեզ Նոր տարվա առթիվ:

Ցանկանում եմ առողջություն և արգասավոր գործունեություն Ձեր հայրենակներ ջանքերում:

Ընդունեցե՛ք իմ խորին շնորհակալությունը Ձեր շնորհավորանքների և բարի մաղթանքների համար:

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի
Նախագահության նախագահ

Ե Ր Ե Վ Ա Ն

Խորին շնորհակալություն եմ հայտնում Նոր տարվա առթիվ Ձեր հղած շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի և անձամբ իմ կողմից սրտանց շնորհավորում եմ Ձեր Նոր տարին: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և անսպասելիորով: Թո՛ղ Նոր տարին ամբողջ աշխարհում լինի ամրակուռ խաղաղության տարի, մեր հայրենիքի բարգավաճման և առաջադիմության տարի:

Ա. ԶՈՉԻՆՅԱՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ

Հաճեցեք ընդունել խորհրդիս և անձամբ իմ շնորհավորանքները Նոր տարվա առթիվ:

Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և հաջողություն: Թո՛ղ Նոր տարին լինի մեր ժողովրդի և հողագնդի բոլոր ժողովուրդների համար խաղաղության և բարեկամության տարի:

Կ. ԴԱԼԼԱՋՅԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր
Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ

Ե Ր Ե Վ Ա Ն





ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ԶՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ԱԻԶԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ
ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոռմեական Կաթողիկ Եկեղեցու Զառանգապետ Նորին Սրբություն
Տ. Տ. ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հոռմ),
Կոստանդնուպոլսո Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և Բամայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և Բամայն Աֆրիկայի Պատրիարք Նորին Սրբություն
ԶՐԻՍՏԱՓՈՐԲ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Անտիոքի և Բամայն Արևելքի Պատրիարք Նորին Սրբություն
ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ-ԻՆ (Դամասկոս),
Երուսաղեմի Հունաց Պատրիարք Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻՆ (Երուսաղեմ),
Սիրիական Օրթոդոքս Եկեղեցու և Բամայն Արևելքի Պատրիարք
Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲԲ-ԻՆ (Դամասկոս),
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն
ԵՓՐԵՄԲ-ԻՆ (Թբիլիսի),
Լիբանանի Մարոնիտ Պատրիարք Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԻԱԴԵԻՆ (Բեյրութ),
Քենտրքերիի Արքեպիսկոպոս, Բամայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ
Նորին Սրբություն ԴՈԼԻՄՔԻՆ (Լոնդոն),
Ռումինական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),
Բուլղարական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ԿՅՈՒՐԵՂԻՆ (Սոֆիա),
Սերբիայի և Բամայն Հարավսլավիայի Պատրիարք Նորին Սրբություն
ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Չեխոսլովակյան Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ԴՈԼԻՄՔԻՆ (Պրագա),
Աթենքի և Բամայն Հելլադայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
ԽՐԻՍՈՍՏՈՍԻՆ (Աթենք),
Կիպրոսի Արքեպիսկոպոս Նորին Սրբություն ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոզիա),
Էթիոպիայի և Արևելյան Աֆրիկայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
ՆԻԿՈԼԱՅՈՍԻՆ (Ալեքսանդրիա),
Ղաթի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
Աբունա ԿՅՈՒՐԵՂԲ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Համայն Եթովպիայի Պատրիարք Նորին Սրբություն
Աբունա ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (Ադդիս-Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս Նորին Սրբություն
ՏԻՄՈԹԵՈՍԻՆ (Կերալա),
Նորին Ամենապատվություն կարդինալ ԱՂԱԶԱՆՑԱՆԻՆ (Հոմ),
Հայ Կաթողիկե Եկեղեցու Պատրիարք Նորին Ամենապատվություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ՊԱԹԱՆՑԱՆԻՆ (Բելրուք),
Արևմտյան Նյու-Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու Առաջնորդ
ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆ ԳՍՏՈՆ ՍԶԵՅՑ Եպիսկոպոսին
(Նյու-Յորք),

ԱՄՆ-ում Զրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհրդի Նախագահ
Գերարծանապատիվ Հայր Ժ. ԻՐՎԻՆ ՄԹՈԹԼԼԵՐԻՆ (Նյու-Յորք),
Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լուսերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբապետություն ԳՈՒՍՏԱՎՏՈՒՐՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լուսերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբապետություն ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (Տալլին),
Միխայիլյան Ուխտի Աբբաճայր Գերմարգելի Հայր ՀՄԱՅԱԿ
Վարդապետ ԿԵՏԻԿՅԱՆԻՆ (Վենետիկ),
Միխայիլյան Ուխտի Աբբաճայր Գերապայծառ Հայր ՄԵՍՐՈՊ
Վարդապետ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (Վիեննա),
Ֆրանսիական Միաբանության Կուստոդ
Հ. ԼԻՆՈՒՍ ԿՈՊՊԵԼԼԻՆ (Երուսաղեմ),
Եկեղեցիների Ռաժաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. ՎԻԼԹԱՄ ՎԻՍՍԵՐ Գ՝ ՀՈՒՅՏԻՆ (ժընև):

Այսօր, երբ երկնքի բարձունքներեն վերստին կլսենք մեծ ավետիալ մեր Տիրոջ
և Փրկչի ծննդյան, ջերմ սրտով կուզանք շնորհավորելու Ձերդ Սրբությունը, մաղ-
թելով, որ բարին Աստված Ձեզի պարգևե երջանիկ հովվապետության երկար տա-
րիներ, որպեսզի Ձեր սուրբ առաքելությունը շարունակեք երկրի վրա, ի ծաղկումն
Ձեր Ա. Եկեղեցվո, ի միախառություն Ձեր հավատացյալ ժողովրդյան և հուրախու-
թյուն Հայաստանյայց Եկեղեցվո և անձամբ Մեզ:

Թող մարդասեր Փրկիչն մեր Զրիստոս Իր Ծննդյան շնորհներով աշխարհի վրա
և մարդկության հոգիին մեջ ամուր և անսասան պահպանե խաղաղության և ի մար-
դիկ հաճության ոգին, և ընդմիջտ հեռացնե կյանքի սահմաններեն պատերազմնե-
րու չարիքը:

ԶԶրիստոս ամուր պահած մեր սրտերուն մեջ, Մենք և Մեր Եկեղեցին պիտի
աղոթենք ու գործենք վասն խաղաղության համայն աշխարհի և վասն եղբայրական
սիրո ամրապնդման ի մեջ եկեղեցյաց և ժողովրդոց:

Հայ ժողովուրդի հավատքի կեդրոն բազմադարյան Ա. Էջմիածնեն մեծ ավե-
տիս Ձեզ՝

«Զրիստոս ծնա՛ւ և յայտնեցա՛ւ»:

Եղբայրական հարգալից ողջունիվ.

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱԹՐԱԳՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷԶՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա,
ԾԱԹՐԱԳՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷԶՄԻԱԾԻՆ

Ա. Կուլսից մարմին առած Բանը Ձերդ Սրբության առատորեն պարգևի լույս
և ուժ, և գալիք տարում ավելացնի Իր սերը բոլոր քրիստոնյաների մեջ և ամրապնդի
Իր խոստացված խաղաղությունը բոլոր բարի կամքի մարդկանց մեջ:

ՎԱՏԻԿԱՆ

ՊԱՊ ՊՈՂՈՍ Զ

Հրեշտակները, հովիվները, այրը, մսուրը կրկին հրավիրում են մեզ լսելու մեծ ուրախության ավետիսը, որ մեզ համար այսօր ծնվել է մի Փրկիչ, որ է Զրիստոս Տերը, գալու և պաշտելու մեր Փրկիչ Զրիստոսին, երգելով՝ «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն»:

Պաշտելով և գովաբանելով գալիք Առաջնորդին, որ հռչակվեց մարգարեներէ կողմից, առաջիկա մեծ տոների և ծագող նոր տարվա առթիվ, Ձերդ հույժ սիրեցյալ և մեծապես գնահատված Սրբության և Ձեր պատկանելի Եկեղեցուն եղբայրական սիրով հղում ենք մեր և մեր Եկեղեցու ջերմագին ողջույնները, աղոթելով, որ Բեթղեհեմում ծնված մեր Աստվածը միշտ բաշխի Իր շնորհը Ձերդ Սրբության, և նոր տարին Ձեզ համար լինի իրանակացած ամենայն բարությանը և օրհնություններով:

Ողջագութելով Ձերդ Սրբությանը սուրբ համբույրով, մնում ենք եղբայրական սիրով և բացորոշ պատվով, Ձերդ պատկանելի Սրբության սիրող եղբայր ի Զրիստոս,

ԱԹԵՆԱԳՈՐԱՍ

Տիեզերական Պատրիարք Հունաց

ՍՏԱՄԱՌԻԼ

Ձերդ Սրբություն.

Խնդրության խոսքով և սիրով ողջունում եմ Ձեզ, մեր Տեր Հիսուս Զրիստոսի պայծառ Ծննդյան տոնի առթիվ:

Գնանք Նրա մոտ, անձայն, մսուրի մեջ լռակյաց, իմաստուն մոգերի ճանապարհով՝ Արևելքից, և Բեթղեհեմի խաղաղ հովիվների ուղիով: Միանա՛նք նրանց հավատին, սիրոյն և խնդության, և միասին փառք վերառաքենք բարձրյալ Աստուծուն և գոհունակություն՝ մարդկությանը հայտնության համար:

Թո՛ղ Տերը օրհնի մեզ բոլորիս առաջիկա նոր տարում՝ Իր խաղաղ և բարեբեր օրերով:

Ձերդ Սրբության եղբայրական սիրով,

ԱԼԵՋՍԻ

ՄՈՍԿՎԱ

Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

Հաճույքով ստացանք Ձերդ Սրբության ջնորհավորական գիրը մեր Փրկչի Ծննդյան սուրբ տոների առթիվ:

Փոխադարձելով Ձեր տոնական եղբայրական ողջույնը, ամբողջ սրտով մաղթում ենք, որ նոր տարում մեր Տեր Աստվածը Ձերդ Սրբության, Ձեր եպիսկոպոսական դասուն և Ձեր Ս. Եկեղեցու աստվածասեր հոտին տա առողջություն, խաղաղություն և ի վերուստ իջալ պարգևներ:

Մնում ենք Ձերդ Սրբության եղբայր ի Զրիստոս,

ԶՐԻՍՏԱՓՈՐ Բ

ԶԻՖԻՍԻԱ

Պատրիարք Ալեքսանդրիայի և հասայն Աֆրիկայի

Ձերդ Երանություն, երանելի Հովվապետ, սիրեցյալդ ի Տեր Եղբայր և ծառայակից.

«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Անսահման է մեր գոհունակությունը ամենաողորմած Տեր Աստուծուն և Հորը, որն արժանացրեց մեզ՝ սիրելի Երանությանդ հետ ապրել խաղաղ և առողջ մինչև այս փառահեղ և ամեն քրիստոնյայի համար թանկ օրերը, երբ մենք, լի հոգևոր խնդությամբ և եղբայրական սիրո սրտերով, բարձր հանդիսավորությամբ տոնում ենք մեր փրկության մեծ տոնը՝ Զրիստոսի Ս. Ծնունդը և նոր տարին:

Մենք ջերմագին աղերսում ենք նորածին Աստվածամանկան՝ տալ տանջված մարդկանց սերնդին ընդհանուր և մշտական խաղաղությունը, երգված մի խումբ հրեշտակների կողմից Բեթղեհեմում, Ս. Ծննդյան այդ գիշերը:

Այս խոհերով և սգացմունքներով, մենք, եղբայրական սուրբ համբույրներով, ամբողջ սրտով ողջունում և ջերմորեն ջնորհավորում ենք Ձերդ Սրբության՝ Զրիս-

տոսի Ծննդյան և նոր տարվա կապակցությամբ, և անկեղծ ցանկությամբ Ձեզ երկար կյանք մաղթում: Ապրեք խաղաղ, առողջ և բարեբաստիկ՝ ի փառս Հայաստանյայց Ս. Եկեղեցու և համայն աստվածավախ հայ ժողովրդի:

Մնամք նորածին Զրիստոսի եղբայրական սիրով:

ՃԵՌԴՈՍԻՈՍ Զ

Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի

ՂԱՄԱՍԿՈՍ

Ջերմապես շնորհակալություն ենք հայտնում Ձերդ Սրբության ուղարկած շնորհավորանքների և լավագույն մաղթանքների համար: Ի բոլոր սրտե փոխադարձում ենք դրանք, մաղթելով, որ նոր տարին լինի լի երկնային օրհնություններով:

ԲԵՆԵՂԻԿՈՍ

Պատրիարք Երուսաղեմի Հունաց

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Ձերդ Սրբություն.

Շնորհակալություն ենք հայտնում 1964 թվականի Ս. Ծննդյան տոնի ամօրյա Ձեր ուղարկած շնորհավորանքի համար: Արդարև, սա ամենաերջանիկ ամօրն է, երբ մենք հրճվում ենք հավատալով, որ Աստուծո հանը մարմնացավ երկրի վրա, որպեսզի խավարից Նա մեզ փոխադրի լուսին, մահից՝ կյանքին, գերությունից՝ ազատության և այս երկրից՝ Իր երկինքը: Փառաբանենք Նրան երկնքի հյուրընկալներով և շնորհավորենք ամբողջ մարդկությանը իր Աստվածային Փրկչի ծնունդով: Թող Ս. Մանուկը զորացնի Ձերդ Սրբությանը, Ձեր սիրեցյալ Եկեղեցու համայն հոգևորականության և հավատացյալ ժողովրդի հետ, դիմավորելու Իր Ծննդյան տոնը բազում տարիներ հրճվանքով, ուրախությամբ և հպորությամբ:

Ձերդ ի Տեր՝

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ

ՂԱՄԱՍԿՈՍ

Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի

Ձերդ Սրբություն.

Շնորհակալություն ենք հայտնում Տեր Աստուծուն՝ մարդկային ցեղին ցույց տված ողորմության համար, տալով Իր Միածին Որդուն, որպեսզի «զի ամենայն որ հաւատայ ի Նա՝ մի՛ կորիցե, այլ ընկայցի զկեանսն յափտենականս» (Յովհ. Գ 16): Բեթղեհեմում տեղի ունեցավ մեծ հրաշք—Աստված մարդու հետ միացավ, երկինքը և երկիրը զրկախառնվեցին:

Մե՛ծ բարեբախտություն, մե՛ծ ուրախություն:

«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Տիրոջ ուրախությունը ոգեշնչում և առաջ է տանում մեր հոգին, առաջնորդում Բեթղեհեմի մուրին, և փառաբանում խոնարհ սրտով և մաքուր շրթունքներով: Այս տարամերժիկ ժամանակ, Զրիստոսի Ս. Եկեղեցին ուժեղ է հույսով, որ ժողովուրդներին կրե՛րի համաձայնության և կհաստատվի բոլորիս անհրաժեշտ խաղաղությունը երկրի վրա:

Աստվածային օրհնություն ենք ցանկանում Ձերդ Սրբության, Ձեր հովհապետներին, հովիվներին, Ձեր Ս. Եկեղեցուն և բոլոր երկնային օգնություն որոնողներին և առհասարակ երկրի բոլոր ժողովուրդներին, որպեսզի առաջիկա նոր տարին՝ 1965 թվականը, լինի խաղաղության բարեբաստիկ տարի և աստվածային առատ ողորմության տարի:

Ի Զրիստոս եղբայրական սիրով, հոգևոր համբույրով և հարգանքով զրկախառնվելով, մնում ենք Ձեր խոնարհ ծառայակից և եղբայր ի Զրիստոս՝

ԵՓՐԵՄ Բ

Կաթողիկոս-Պատրիարք համայն վրաց, Արքեպիսկոպոս Մցխեթայի և Թբիլիսիի

ՃԲԻԼԻՍԻ

Չերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Զրիստոս.

«Շնորհք ընդ Ձեզ և խաղաղություն լսատուծոյ ի Հօրէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Զրիստոսէ»:

Մինչ մեր Փրկչի Ծննդյան տոնը դարձյալ մոտենում է, Զրիստոսի անվամբ ողջունում ենք Ձեզ և գոհաբանությամբ վերադառնում հրեշտակի պատգամը.

«Մի՛ երկնչիք, ցի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանս: Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի» (Ղուկ. Ա 10—11):

Հրեշտակային ողջույնի սույն խոսքերով, հովիվները, զբաղված իրենց խոնարհ պարտականություններով, առաջինը եղան իմանալու մարդեղության ուրախ լուրը: Իրենց շուրջ գտնվող գիշերային մթությունը փարատվեց մեր Փրկչի Գալըստյան հրճվալի ավետիսով և ծայնովը երկնային հյուրընկալների, որոնք պաշտում էին և գովաբանում Աստուծուն, և շտապելով վազեցին բերելու իրենց մեծարանքը Մանուկ Թագավորի ոտքերի առաջ:

Մենք ևս, այս սուրբ օրերին, շտապում ենք հրճանքով բերելու մեր խոնարհ պաշտամունքը Զրիստոսին, մեր Թագավորին և մեր Աստուծուն: Այսպես մենք միացած ենք մեր բոլոր հավատացյալներին, որոնք ընդունում և պաշտում են եռամեծ Աստուծուն, որ օրհնյալ է դարից դար:

Մեր մարդկային սրտերի հողեղեն անոթում, Ձեզ հետ մենք կկրենք փրկարար Ավետարանի գանձը, աղոթելով, որ Զրիստոսի հրճվանքը լինի բոլոր մարդկանց համար:

Ծննդյան այս օրերին, թո՛ղ ամենակարողն Աստված օրհնի Ձեզ, իմ սիրելի՛ Եղբայր, Ձեր բոլոր հոգևորականության և հավատացյալ ժողովրդի հետ, որոնք հանձնված են Ձեր խնամքին, և թո՛ղ Նա զորացնի Ձեզ բոլորիդ Իր ծառայության մեջ:

Եղբայրական սիրով և ողջույններով, Ձեզ սիրող Եղբայր ի Զրիստոս,

ՄԱՅՁԼ ՌԵՄՋԻ

Արքեպիսկոպոս Ջենտրեբրիի,

Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ Ռամայն Անգլիայի

Լ Ո Ն Դ Ո Ն

Չերդ Վեհափառություն, սիրեցյալ Եղբայր ի Զրիստոս.

Սիրով շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, Չերդ Սրբության կողմից Մեզ ուղարկված նամակի համար. քրիստոնեական մեծ տոնի՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Զրիստոսի Ծննդյան առթիվ:

Զրիստոնեական եկեղեցիները, աշխարհի բոլոր կողմերում, անսահման ուրախությամբ, տոնում են այսօր մեր Տիրոջ՝ Հիսուս Զրիստոսի Ա. Ծնունդը:

Ռումին Ուղղափառ եկեղեցին, իր նվիրապետական Աթոռներով, իր ծառայողներով և հավատացյալներով, բաշխում է քրիստոնեության այս ուրախությունը, Մեր միջոցով, մարդացյալ Զրիստոսով ողջույններ հաղորդելով Չերդ Վեհափառության և Հայաստանյայց Ա. եկեղեցուն:

Տիրոջ Ծննդյան տոնը բերում է քրիստոնեության գիտակցության առաջ իրականություններ և ուսմունքներ, որոնք երբեք չեն հնանում:

Բեթղեհեմում ծնված Մանուկը՝ «Բանն Աստուած... Նա էր ի սկզբանե առ Աստուած... Ամենայն ինչ նովաւ եղև... Եւ Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ...» (Յովհ. Ա 1—3, 14):

Իր ժողովրդի մեջ հայտնությունը Աստուծո անսահման սիրտ արտահայտությունն է դեպի աշխարհ. «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զմրդին իւր Միածին ետ. ցի ամենայն որ հաւատալ ի Նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս» (Յովհ. Գ 16):

Պատգամը, զոր բերեց Նա աշխարհին ծննդյան իսկ օրից, հեշտակների ավետիսն էր. «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14):

Բոլոր նրանք, ովքեր այս աշխարհում խոստովանում են իրողությունները և տարածում են այս ուսմունքները, կապում են ի Զրիստոս մի մեծ Եկեղեցին, հիմնադրված իր կողմից, որը միակ Գլուխն է այս Եկեղեցուն, «իսկ Եկեղեցին իր մարմինն է» (Եփես. Ե 23):

Այս ճշմարտությունները ստիպում են մեզ, բոլոր քրիստոնեական Եկեղեցիների եպիսկոպոսներին, մասնակցելու «ի հաստատությունն սրբոց, ի զորո՞ւ պաշտաման, ի շինուած մարմնոյն Զրիստոսի», որով և «ճշմարտեալք սիրով՝ աճեցուցուք ի նա զամենայն որ է գլուխ, Զրիստոս» (Եփես. Դ 12, 15):

Այս բոլորը հիշելով, ի բովանդակ սրտե աղաչում ենք Տիրոջ՝ Աստվածորդւմուն, որ Չերո Սրբության, Չեր եպիսկոպետական Աթոռների պետերին, Չեր Եկեղեցու ծառայողներին և հավատացյալներին պարգևի առողջություն, ուրախություն և բարգավաճում, իսկ նոր տարին՝ 1965 թվականը, Տիրոջ ծննդյան օրը, քրիստոնեական եկեղեցիներին և բոլոր ժողովուրդներին բերի հրեշտակների ավետիսի իրակա-նացումը. «Եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ողջագուրելով Ձեզ սուրբ համբույրով, մնում ենք Ձերդ Վեհափառության բարի աղոթողը և եղբայրն ի Զրիստոս մարդացյալ.

ՀՈՒՍԻՆԻԱՆ

Պատրիարք Ռումինիայի

ԲՈՒՆԱՐԵՍ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Զրիստոս.

Անձամբ մեր և Բուլղար Ուղղափառ Եկեղեցու Ս. Սինոդի անունից սիրով ու սրտագինս ողջունում ենք Ձեզ Զրիստոսի ծննդյան և 1965 նոր տարվա տոների առթիվ:

Հրեշտակների երգով ավետվեց Զրիստոս Աստուծո ծնունդը, իբրև ամենա-նշանակալից իրադարձությունը մարդկային պատմության: Հրեշտակներն ավետեցին, որ նորածին Զրիստոսը պիտի փառաբանի երկնավոր Տիրոջ և պիտի քարոզի խաղաղություն ու հաճություն մարդկանց միջև, դրանով իսկ գոհացում տալու հա-մար մարդկանց ամենանվիրական զգացմունքներին:

Ս. Ծննդյան այս ուրախալի տոնին, մենք ևս պետք է մեր ծայրը միացնենք հրեշտակների օրհներգության՝ «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»: Եվ մեր ծայրը ներկայիս պիտի հնչի առավել ուժգին, քան Զրիստոսի հետնորդների ծայրը անցյալում, որովհետև այսօր խաղաղությունը և հաճությունը առավել վտանգ-ված են, որովհետև կործանման միջոցները երբե՞ք այնքան զորավոր չեն եղել, ինչ-քան մեր ժամանակներում:

Աղոթագին հայցում ենք Զրիստոս Աստուծուց, որ օրհնաբեր ու բարօր լինի նոր տարին, որպեսզի բոլոր մարդիկ աշխարհում ապրեն խաղաղությամբ ու սիրով և կատարեն բարի ու ճշմարիտ գործեր՝ ի փառս Աստուծո, հանուն խաղաղության երկրի վրա, հանուն բարեկամության ժողովուրդների միջև, հանուն հաճության մարդկանց միջև:

Կրկին ողջունում ենք Ձեզ եղբայրական համբույրներով և աղոթում առ Աստ-ված, որ պարգևի Ձեզ քաջառողջություն և ուժ՝ երկար տարիներ ծառայելու համար Ձեր Զրիստոսասեր հոտին:

Հանձնվելով Ձերդ Սրբության սուրբ աղոթքներին, մնամ՝

ԿՑՈՒՐԵՂ

Ս Ո Յ Ի Ա

Պատրիարք Բուլղարիայի

Նորին Երանություն, Ամենայն Հայոց Պատրիարք և Կաթողիկոս, ի Զրիստոս մեր խոնարհության պաշտոնակից Տ. Տ. Վապգենին, ցանկություններ, համբույրներ, եղբայրական ողջույններ և սրտագին շնորհավորանքներ:

Լցված մեր առաջնորդների, մեր միաբանության և հավատարիմ զավակների Ռոզար խնդությամբ, փառաբանում ենք Զրիստոսի Ծննդյան փառավոր տոնը:

Ցանկանում ենք այդ առթիվ բաժանել այդ ուրախությունը մեզ թանկագին Ձերդ Սրբության, առաջնորդների, միաբանության՝ Հայոց քույր Եկեղեցու հետ և մեր ընդհանուր աղոթքներով խնդրել աստվածային ողորմությունը՝ շնորհելու մարդկության «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»:

Այս մտածումներով և ցանկություններով, ազնվաբարո մեր Բարեկամին՝ Չերդ Սրբության, ցանկանում ենք Աստուծուց երկար կյանք և բաջառոջություն՝ ի փառս Հայոց քույր եկեղեցու:

Շնորհավորում ենք նաև առաջիկա 1965 թվականը: Հղում ենք Ձեզ մեր հինավուրց շնորհավորանքները:

«Ջրիստոս ծնա՛ւ»:

Հանձնում ենք մեզ Ձեր սուրբ աղոթքներին և մնում նորածին Ջրիստոս Փրկչով Ձեր եղբայր և ծառայակից՝

ՀԵՐՄԱՆ

Պատրիարք Բաժայն Սեբեթայի

ԲԵԼԳՐԱԴ

Չերդ Սրբություն.

Այս լուսավոր տոնին, երբ հրճվալի սրտով փառք ու պատիվ ենք ձոնում Բեթղեհեմի քարայրում ծնված խաղաղության Իշխանին, Չերդ Սրբության հղում եմ սրտազին և անկեղծ բարեմաղթություններ: Բեթղեհեմի փառաբանյալ Մանուկը մեծագույն խաղաղարարն է, խաղաղարարը մարդու և Աստուծո միջև, խաղաղարարը ժողովուրդների և Բաժայն մարդկության, և մենք կամենում ենք ամբողջ հոգով հետևել Նրան:

Անձամբ իմ, Չեխոսլովակիայի Ապգալին եկեղեցու կենտրոնական խորհրդի և մեր հավատացյալ ժողովրդի անունից, կամենում եմ հայտնել մեր ուրախությունը առ այն, որ մենք կարող ենք ընթանալ եղբայրական միասնության ճանապարհով, Չերդ Սրբության և Ձեր գլխավորած եկեղեցու հետ միասին:

Մաղթում ենք, որ Տերը առատորեն բաշխի իր շնորհները ամենքիդ՝ Ձեզ, Ձեր եկեղեցու հոգևոր դասին և Բաժայն հայ ժողովրդին 1965 թվականին, որը, վստահ ենք, նորից կհանդիսանա գործակցության տարի: Թո՛ղ Տիրոջ պատվիրանները կյանքի և խաղաղության մասին առավել ամրապնդվեն երկրի վրա և թո՛ղ մարդկանց սրտերում պորանան խաղաղության, ուրախության և հույսի պզգցումները:

Ես հավաստիացնում եմ Ձերդ Սրբության իմ խորին նվիրվածության մասին և, հայցելով Ձեր աղոթքները, մնում եմ անկեղծ սիրով ի Ջրիստոս,

ԴՈՎՏ. ՄԻՐՈՍԼԱՎ ՆՈՎԱԿ

Պատրիարք Չեխոսլովական եկեղեցու

ՊՐԱԳԱ

Ուրախությամբ ունկնդրելով սուրբ հրեշտակներին, որոնք փառաբանության երգերով ավետարանում են, որ այսօր ծնավ մեզ համար Փրկիչը Դավթի քաղաքում, որ է Տերն մեր Ջրիստոս, և այդ ուրախությունը Չերդ Սրբության ևս հաղորդելով, խնդրում ենք մեր մարդացյալ Տիրոջ, որ պահպանի Ձեզ առողջ, անցավ, և աստվածասեր ու աստվածահաճո կերպով հովվեք Ձեզ վստահված Տիրոջ հոտը՝ ի փառս մեր Ջրիստոսի, մեր Ուղղափառ եկեղեցու:

Այս առթիվ մաղթելով, որ Տերը օրհնի Ձեզ և իր շնորհները բաշխի նոր տարվա առթիվ, ողջունում եմ սրտանց Ձերդ սիրեցյալ Սրբության և մնում ի Ջրիստոս եղբայր Ձեր,

ԽՐԻՍՏՈՍՏՈՄՈՍ

Արքեպիսկոպոս Աթենքի և հասայն Հունաստանի

Ա.Թ.Ե.Ն.Բ

Դարեր առաջ էր Բանն Աստուծո, որ երկրի վրա և մսուրի մեջ պիտի ծնվեր որպես Մանուկ, որը պիտի ապատեր մարդկությանը մեղքի ստրկությունից և պիտի բարձրացներ մարդու անկյալ պատկերը:

Մեր հոգու խորքից շնորհակալ լինելով մեր Տեր Աստուծուց, որ իր շնորհիվ, դարձյալ արժանանում ենք տոնելու Նրա ծնունդը երկրի վրա, մարգարեի հետ

բացականչում ենք. «Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի, պի յայց ել մեզ, և արար փրկութիւն ժողովրդեան իւրում» (Ղուկ. Ա 68), և հրեշտակների հետ ուրախութեամբ երգում ենք. «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14):

Շնորհալոր ձեզ Սիրեցյալ Սրբութեանը այս ուրախ տոնի առթիւ, աղոթում ենք մեզ համար մարդացյալ Աստուծուն, որպեսպի պահի Ձեզ առողջ և օրհնի, և հաջողութեամբ պարգևի Ձեր գործերին՝ ի բարօրութիւն Եկեղեցու, արժանացնի մարդկութեան պարգևի Ձեր գործերին Նրա սուրբ մարդեղութիւնը մարդկային ցեղի փրկութեան համար, և նոր տարում պարգևի Ձեզ երկնային օրհնութիւններ և շնորհներ:

Ձերդ Սրբութեան սիրող եղբայր ի Զրիստոս,

ԵԱԿԱՐԻՈՍ

Միտրոպոլիտ Կիպրոսի

Ն Ի Կ Ո Ջ Ի Ա

Ջերմագին շնորհակալութիւն կհայտնենք Ձեր եղբայրական ապնիվ պատգամին համար և կվստահենք Ձերդ Սրբութիւնը՝ Ձեր երջանկութեան և մեր սիրեցյալ ժողովրդի բարգաւաճման, ինչպէս նաև համաշխարհային եղբայրութեան և խաղաղութեան պահպանութեան համար մեր անկեղծ աղոթքներուն մասին:

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՋԱՆՑԱՆ

Վ Ա Տ Ի Կ Ա Ն

Արտի մեծ ուրախութեամբ ստացանք Ձեր քարեմաղթութիւնները Ա. Ծննդյան առթիւ:

Հաճեցե՛ք ընդունիլ փոխադարձ մեր սրտագին մաղթանքները, միացած մեր աղոթքին առ ամենաբարին Աստված, որպեսպի պարգևե Ձեզի երջանիկ և սուրբ տարի, ի հոգևոր և ժամանակավոր մխիթարութիւններով և բազմաթիվ հաջողութիւններով, հագուտ հոգիներու, ի պայծառութիւն Ա. Եկեղեցւոյ և ի սփոփում մեր սիրելի հայ ժողովուրդին:

Հիսուսի ծնունդը, որ Արդարութեան Արեգակին ծագումն է հաշխարհ, թող յուսավորե՛ք բոլոր միտքերը, որպեսպի մարդիկ Աստուծո զառնան անկեղծութեամբ և հավատարմութեամբ և ջանան Անոր հաճելի ըլլալ: Աշխարհի խաղաղութիւնը կապված է մարդկութեան Աստուծո ընծայած փառքի տրիստրին. «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Կթնակոխենք տարի մը, որուն ընթացքին հայ ազգը հիսնամյակը պիտի կատարե՛ տարագրութեանց և ջարդերու: Ասոնք, մեր պատմութեան ամենաշուրջ օրերն են ըլլալով հանդերձ, կհանդիսանան, մեզի և ապագա սերունդներուն, ճշմարիտ փառքի և պարծանքի օրեր, որոնց մեջ մեր անմահ ժողովուրդը, Վարդանանց հարապատ սերունդը, ցույց տվա՛մ, իր արյունով իսկ, իր սերը կրոնի և հայրենիքի:

Մեզի համար անպատում մխիթարութիւն եղան Պավղոս Զ Սրբապան Զահարայապետին հրավերը՝ ուղղված աշխարհի կաթողիկէ բոլոր եպիսկոպոսներուն՝ այդ հիշատակը կատարելու՝ և Նորին Սրբութեան մասնակցութիւնը անմահ սուրբ պատարագին, զոր, այդ առթիւ, մատուցինք Ա. Պետրոսի Մայր Տաճարին մեջ, 18 նոյեմբեր 1964:

Հաճույքով կարդացինք նաև Ձեր կոնդակը, որով, պանծացնելով հիշատակը մեր նահատակներուն, կհրավիրեք հայութիւնը ընթանալու անոնց վսեմ օրինակին համաձայն:

Մաղթելով, որ Աստված, բարեխոսութեամբ մեր նահատակներուն, հաճի լսել Ձեր և մեր աղոթքը, մնամք եղբայրական սիրո ջերմ ողջունիվ և հարգանք, Ձեր Ա. Օծութեան Աղոթակից,

ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԶ ՊԱՃԱՆՑԱՆ

Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիո

Բ Ե Յ Ր Ո Ւ Ճ

Կանդրեմ Զերդ Սրբության ընդունելու իմ սրտագին բարեկամական ողջույններն ու շնորհավորանքները նոր տարվա և Զրիստոսի Ս. Ծննդյան տոների առթիվ:
Աղոթելով հայցում ենք աստվածային շնորհներ, առողջություն և մեծ հաջողություններ Զեյ, ի բարօրություն հայոց Ռինավուրց Եկեղեցու և համայն քրիստոնեության:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐԱ

Լատվիայի Ավետարանական-Լուսեռական
Եկեղեցու Արքեպիսկոպոս

Ռ Ի Գ Ա

Զերդ Սրբություն.

Աեր Տեր Հիսուս Զրիստոսի քրիստոնեական այս խնդության օրերին, որ Նրա ծննդամբ խաղաղություն են բերում մեր երկրին, ողջունում եմ Զերդ Սրբության և սրտանց շնորհակալություն հայտնում Զեր ողջույնի և բարի ցանկությունների համար:

Առաջիկա նոր տարին թո՛ղ լինի խաղաղության բարի տարի բոլոր ժողովուրդների համար, տարի Աստուծո ողորմության նրանց համար, որոնք ապավինում են Նրա երկնային օգնության և օրհնության:

Ընդունեցե՛ք, Զերդ Սրբություն, անկեղծ ցանկությունս և աստվածային օգնությունը Զեր սուրբ աշխատանքների մեջ:

Խորին հարգանքներով, Զեյ անկեղծ,

ՅԱՆ ԿԻՅՎԻՏ

Լատվիայի Ավետարանական-Լուսեռական
Եկեղեցու Արքեպիսկոպոս

Տ Ա Լ Լ Ի Ն

Վեհափա՛ռ Տեր.

Մեծ ուրախությամբ ստացանք Զերդ Վեհափառության շնորհավորական նամակը, որ հեթդեհեմի անձառ խորհուրդին սրբազան ոգեկոչումով, կբերեր ավետավոր արձագանքը Ս. Էջմիածնի, մաղթանքներու և գեղեցիկ իղծերու հուսադրիչ օժովամբ:

Ընորհակալ ենք, Վեհափա՛ռ Տեր, այն աստվածահաճ աղոթքներուն համար, զոր մշտամրմունջ կբարձրացնեք առ Աստված, ի բարգավաճումն Մխիթարյան ուխտիս. վստահ ենք, թե աղոնց օժանդակությամբ է, որ պիտի կարենանք ի զուխ հանել մեր նվիրական առաքելությունը՝ ի պայծառություն Ս. Եկեղեցվո և Հայ ապգիս:

Ձայնակից ենք ցնծալիս, Վեհափա՛ռ Տեր, աղոթանվեր պգացումներով, համայն աշխարհի խաղաղության և հատկապես եկեղեցիներու միջև եղբայրական սիրո և սերտ միության Զեր մաղթանքներուն: Արևելքի և Արևմուտքի մեծ եկեղեցիներու միջև ստեղծված նոր ռզին թող պսակվի Զրիստոսի օրհնությամբ, և չքանան դարավոր արգելքներն ու դժվարությունները, Սիրո Արեգակի ջերմությամբ:

Ամանորի սեմին, այս պգացումներով ցանկալի է մեզի ողջունել նոր դարաշրջանի մը երջանիկ արջալույսը, մինչ խորին մեծարանքով միաբանությանս և մեր սրտագին շնորհավորանքը կուղղենք Զեյի, մաղթելով երջանիկ ու արնշատ օրեր, բեղուն և արդյունառատ գործունեություն, և կատարումը Զեր աստվածանվեր նպատակներուն, ի պայծառություն Հայ Եկեղեցվո և հուրախություն բովանդակ հայ ժողովուրդին, հայրենիքի և Սփյուռքի մեջ:

Հայցելով խոնարհաբար Զեր սուրբ աղոթքներուն օժանդակությունը համօրեն ուխտիս համար, և ողջունելով Ս. Էջմիածնի միաբանությանդ բոլոր սիրելի անդամները, լավագույն պգացումներով և ամենախորին հարգանքներով, մնամ Զերդ Վեհափառ Տերության աղոթակից,

Հ. ՀՄԱՅԱԿ ՎԱՐՉԱՊԵՏ ԿԵՏԻԿՅԱՆ

Ընդհանուր արքամայր Մխիթարյան միաբանության

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Վեհափառ Տեր.

Մեր Տիրոջ և Փրկչին ծննդյան առիթով, Ձեր Վեհափառության ջերմ սրտեն բխած մաղթանքներուն կպատասխանեմ շնորհակալությամբ և փոխադարձ սրտագին մաղթանքներով:

Երբ երկինք հրեշտակներով սիրո, հաշտության և խաղաղության ցանկալի ավետիսը կերգե համայն մարդկության, կաղոթենք նորածին Փրկչին, որ Վեհափառ Տերությունդ երկար տարիներ պահե Ձեզի հանձնված հոտին գլխեն անպակաս, և հուր բախտավոր ըլլաք տեսնելու մեր սիրելի հայ ժողովուրդին եղբայրական սիրով բարձրացումը և երջանկությունը:

Այս պահումներով կմաղթեմ, որ իրականացնեն «Զրիստոս ծնա՛ւ և յայտնեցաւ, Ձեզ և մեզ մեծ ավետիս» մեր երկկողմանի շնորհավորություններն ու մաղթանքները:

Եղբայրական հարգալից ողջունիվ, աղոթակից.

Հ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐՆԱԳԵՏ ՀԱՊՈՋՅԱՆ

Արքեպիսկոպոս և ընդհանուր ազգա-

Վ Ի Ե Ն Ն Ա

Սուրբ վարերի բոլոր Ֆրանսիսկյան վերակացուները և ես վերստին միանում ենք Ձերո Սրբության. Ս. Եկեղեցուն և Էջմիածնի ժողովրդին, մեր Տիրոջ և Վարդապետի՝ Հիսուս Զրիստոսի Ա. Ծննդյան և Աստվածամայության հրաշալի լուրին համար:

Մենք կնուսանք և կաղոթենք, որպեսզի «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» պատգամը հիշվի բոլոր ավնիվ և անկեղծ մարդկանց և կառավարությունների կողմից:

Եղբայրական քրիստոնեական սիրով՝

ՆԻՆՈՒՍ ԿՈՊԻԵԼԻ

Վերակացու Սուրբ Երկրի

Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Ե Մ

Շնորհն և խաղաղությունը մարմնացած Տիրոջ՝ Զրիստոսի, թող լինեն Ձեր Եկեղեցու հետ:

ՎԻՍԵՐ Դ՝ ՀՈՒՋՏ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի
ընդհանուր քարտուղար

Ժ Ը Ն Ե Վ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՇԵՑԽՈՒԼԻՍԼԱՄ ՀԱՋԻՄՋԱԴԵԻՆ

ՄՈՒՖՏԻ ՎԵԼԻՋԱԴԵԻՆ

Բ Ա Ջ Ո Ւ

Սրտագինս ողջունում ենք Ձեզ և Ձեր հավատացյալ հոտը առաջիկա 1965 թվականի առիթով: Ամբողջ հոգով մաղթում ենք հաջողություն Ձեր աստվածահաճո գործունեության՝ ի բարօրություն մարդկանց և համրապնդումն ժողովուրդների միջև եղբայրության ու բարեկամության: Թո՛ղ Տերը պարգևի Ձեզ երկար կյանք և քաջառողջություն:

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒԹՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Շնորհավորում ենք Ձեր նոր տարին և Զրիստոսի Ծննդյան տոնը: Մաղթում ենք քաջառողջություն և հաջողություններ խաղաղության համար մղվող պայքարում:

Շնչալիսլամ ՀԱՋԻՄՋԱԴԵ

Մուֆտի՝ ՎԱԼԻՋԱԴԵ



**ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ
ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ
ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Նորին Ա. Օծություն Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ին,
(Անթիլիաս),
Երուսաղեմի Հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. ԵՂԻՇԵ արքեպիսկոպոսին
(Երուսաղեմ),
Թուրքիո Հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. ՇՆՈՐՀՔ արքեպիսկոպոսին
(Ստամբուլ),
Բարեխնամ բոլոր թեմակալ առաջնորդներին և գերապատիվ եպիսկոպոսներին:

Մեր Տիրոջ և Փրկչի սուրբ ծննդյան ավետիսով վերստին կբացվին լուսե
դռները երկնքին, բաշխելու համար մեր հուսացյալ հոգիներուն երազի պես անոջ
երգը հրեշտակներուն՝

«Յերկիր խաղաղություն, ի մարդիկ հաճություն»:

Արարիչը մեր և պարզևատուն բարյաց, տիեզերքի ներդաշնակության օրենքն է
որ կառաքե աշխարհ, մարդկության համայն, իբրև գերազույն բարոյական պատ-
գամ, ցույց տալով մարդոց և ազգերուն բոլոր՝ ճամբան փրկության, ճամբան երջան-
կության:

Սիրո և խաղաղության պատգամը Աստուծո՝ կհնչե այսօր մանավանդ, տիրա-
պես հպոր ու հրաշքի պես պայծառ, որպեսզի այլևս ոչ մեկ Կայեն չկարողանա սպա-
նել իր եղբայրը՝ Աբել:

«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ»:

Փա՛ռք Խաղաղության Իշխանին:


Եվ **«Երանի՛ խաղաղարարաց, պի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»:**

Ա. Ծննդյան ավետիսով կշնորհավորենք և կողջունենք Ձեզ և Մայր Աթոռ
Ս. Էջմիածնեն կհղենք Մեր հայրապետական օրհնությունը համայն Մեր հավա-
տացյալ զավակներուն, բարի մաղթանքներով, որ նոր տարին ըլլա խաղաղության
տարի, արդարության տարի և եղբայրության տարի՝ եկեղեցյաց և ժողովրդոց հա-
մար:

«Քրիստոս ծնա՛ւ և յայտնեցա՛ւ»:

ՎԱՋԳԵՆ Ա

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**



ազգերու հարաբերությանը մեջ, ու մենք արժանի ըլլանք արժակ հոգիով եղանակել հրեշտակային մեղեդին.

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Եվ ավելի երջանիկ սրտով օրհներգենք.

«Երկար կեանք տուր Հայրապետին,

Երկար օրեր՝ Հայոց Հոր:

Տե՛ր, անսասան պահիր դու միշտ

Քո իսկ հիմնած Մայր Աթոռ»:

Կմատչինք, հանուն ամբողջ մեր համայնքին, Օծելովդ Ս. Աջին ի համբույր:

Խոնարհ աղոթակից՝

ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարք Հայոց Թուրքիո

ՍՏԱՄԲՈՒԼ

Ամանորի և Ս. Ծննդան տոների առթիվ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով, ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից պզգծունքներով զբված բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի թեմակալ առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տեղական, օրիորդաց և երիտասարդաց պալատական կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:





**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԶԱՐՈՋ
ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ
ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

Հունվարի 6-ին, շորերը թափելով, ավանդական շուքով և հանդիսությամբ, Մայր Տաճարում տոնվեց Քրիստոսի Ս. Մենդյան տոնը:

Առավոտյան ժամերգությունը պաշտպեց Մայր Տաճարում, Մայր Աթոռի ամբողջ միաբանության և ճեմարանի ուսանողության մասնակցությամբ:

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Վեհարանից առաջնորդվում է Մայր Տաճար, թափոքով և ամպմովանու տակ, մատուցելու Ս. Մենդյան հանդիսավոր պատարագը:

Մայր Տաճարը լիքն է աղոթավոր հավատացյալների և ուխտավորների բազմությամբ: Աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել պաշտոնական անձինքը: Օրվա մեծ խորհրդի ներշնչման տակ, Մայր Տաճարի զանգերը հնչում են ավետավոր և վեհ, մինչ հինավուրց Տաճարի խնկարույր կամարների տակ, աղոթքի մրմունջների, զվարթ լույսերի հեղեղի մեջ, թնդում է Մենդյան հոգեպարար մեղեդին:

«Քրիստոս ծնա՛ւ և յայտնեցա՛ւ»:

Սկսվում է Հայրապետական սուրբ պատարագը: Սեղանին սպասարկում են գերաշնորհ Տ. Ասողկ և Տ. Վարդան եպիսկոպոսները, հոգեշնորհ Տ. Մուշեղ, Տ. Մեսրոպ, Տ. Արսեն վարդապետները և սարկավագների խումբը:

Մայր Տաճարի երգեցիկ խումբը շնորհալիորեն կատարում է սուրբ պատարագի կոմիտայան երգեցողությունը:

«Հայր մեր»-ից առաջ, Վեհափառ Հայրապետը, Քրիստոսի Ս. Մենդյան մեծ խորհրդի ավետիսը տալով Հայ եկեղեցուն և բովանդակ հայության, խոսում է բովանդակալից և

ոգեշունչ հետևյալ քարոզը. օրվա տոնի համամարդկային հոգևոր, բարոյական մեծ նշանակության մասին, համեմատելով կրոնաբույր և հայրենաշունչ խոհերով, ինչպես նաև ապրիլյան մեծ եղեռնի 50-ամյակի խորհրդով օժոռն:

«Մեր Ս. Ավետարանը կպատմե մեզի, թե երկու հավար տարիներ առաջ, երանելի գիշեր մը, պայծառ լույս իջավ Երկնքի Ռեռուններն ու Ռեռտակներ երգեցին:

«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ Ռաճութիւն»:

Այս անուշ երգով, այս փրկարար պատգամով, արարիչն Աստված Իր Միածին Որդին ընծա ուղարկեց մարդկության, որպես պատասխան՝ խաղաղության և արդարության ծարավի Ռոգիներու մեծ սպասումին:

Նյութին և բիրտ ուժին պայմանեն ձերբապատվելու որոնումներն ու մաքառումներն, ծնունդ առին տակավ առկայծումները մարդկային ավնիվ զգացումներու և խիպախ մտածումներու, որոնք դարերու Ռոլովութով բյուրեղ դառնալով, եղան տեսիլք ու աղոթք և ջիկացած աղերս առ մարդասերն Աստված, ի կատարումն օրինաց և մարգարեից, ի լրումն բարոյական իդեալներու:

Պատմության մեջ, բյուրեղացումի և պայծառացումի մեծ Ռանգովան մը Ռանդիսացավ անտարակույս. ծնունդը Հիսուսի, որ եղավ մարմնացումը Աստուծո խոսքին և մարդոց երավին, մարդկային կյանքի Նյութին պայմանը լուսավորելով, սիրո և խաղաղության բարոյական օրենքով:

«Մարդը Որդի» Հիսուսի մեջ, մարդիկ ճանաչեցան զՈրդին Աստուծո, որովհետև Ան ծնավ «խաղաղության և ի մարդիկ հաճության» ավետիսով:

Եվ այսօր ամա, նոր տարվան այս լուսաբացին, մեր Ս. Եկեղեցին վերստին կբերե մեզի ամենուս մեծ ավետիսը, թե ծնավ Մանուկն Հիսուս, Աստուծո Որդին, որպես Փրկիչ ազգի մարդկան, որպես Արեգակ Արդարության, որպես Իշխան Խաղաղության: «Զի այնպես սիրեաց Աստուծա զաշխարհ, մինչև զՈրդին Իւր Միածին ետ, զի ամենայն որ հաւատայ ի Նամի՛ կորիցէ, այլ ընկալի զկեանսն յաւիտեանկանս: Զի ոչ առաքեաց Աստուծա զՈրդի Իւր աշխարհ՝ զի դատեցի զաշխարհ, այլ զի փրկեացի աշխարհ Նովա» (Յովհ. Գ. 16—17):

Արդարակորով և լուսի ծարավ մեր ժողովուրդը, հայոց հինավուրց ազգը, հավատաց երկնառաջ Փրկչին, հավատաց Ս. Ծննդյան պատգամին: Հավատաց, թե Հիսուսով՝ արդարությունը և խաղաղությունը պիտի թագավորեն աշխարհի վրա, և թե մարդիկ պիտի ապրին իբրև եղբայրներ, իբրև հավասար ու ազատ որդիները միևնույն երկնային Հոր:

Մեր պապերը բարի՛ ա՛յս տեսիլքով ապրեցան և կյանքի ալեկոծ ծովերեն անցան, հեռացան, Հայոց Մայր Հողին վրա վաստակը թողած իրենց հավատավոր հոգիին, իրենց շինարար հանձարին, իրենց արի գործերուն: Եվ այս տեսիլքով ալ անոնք հաճախ, շատ հաճախ, իրենց աչքերը փակեցին, տառապանքի ու մարտիրոսության ճամբաներու վրա:

Նույն այս տեսիլքով նախատակվեցավ մեր ժողովուրդը, հիսուն տարիներ առաջ, աշխարհի մը մեջ, ուր Հիսուս կարծեք երբեք ծնած չըլլար:

Մեր Եկեղեցին այս ամբողջ տարին պիտի նվիրե անոնց սուրբ հիշատակին: Այսօր ալ, թեև արյունած սրտով ու ծանրորեն վշտառար, մեր վերածնած ժողովուրդի բոլոր զավակները անխտիր, կման անշարժ նախնայաց հավատքի վեմին վրա սուրբ, իրենց լուս տեսիլքներու իրականացման հույսով գոտեպինդ, ու արդար սրտով, կընդունին երգը հրեշտակներուն.

«Փա՛ռք ի քարծուսն Աստուծոյ, լերկիր խաղաղութի՛նն, ի մարդիկ հաճութի՛նն»:

Արդարություն և խաղաղություն համայն աշխարհին, բոլոր ազգերուն:

Արդարություն և խաղաղություն հայ ժողովուրդին:

Անցյալի մեջ թեև մեր ժողովուրդի կյանքի բաժինը եղավ գուցե ամենատառապալիցը և պարուրելին, և ա՛յդ իսկ պատճառով, մենք բոլոր հայերս, զԶրիստոս ամուր պահած մեր սրտերուն մեջ, պիտի աղոթենք ու պիտի գործենք՝ այն աննախնայ հավատքով, թե պիտի հաղթեն, պիտի փառավորվին վերջապես արդա-

րությունն ու խաղաղությունը մեր տառապած երկրագնդի վրա, որպեսզի այլևս աշխարհի մեջ ոչ մեկ տեղ չկրկնվին ապրիլ 24-ներ ու ցեղասպան ռժիրներ:

Այս հավատքով ու այս տեսիլքով, ամբողջ տարի մը, ծունկի եկած Միածնաէջ մեր Ս. Սեդանի առաջ, Մենք պիտի աղոթենք մեր ժողովուրդի մոտ երկու միլիոն անմեղ զոհերու հոգիներուն համար և անոնց հիշատակը պիտի հավերժացնենք Հայոց քրիստոսատես այս Մայր Հողին վրա, մեր Մայր Տաճարի կողքին կանգնեցնելով արձան մը անմոռաց հուշի և սրբազան ուխտի: Նույն սեղանի առաջ Մենք պիտի աղոթենք նաև մեր վերածնած ժողովուրդի կյանքի խաղաղության և բարօրության համար, որ ամա ավելի քան չորս տասնամյակներէ ի վեր կապրի, կուռճանա, կհզորանա, հուժկու բազմակներով ու հանձարի լույսով կվերաշինե և ծաղիկ կդարձնե Մայր Երկիրը մեր, Հայաստանը ամենայն հայոց:

Մեր հայրենի ներկա իրականությունը, Հայաստանի վերածնունդն ու մեր ժողովուրդի ազգային պարթոնքը հարապատ պետության հովանիին ներքև, գերագույն հաղթանակն է մեր դարաշրջանի հայոց պատմության և միակ գրավականը մեր ազգի գոյատևման, և հետևաբար գերագույն կենդանի հուշարձանը՝ նվիրված ազգի ու հայրենիքի համար փռված մեր քյուրավոր նահատակներուն: Արդի Հայաստանով, ապրող ու աճող մեր այս հայրենիքով պայմանավորված է և ապահովված գոյությունը հավիտենական Մայր Հայաստանին:

Ուրեմն արդար է և խղճի սեպուհ պարտականություն բոլորիս համար, որ հայոց մեծ եղեռնի հիսնամյա տարելիցը առիթ հանդիսանա առավել ամրապնդումի մեր ժողովուրդի հոգևոր, ազգային և հայրենասիրական միասնության:

Արդար է, այո՛, և սպասելի, որ այս տարի, գոնե այս տարի, ի սպառ լռեն ամեն տեսակի ներքին տարակարծություններ ու հակամարտություններ, արտասահմանի հայության ծոցին մեջ, և մեր ժողովուրդի բոլոր զավակները անխտիր միանան, միակամ դառնան, համազգային տիրական զգացումի մը մեջ, մեր նահատակներու սուրբ հիշատակով եղբայրացած ավելի քան երբեք:

Հայե՛ր, հավատացյալ զավակնե՛ր Մեր, որ ի սփյուռս աշխարհի, միացե՛ք, համախմբվեցե՛ք ձեր սուրբ տաճարներու կամարներուն տակ, միասին սզացե՛ք, միասին աղոթեցե՛ք, միասին ուխտեցե՛ք: Եվ նույն միասնական ոգիով, կամքով, ձեր հայացքը ուղղեցե՛ք դեպի մոխիրներեն հարություն առած երկիրը մեր հայրենի, որպեսզի մասամբ գոնե մխիթարվին ձեր սրտերը սզավոր, և որպեսզի ձեր ուխտը դառնա կենարար և ձեր աշխատանքը դառնա ճշմարտապես ազգաշեն, նպատակի մը հասնող:

Մահվամբ մահը հաղթած ըլլալու մեր ազգային մեծ ուրախությունը. համայն հայության խաղիսիս զգացումն է այսօր, որուն աղբյուրը կհանդիսանա մեր հայկական պետության ներկա իրականությունը և հայրենաբնակ երկու միլիոն և ավելի հայության ձեռք բերած նվաճումները վերջին ավելի քան քառասուն տարիներու ընթացքին:

Սիրեցյալ պանդուխտ զավակներ՝ Մեր, միացե՛ք և համախմբվեցե՛ք նաև ազգապահպանման նվիրական ու փրկարար գաղափարին և գործին շուրջ, օրավոր առավել հաստատ Ռիմերու վրա կազմակերպելով և պորացնելով ձեր եկեղեցական համայնքները, ձեր կրոնական, մշակութային կազմակերպություններն ու կրթական հաստատությունները:

Այսպես է, որ պիտի ամրապնդվի ու պիտի ծաղկի հայ ժողովուրդի կյանքը հեռավոր ափերու վրա և այսպես է, որ առավել ապահով ու լուսավոր պիտի դառնա հայոց ապագան:

Հայ ժողովուրդի համար այժմ ժամանակ է մեկտեղվելու, ներքնապես ամրանալու, միասնաբար մտածելու և գործելու, անբաժան կերպով հառաջ ընթանալու:

Ժամանակ է մանավանդ միացյալ ծիզերով պորացնելու և շենցնելու նոր կյանքի կոչված երիտասարդ Հայաստանը մեր, օգտագործելով, կենսագործելով ամեն հնարավորը և հնարավորին առավելագույնը:

Այսօր, գիտե՛նք հասկնալ ժամանակը, որպեսզի օր մը, ապագային, ժամանակն ալ մեկ հասկնա: Զի ամեն ժամանակ իր ավետիսը ունի, իմաստուն ժողովուրդներուն համար:

Ահա այսպես, մեկ սիրտ, մեկ հոգի, մեր պատմության մեծագույն վիշտը մեր սրտին մեջ առած, մեր սեփական ոտքերու վրա ամուր կանգնած, դիմավորենք 1965-ը, բարձր ճակատով, բոցավառ հավատքով դեպի հայոց ապագան:

Կակսի մեր սուգի տարին, մեր աղոթքի տարին, մեր ուխտի տարին:

Եվ հուսով ենք, թե աշխարհի բոլոր մեր քույր եկեղեցիները, և բոլոր ժողովուրդները, ուր որ մարդկային ավնիվ սիրտ մը կբաբախե, Հայ եկեղեցիի կողքին, հայ ժողովուրդի կողքին պիտի գտնվին, և հառաջիկա ապրիլ 24-ին մեզի հետ պիտի աղոթեն հայ ազգի բյուրավոր մարտիրոսներու հոգիներուն խաղաղության համար:

Թող բարին Աստված քաղցրությամբ ընդունի մեր աղոթքը և հավերժական լույսերու մեջ պայծառացնե հոգիները հայ նահատակներուն: Եւ հավետ սուրբ պահե անոնց հիշատակը երկրի վրա:

Թող արդարադատն Աստված ողորմությամբ ընդունի նաև մեր ուխտը, և օգնական ու մարտակից ըլլա մեր ազգին, ի լուծման անոր սուրբ իղծերուն և տեսիլքներուն:

Եվ թող Աստված հարցն մերոց հավետ անասան և փառավոր պահե վերածնած Մայր Հայրենիքը մեր՝ բարօրության և խաղաղության մեջ, և մեր ազգի զավակներուն առատապես բաշխե իր ստեղծարար շնորհները և սիրո ու միության ոգին:

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ մեր որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, մեր ազգային սուգի և աղոթքի այս օրերուն, անշարժ կանգնած մեր հերոսական ազգի սրբազան ուխտի ժալօն վրա, մեր հայացքը սևեռած դեպի հեռու և ազատ հորիվոյնները արևոտ, հաղթական ծայնով երգենք հրեշտակներուն հետ՝

«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութի՛ն և ի մարդիկ հաճութի՛ն»:

Ամենայն հայոց լույս հավատքի վեմ Ս. Էջմիածնեն, ողջո՛ւն հայրական և օրհնությանն աստվածային համայն հավատացյալ հայ ժողովուրդին, այժմ և հավիտյանս: Ամեն»:

«Ջրիստոս ծնա՛ւ և յայտնեցա՛ւ»:

Հավատ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսագրությամբ, կատարվում է Ջրօրհնյաց սրբազան կարգը, Ավագ Անդանի բեմի առաջ, ի հիշատակ հրիստոսի մկրտության, Հորդանան գետում:

Ջրօրհնքի սրտառուշ արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարանի դահասրահը, ուր ընդունում է Ս. Սննդյան տոնի առթիվ, շնորհավորությունները Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի, Հոգևոր Ժեմարանի դասախոսների, վանքի ծառայողների և այլ պաշտոնական անձնավորությունների: Վերջում խոսք անելով, Վեհափառ Հայրապետը իր շնորհակալությունն ու գոհունակությունն է հայտնում եղած ջերմ շնորհավորանքների ու բարեմաղթությունների համար, ապա օրհնում բոլորին, մաղթելով աշխարհին խաղաղություն և ազգերին՝ համերաշխություն ու համագործակցություն:

Ժամը 4-ին, Վեհարանում, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները և այլ պաշտոնական անձինք սեղանակից են լինում Վեհափառ Հայրապետին:

Նորին Ս. Օծության ռեզիդենսի վերջանում է ընդունելությունը:





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՀԻՄՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ
ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻՆ ՈՒՂՂԱԾ
24 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1964 ԹՎԱԿԻՐ ՆԱՄԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ**

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա,
ԵԱՅՐԱԳՈՒԹՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ԷԶՄԻԱԵՒՆ

Ձերդ Սրբություն.

Երախտագիտությամբ ստացանք այն նամակը, որով Դուք հայտնում եք Մեզ Հայ Առաքելական Եկեղեցու և աշխարհի բոլոր հայերի մտադրությունը՝ Ռիչա տակելու Ձեր ժողովրդի վեճ պահանջումը և աղոթելու նրանց հոգիների խաղաղության համար:

Հաճույքով հայտնում ենք Ձեզ, որ Մենք հրահանգել ենք, որ սուրբ պատարագին, որով սկսվում է Վատիկանի տիեզերական երկրորդ ժողովի նիստը, սույն նոյեմբեր ամսի տասնութի օրը, լինի եկեղեցական հանդիսավոր սուրբ պաշտամունք: Մենք հրավիրել ենք ամբողջ աշխարհի կաթոլիկ եպիսկոպոսական դասը, որ գրեթե լրիվ ներկա է ընդհանուր ժողովին, միանալու սույն քավիչ պատարագին, որը մատուցվում է հայ ժողովրդի բարի հիշատակին:

Մենք ևս անձամբ միանում ենք աշխարհի եպիսկոպոսներին, հայցելու Աստուծո խաղաղությունն ու հավիտենական հանգիստը մեկնած հոգիների համար, և Նրա ամենաառատ ջնորհներն ու բարիքները Ձեր և Հայ Առաքելական Եկեղեցու վրա:

Մենք ցանկանում ենք նաև հայտնել Ձերդ Սրբության Մեր երախտագիտությունը Ձեր ջերմ ողջույնների և լավագույն մաղթանքների համար, վստահացնելով Ձեզ, որ Մենք Ռիչելու ենք Ձեզ և Ձեր ժողովրդին հաճախ Մեր աղոթքների մեջ:

ՊԱՊ ՊԱՎՂՈՍ Զ

ՎԱՏԻԿԱՆ, 7 նոյեմբերի 1964 թ.

Չերդ Սրբություն.

Ես ստացա Չեր ծանուցագիր-նամակը առ այն, որ առաջիկա տարում Հայ Եկեղեցին և Չեր ամբողջ ժողովուրդը նշելու են առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում զոհված երկու միլիոն հայերի հիշատակի հիսնամյակը:

Մենք ամբողջովին բաժանում ենք մեր եղբայրակից Եկեղեցու վիշտը և ողջունում Չերդ Սրբության ավելի նախաձեռնությունը՝ Չեր Եկեղեցու և ժողովրդի ողբերգության 50-ամյակին նվիրված հատուկ կոնդակի հրապարակումը, ինչպես նաև 1965 թվականը սուգի և աղոթքի տարի հռչակելը:

Թույլ տվեք հավաստիացնել Չերդ Սրբության, որ Ռուս Ուղղափառ Եկեղեցին, Հայ Եկեղեցու մեծագույն վշտի օրը՝ ապրիլի 24-ին, իր ջերմագին աղոթքները կմիացնի Չեր Եկեղեցու աղոթքներին՝ նահատակ հայ եղբայրների հոգու հանգրստյան համար:

Աղոթելով ու բարեմաղթելով Չերդ Սրբության աստվածային մեծ շնորհներ, մնամ եղբայրական սիրով ի Զրիստոս,

ԱԼԵՔՍԻ

ՄՈՍԿՎԱ, 23 դեկտեմբերի 1964 թ.

Պատրիարք Մոսկվայի և Համայն Ռուսաստանի

Չերդ Սրբություն.

«Շնորհք և խաղաղություն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ Յիսուսէ Զրիստոսէ»:

Ստացանք Չեր սեպտեմբեր 24 թվակիր նամակը, որի մեջ խոսում էիք առաջիկա տարի հայերի մարտիրոսագրության 50-ամյակը նշելու մասին: Այս առթիվ վստահացնում ենք Չերդ Սրբությանը մեր աղոթքների վերաբերյալ:

Աշխարհի ամեն կողմ գտնվող անգլիկանները մեծ սեր ունեն Հայաստանյայց Ա. Եկեղեցու հանդեպ և հիանում են Ա. Գրիգոր Լուսավորչի ժամանակից մինչև ներկա օրվա նրա երկար պատմության և հավատարիմ վկայության վրա: Մենք գոհություն ենք հայտնում նաև Աստուծո՝ սրբերի և մարտիրոսների այն մեծ թվի և Չեր ազգի անհաշիվ այն մարդկանց, կանանց և երեխաների համար, որոնք իրենց կյանքում ցույց տվեցին Զրիստոսի սերը և մահացան Նրա սիրո համար:

Զրիստոսյանները ամենուրեք մեծ վշտով կհիշեն հինգ տարիների այն ցավազին տառապանքը, որը քրիստոնյա հայերը համբերությամբ կրեցին կես դար առաջ: Ես ինքս կդիմեմ մեր հոգևորականությանն ու ժողովրդին, աղոթքով միանալու ինձ, հիշելու համար Չեր Եկեղեցին և Չեր համայն ժողովուրդը, երբ առաջիկա տարվա ապրիլին դուք կկատարեք նրանց հիշատակը:

«Երանի՜ սգալուրաց, զի նոքա մխիթարեսցին»:

«Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձեցն սուտ վասն իմ: Ցնծացեք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս»:

Թո՛ղ մեր երկնավոր Հայրը Հայոց աշխարհին, Չերդ Սրբության, Չեր եպիսկոպոսներին, քահանաներին և հավատացյալ ժողովրդին, հայկական գաղութին այստեղ Անգլիայում և աշխարհում ամենուրեք, պարզևի իր շնորհի պորությունը, որպեսզի Ղուք բոլորդ փարողանաք անսասան կերպով աշուսհետև ևս ամեն կերպ դիմագրավել ձախորդությունները մեր Տիրոջ՝ Հիսուս Զրիստոսի հավատով:

Չեզ սիրով եբայր ի Զրիստոս,

ՄԱՅՔԸՆ ՌԵՄՔԻ

Արքեպիսկոպոս Զեստրբերիի,

Միտրոպոլիտ և Առաջնորդ համայն Անգլիայի

ԼԱՄԲԵԹԻ ՊԱԼԱՏ. Ամենայն սրբոց օր, 1 նոյեմբերի 1964 թ.





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԴԴԻՍ-ԱՔԵԲԱ
ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ողորմությամբն Աստուծո, Նորին Ս. Օծութիւն Ս. Տ. Վապգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր ջրախմբով Աղդիս-Աքեբա ժամանեց հունվարի 15-ին, ուրբաթ առավոտյան:

Օղանավակայանում Հայոց Հայրապետին անձամբ դիմավորեցին Եթովպիայի Օգոստափառ Կայսր Նորին Վեհափառություն Հալլե Սելասիե Ա-ը, Նորին Բարձր Վսեմություն զաճաճառանգ Իշխաս Մերիդ Ալմազ Ասֆա Վոսսենը, կառավարական կապմը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Նորին Ս. Օծութիւն Ս. Տ. Խորեն Ա-ը, Եթովպիայի Եկեղեցու պատրիարքական վոխանորդ Տ. Թեոփիլոս արքեպիսկոպոսը, ինչպես նաև քույր եկեղեցիների ներկայացուցիչները:

Վեհափառ Հայրապետին դիմավորեցին նաև Եգիպտոսի հայոց առաջնորդ Ս. Մամբրե արքեպիսկոպոսը, Եթովպիայի հայոց հոգևոր հովիվ Ս. Կորյուն վարդապետը, Եթովպիայի հայոց զաղութային ժողովի անդամները և հայ համայնքը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հանդիսավոր թափորով մուտք գործեց մայրաքաղաքի եթովպական Ս. Երրորդություն Մայր Տաճարը և մաղթանքի աղոթքից հետո առաջնորդվեց Հուլ Մաքունեն պալատը, ուր իջևանել էին մեկ օր առաջ արևելյան քույր եկեղեցիների հոգևոր պետերը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, հունվարի 16-ին, շաբաթ առավոտյան ժամը 9-ին, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Ս. Երրորդություն Մայր Տաճարում, Նորին Վեհափառություն Կայսեր և հոգևոր պետերի ներկայությամբ:

Վեհափառ Հայրապետը, հունվարի 17-ին, կիրակի օր, առավոտյան ժամը 10-ին, պատարագեց և քարոզեց տեղի հայոց Ս. Գևորգ եկեղեցում, խոսեց հավատացյալ հայ ժողովրդի ներկայության:

Հայրապետական սուրբ պատարագին ներկա էր նաև Նորին Ս. Օծութիւն Ս. Տ. Խորեն Ա Կաթողիկոսը իր ջրախմբով:

Հունվարի 15-ին, ուրբաթ օր, առավոտյան ժամը 11-ին, աֆրիկյան պալատի մեծ սրահում, Եթովպիայի քրիստոնյաներ Կայսր Նորին Վեհափառություն Հալլե Սելասիե Ա-ի ներկայության և Նրա արքայական ուղերձով, հանդիսավորապես քացվեց արևելյան ուղղափառ հին եկեղեցիների ժողովը:

Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, ողջույնի խոսքով հանդես եկավ Նորին Ս. Օծութիւն Ս. Տ. Վապգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 19-ին, երկուշաբթի օր, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետի որավերով, Ադրիս-Աբեբա ժամանեց Երուսաղեմի հայոց ամենապատիվ S. Եղիշե սրբազան պատրիարքը, մաս կապեցու համար Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատվիրակության:

Հունվարի 20-ին, չորեքշաբթի օր, առավոտյան ժամը 11-ին, Ա. Միքայել հրեշտակապետի Եթովպիայի ազգային մեծ տոնին, բացօթյա հանդիսության ժամանակ, Նորին Վեհափառություն Հայրապետը օրհնության խոսքով, բոլոր հոգևոր պետերի, կառավարական կազմի, դիվանագիտական մարմնի և ավելի քան 100 000 հավատացյալների ներկայության:

Նույն օրը, ժամը 12-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, S. S. Խորեն Ա Կաթողիկոսի, Երուսաղեմի հայոց ամենապատիվ S. Եղիշե սրբազան պատրիարքի և շքախմբի բոլոր անդամների ընկերակցությամբ, պաշտոնապես այցելեց պալատ՝ Նորին Օգոստոսական Մեծություն Հայրապետին Ա. Կայսեր, և հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, պարգևատրեց Նրան Ա. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանով:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Ադրիս-Աբեբա ժամանել էր մասնակցելու արևելյան ուղղափառ եկեղեցիների ժողովին, սակայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մասնակցությունը հանդիպելով որոշ դժվարությունների, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Մեծի Տանն Կիլիկիոյ շնորհապարդ Կաթողիկոսը որոշեցին պաշտոնապես չմասնակցել այդ ժողովին:

Նույն օրը, երեկոյան ժամը 8-ին, արքայական պալատում, Եթովպիայի Նորին Վեհափառություն Կայսրը Սաբա թագուհու մեծ խաչի եթովպական առաջին կարգի շքանշանով պարգևատրեց Նորին Ա. Օծություն S. S. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և մյուս հոգևոր պետերին:

Հունվարի 24-ին, կիրակի օր, առավոտյան ժամը 9-ին, եթովպական Ա. Երրորդություն Մայր Տաճարում, հայկական սուրբ պատարագ մատուցվեց և հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն կատարվեց, ի հիշատակ և ի խաղաղություն ապրիլյան եղեռնի հայ նահատակների հոգիների:

Պատարագեց Նորին Արքություն S. S. Խորեն Ա Կաթողիկոսը և քարույք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Սուրբ պատարագին և հոգեհանգստյան արարողության ներկա եղան Նորին Վեհափառություն Օգոստոսական Կայսրը, Նորին Բարձր Վսեմություն զահաժառանգ իշխանը, պալատականներ, կառավարական կազմը, քույր եկեղեցիների հոգևոր պետերը և եթովպացի ու հայ խումներում հավատացյալ ժողովուրդը:

Հավարտ սուրբ պատարագի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, S. S. Խորեն Ա Կաթողիկոսը, ամենապատիվ S. Եղիշե սրբազան պատրիարքը, եկեղեցական դասը և համայն հայ հավատացյալ ժողովուրդը, հանդիսավոր թափոռով, ուղղվեցին դեպի Եթովպիայի անձանոթ փնվորի Ռուշարձանը և զետեղեցին շքեղ մի ծաղկեսպակ՝ հանուն Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի:

Հունվարի 25-ին, երկուշաբթի օր, երեկոյան ժամը 5.30-ին, Մաքունեն պալատում, Նորին Վեհափառություն Օգոստոսական Կայսրը այցի եկավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և այս առթիվ հանձնեց թանկագին նվերներ:

Հունվարի 27-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Նորին Ա. Օծություն S. S. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը Իր շքախմբով մեկնեց Ադրիս-Աբեբայից: Օղանավակայանում Վեհափառ Հայրապետին ողջերթ մաղթեցին Օգոստոսական Կայսրը և զահաժառանգ իշխանը, կառավարական կազմը, եթովպական եկեղեցու ներկայացուցիչներ և Ադրիս-Աբեբայի հայ ժողովուրդը:

Վեհափառ Հայրապետը մեկնեց դեպի Մայր Աթոռ Ա. Էջմիածին՝ Կահիրե, Փարիզի և Լոնդոնի վրայով:

ԳԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԶՈՌԻ

22V տունվարի 1965 թ.

Ա. ԷԶՄԻԱԾԻՆ





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

1964 թվականի դեկտեմբերի 12-ին, շաբաթ, ռՍԵՆ Սրբոյն Յակովբայ Մծրնայ հայրապետին:

Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը:



Դեկտեմբերի 12-ին, շաբաթ, Մայր Աթոռ ժամանեց Մոսկվայում Եթովպիայի դեսպան պր. Միքայել էմբուն:

Երեանի ողանավակայանում, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, հարգարժան հյուրին դիմավորեցին գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղաղարյանը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալլանը և դիվանապետ պր. Զ. Առաքելյանը:

Սեծահարգ դեսպանը, հետմիջօրեի ժամը 2-ին, պաշտոնապես այցելեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և ջերմ զրույց ունեցավ նրա հետ՝ 1965 թվականի հունվարին Ադդիս-Աբեբայում կայանալիք միջկենդեցական ժողովին Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ Հայ Եկեղեցու պատվիրակության մասնակցության մասին:

Հարգելի դեսպանը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին հանձնեց Եթովպիայի Կայսր Նորին Վեհափառություն Հայր Սեյա-սիհ Ա-ի պաշտոնական գիրը, ինչպես նաև Եթովպական Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Արուստ Կասիլիոս Բ-ի նամակը՝ վերոհիշյալ ժողովին վերաբերյալ:

Առաջին տեսակցությունից հետո, ժամը 3-ին, հարգելի դեսպանը սեղանակից եղավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:



Դեկտեմբերի 13-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետկյանը:

Սուրբ պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը և Եթովպիայի հարգարժան դեսպան պր. Միքայել էմբուն:

Ժամը 3-ին, Վեհարանում, հարգելի հյուրի պատվին տրվեց ճաշկերույթ, որին մասնակցում էին գերաշնորհ Տ. Սահակ, Տ. Վարդան, Տ. Ասողիկ, Տ. Վահան, Տ. Տիրայր սրբազանները, հոգեշնորհ Տ. Մուշեղ, Տ. Մեսրոպ, Տ. Արսեն և Տ. Նարեկ վարդապետները, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պր. Գ. Բեքմեղյանը, դիվանապետ պր. Զ. Առաքելյանը և ղեկավարին ամսագրի խմբագիր պր. Ա. Հատիտյանը:

Ճաշկերույթին ներկա էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը և տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը:

Ճաշկերույթն անցավ ջերմ, բարեկամական մթնոլորտում:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, պր. դեսպանը և պր. Դալլաքյանը ողջույնի բարեմաղթություններ կատարեցին:

Ժամը 5.30-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը երկրորդ տեսակցություն ունեցավ պր. դեսպանի հետ:

Դեկտեմբերի 14-ին, երկուշաբթի, հարգելի դեսպանը հրաժեշտ առավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից և մեկնեց Մոսկվա:

Հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, հարգելի դեսպանին ճանապարհեցին գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետը և պր. Զ. Առաքելյանը:

Պր. դեսպանը, Մայր Աթոռում գտնված օրերին, այցելեց Մայր Տաճար, Եկեղեցական արվեստի թանգարան, Հոգևոր Ճեմարան, Մայր Աթոռի տպարան, ինչպես նաև ծանոթացավ մայրաքաղաքի տեսարժան վայրերին և եղավ Երեանի Մեսրոպ Մաշտոցի անվան պետական Մատենադարանում:



Դեկտեմբերի 27-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 31-ին, հինգշաբթի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Մոսկվայում Եթովպիայի դեսպանատան քարտուղար պր. Գորեզի Թաթֆեհեդը և տեսակցություն ունեցավ Վեհափառ Հայրապետի հետ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատվիրակության 1965 թվականի հունվարի 16—22-ին Ադդիս-Աբեբայում կայանալիք Արևելքի և Արևմուտքի ուղղափառ եկեղեցիների միջկենդեցական ժողովի մասնակցության հարցի շուրջ։

1965 թվականի հունվարի 1-ին, ուրբաթ, Մայր Տաճարում տարեմստի պատարագը մատուցեց և քարոզեց Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Ասողիկ հայկական Ղազարյանը՝ «Փող հարէ ի գլուխս ամսոց» յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց քննարանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։
Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց հայրապետական մատուցումը։

Հունվարի 3-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոսը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հունվարի 5-ին, երեքշաբթի, «Ճրագալույց Ննդեան և Աստուածայայտնութեան Տեսնոն մերոյ Յիսուսի Քրիստոսին»։

Մայր Տաճարում պատարագեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Ասողիկ հայկական Ղազարյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հունվարի 7-ին, հինգշաբթի «Յիշատակ մեռելոց»։

Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Էլշուրյանը։

Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց հոգեհանգիստ ավասն համօրէն ննջեցելոց։

Հունվարի 10-ին, կիրակի, Մայր Տաճարում, պատարագեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Ասողիկ հայկական Ղազարյանը։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի քարոհած կարգադրությամբ, պատարագի սրբազանը կուսակրոն քահանա ձեռնադրեց Հոգեւոր Ծնմարանի շրջանավարտներ Ժիրայր սարկավագ Գալփաքյանին և Հակոբ սարկավագ Պարոնյանին, վերանվանելով առաջինին Ոսկան արքեպիսկոպոսի և երկրորդին՝ Զարեհ արքեպիսկոպոսի։

Խորատավիլական պաշտոնը կատարեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։

Քահանայական կոչման արարողությունը տեղի էր ունեցել նախորդ օրը, հունվարի 9-ին, կիրակյան տարեմստի ժամերգությունից հետո, հանդիսագրությամբ գերաշնորհ Տ. Ասողիկ հայկական պատարագի։

Ձեռնադրությունից հետո, շնորհաբաշխ լուսարարապետ սրբազանը հորդորական խոսք ուղղեց նորապսակ արքեպիսկոպոսին, կոչանելով, որ նրանք լիակատար նվիրմամբ ծառայեն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն։

Ձեռնադրության արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը։


Երեկոյան, Մայր Տաճարում, տեղի ունեցավ նորընծա արքեպիսկոպոսի վեղարի օրհնության արարողությունը։

Հունվարի 11-ին, երկուշաբթի, Մոսկվա մեկնեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ուղևորվելու համար Ադդիս-Աբեբա, գլխավորելով Հայ Եկեղեցու պատվիրակությանը, Եթովպիայի Կայսր Նորին Վեհափառություն Հայր Սելասիեի նախաձեռնությամբ հունվարի 16—22-ին կայանալիք Արևելքի և Արևմուտքի ուղղափառ եկեղեցիների միջկենդեցական ժողովում։

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս հայկական Տեր-Սահապյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր և Հոգևոր Ծնմարանի դասախոս Ա. Հատիսյանը և գավազանակիր հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը։

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Մայր Աթոռի միաբաններ, Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամներ, վանքի պաշտոնյաներ, Արարատյան թեմի հոգևորական դասը և թեմական խորհուրդը՝ փոխանորդ գերաշնորհ Տ. Վահան հայկական Տերյանի գլխավորությամբ։

Վեհափառ Հայրապետին ճանապարհեց նաև Հայկական ՍՍԻՒ Միեկստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը։



ԱՄԱՆՈՐԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Գեկտեմբերի 31-ին, հինգշաբթի, երեկոյան ժամը 8-ին, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, մայրավանքի պատասխանատու պաշտոնեությունը, Ճեմարանի հանդիսատեսները, համախմբվել են ամանորի ավանդական սեղանների շուրջ, զոհոթյամբ, լավագույն հուշերով և զգացումներով ճանապարհհելու 1964 թվականը և հավատով, հույսով դիմավորելու նոր տարին:

Որոշյալ պահին ժամանում է նորին Ա. Օծությունը և օրհնում ամանորի սեղանը:

Մայր Աթոռի քարերներով ծանրաբեռն սեղանների շուրջ ստեղծվում է ամանորի ջերմ, հայրենասիրական մթնոլորտ:

Գործադրության է դրվում գեղարվեստական մի առանձին հայտագիր՝ նվիրված օրվա խորհրդին և նշանակության:

Գ դասարանի ուսանող Մ. Հայկալյանը արտասանում է Վ. Թերեյանի «Աղոթք վաղվան սեմին առջև» բանաստեղծությունը:

Հոգևոր Ճեմարանի այլազգ վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը, հանուն դասախոսական կազմի շնորհավորելով Վեհափառ Հայրապետի նոր տարին, ասում է.

«Վեհափառ Տե՛ր,

Նոր տարվա խորհրդավոր այս պահին, նորից հավաքված այս սուրբ հարկի տակ, նստած ամանորի սեղանների շուրջ, մեզանից յուրաքանչյուրի մտքի առաջով անցնում

է հին տարվա արդեն իսկ պատմություն դարձած օրերի շարանը:

Որպես ժողովուրդ և Եկեղեցի, անցած տարվա օրերին կարողացել ենք մեր ուժերի չափով մի նոր քար, մի բաճ շաղախ ևս դետեղել մեր ժողովրդի եկեղեցական, մշակութային, տնտեսական կյանքի դարգացման մեջ, ամոթով շմնալով մեր պապերի նվիրական հիշատակների առաջ:

Նոր տարի է, բարեմաղթությունների և շնորհավորությունների օր: Հանուն Մայր Աթոռ Մ. էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի, ինձ ուրախություն է վիճակված շնորհավորելու, Վեհափառ Տե՛ր, Ձեր նոր տարին ջերմ, սրտագին բարեմաղթություններով:

Ամանորի առթիվ, մեր բոլորի սրտագին բարեմաղթությունն է, որ Աստված Իր հովանին անպակաս անի կրթական այս հաստատության վրա, և Դուք երկա՛ր ու երկա՛ր տարիներ հովանավորեք և առաջնորդեք այն. Աստուծո օրհնությամբ և սիրովը մեր ժողովրդի:

Այս ուրախ առթիվ, մեր ջերմագին շնորհակալությունը և երախտագիտությունը նաև Հայկական ՍՍԻ Մինիստրների սովետին առնթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդին, որը միշտ և ամեն առթիվ իր բարոյաբանական փորձաքննությունն է ցուցաբերում Ճեմարանի կարիքների համար:

Ջերմ շնորհակալություններ նաև Գերագույն Հոգևոր Խորհրդին, վերստուգիչ հանձնաժողովին և Մայր Աթոռի միաբանու-

Գ. ՀԱՎՈՐԱՅԱՆ

(Աճեղամ Գևորգյանի Հոգեւոր ետեւորի)

ԳՐԻԳՈՐ ՏՂԱ՝

Բ.— ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Տղայի կենսագրական տվյալները շատ սակավ են ու կցկտուր. դրանք ցրված են մեր պատմիչների գործերում և հիշատակարաններում: Տղան եղել է Ներսես Շնորհալու վասիլ եղբոր որդին. ծննդյան տարեթիվը հայտնի չէ: Ըստ հաղորդումների, նոր 1138 թվականին, Սուրբ ամբոցը սելջուկներից պաշտպանելու համար մղվող կռվում գերի ընկավ վասիլը, Գրիգորը եղել է 13—14 տարեկան. նշանակում է նա ծնվել է մոտավորապես 1124 կամ 1125 թվականներին: Վասիլի գերությունից հետո, նրա եղբայրները՝ Գրիգոր Պահլավունի կաթողիկոսը և Ներսես Շնորհալին, պատանի Գրիգորին վերցրին իրենց մոտ՝ Հայրապետանոցի դպրոցում կրթելու և դաստիարակելու նպատակով: Այստեղ նա ստացավ քաղմակոգմանի կրթություն, հմտացավ աստվածաբանական և աշխարհիկ գիտությունների մեջ, ծանոթացավ հելլենական դպրության ու արվեստին՝ կաթողիկոսարանում ժառանգող հույն գիտնական Կոստանգին հոգևորականի միջոցով: Բացի հոմաբանից, նա լավ իմացել է նաև մի քանի ուրիշ լեզուներ: Գրիգոր Տուսեպորդուն գրած թղթերից երևում է, որ նա տիրապետել է պարսկերեն, ասորերեն և եբրայերեն լեզուներին: Իսկ թե ինչու համար նա մինչև իր կյանքի վերջը կոչվել է «Տղա» մականունով, այդ մասին կան տարբեր ենթադրություններ:

2. Ղևոնդ Այրիշանը կարծում է, որ այդպես կոչվել են Կաթողիկոսարանում սովորող վասիլի տղա Գրիգորին՝ Շահանի տղա Գրիգորից տարբերելու համար, որովհետև երկու Գրիգորներն էլ ապրելիս են եղել Կաթողիկոսարանում:

2. Մ. Զամչյանը և ուրիշները ենթադրում են, թե «Տղա» է կոչվել նրա համար, որ շատ վաղ հասակից կաթողիկոս է ընտրվել: Վերջապես Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն էլ ասում է, թե այդ մականունով է կոչվել, որովհետև միշտ ապրել է Կաթողիկոսարանում և մեծացել որպես Կաթողիկոսարանի տղա: Արդյոք վերոհիշյալ երեք ենթադրություններից ո՞րն է հավանական: Մեր կարծիքով առաջին և երկրորդ ենթադրությունները անհավանական են: Ահա թե ինչու՝ վասիլի տղա Գրիգորը, այսինքն Գրիգոր Տղան, տարիքով շատ փոքր է եղել Շահանի տղա Գրիգորից, որը հետագայում դարձավ Գրիգոր Ապիրատ անունով կաթողիկոսը:

Այն ժամանակ, երբ Գրիգոր Տղան տակավին պատանի էր, Շահանյան Գրիգորը, այսինքն Ապիրատը, 25—30 տարեկան գիւժկորական էր հունական արքունիքում, և որին Ներսես Շնորհալին մի ոտանավոր ձոնեց «Առ Ապիրատն ի Տէր Ներսէսէ բան շափաւ սառ վերնագրով: Ինչպես տեսնում ենք, երկու Գրիգորները հասակակից չեն եղել: Բացի այդ, Գրիգոր Շահանյանը «ի մանկուց տիրոց» ունեցել է «Ապիրատ» մականունը: Վերջապես, Ապիրատը երիտասարդ ժամանակ Կաթողիկոսարանի դպրոցում չի սովորել, որովհետև Գրիգոր Տղան էր:

Երկրորդ ենթադրությունն էլ անհավանական է. քանի որ Գրիգոր Տղան շատ վաղ հասակում չի ձեռնադրվել կաթողիկոս, այսինքն 19—20 տարեկան հասակում, ինչպես Շնորհալու մեծ եղբայրը՝ Գրիգորիս Պահլավունին:

Ինչպես տեսանք, Գրիգոր Տղան 1138 թվականին 13—14 տարեկան է եղել: Ներսես Շնորհալին կաթողիկոս է եղել մինչև 1173 թվականի ռոստոմ ամիսը: Գրիգոր Տղան կարող էր կաթողիկոս ընտրվել Շնորհալու

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № ԺԲ-ից:

«Ապա ժողով անթիւ եկեալ,
նպիսկոպոսքն անդ հիացեալ,
Ընդ բաղմութիւնն միաձայնեալ,
Կաթողիկոս զընտրեալն ձեռնալ»⁸,

Եթե մի պահ ընդունենք, որ Միխայիլ Աստ-
րու ասածները անհավանական չեն, և Գրիգոր
Տղան կաթողիկոսի պաշտօնը բռնութիւնով
է խլել Ապիրատից՝ նուրազդինի հրամանով,
դժվար թէ վերնում հիշված հայ պատմիչներն
ու գրողները, որոնք բոլորն էլ ամառգանքով
են հիշում Մլեհի և նուրազդինի անուանները,
այդպիսի մի դեպքի մասին չհիշատակեն:
Գրիգոր Տղան կաթողիկոսութիւն արեց շուրջ
քսան տարի՝ 1173—1193 թվականները: Տղա-
յի վախճանվելու ճիշտ ժամանակի վերա-
բերյալ պատմագիրների և բանասերների
գործերում տվյալները միատեսակ չեն:
Սմբատ պատմիչը ասում է, որ Գրիգոր Տղան
վախճանվել է 1193 թականի մայիսի 16-ին:
Հ. Մ. Զամյանը գտնում է, որ Տղայի մահը
տեղի է ունեցել հուլիսին, առանց նշելու ամ-
սաթիվը: Իսկ Հ. Ղ. Ալիշանը վերահիշյալ
տվյալների հետ համաձայն չէ, այլ գտնում
է, որ կաթողիկոսի մահը պետք է ընել ոչ մա-
յիսի 16-ին և ոչ էլ հուլիսին, այլ մայիսի
25-ին: Իհարկե, բոլորի կողմից էլ նկատի է
առնվել հին տոմարը:

Թե ո՞րտեղ է ամփոփվել Գրիգոր Տղայի
մարմինը՝ կարծիքները նույնպես տարբեր են:
Փորձենք քննելով ճշտել Տղայի մահվան ժա-
մանակը և թե իսկապես ո՞րտեղ է թաղվել
նա:

1193 թվականի հունիսին, Լեոն Բ-ը Գրի-
գոր Տղային և ներսես Լամբրոնացուն Հռոմ-
կալից ուղարկում է Սիս՝ կայսր Ֆրեդերիկ
Շիկամորուսին դիմավորելու Սակայն այդ
հանդիպումը չկայացավ, որովհետև հունիսի
10-ին Ֆրեդերիկը Սելևկիայի Կալիկազնոս
գետում լողանալիս ջրահեղձ եղավ: Այդ օրե-
րին Մամեստիայում էր գտնվում հիվանդ
կայսրորդին: Վերջինս միթիարելու համար
Գրիգոր Տղան գնաց Մամեստիա: Մամես-
տիայից կաթողիկոսը ոչ թե վնասադատվ
Հռոմկալ, այլ գնաց Սիս՝ Լեոնի մոտ: Այս
դեպքերը տեղի էին ունենում 1193 թվականի
հունիս ամսին, հետևաբար անկարելի է կա-
թողիկոսի մահը դնել մայիսի 16-ին կամ
25-ին: Այնուհետև, Ֆրեդերիկ Շիկամորուսի
ջրամույն լինելու օրն ու տարին օտար պատ-
միչների գործերում, մասնավոր թղթերում և
հիշատակարաններում անվիճելի կերպով հա-
մարվում է 1193 թվականի հունիսի 10-ը:

Հ. Մ. Զամյան իր տվյալները վերցրել է
Սմբատ պատմիչից⁹, իսկ Հ. Ղ. Ալիշանը՝ մի

հիշատակարանից, որը ցույց է տրված
«Սիսունան» գրքում¹⁰,

Ապա Խնչպես քացատրել վերնում քերված
տարբեր տվյալները:

Մեր կարծիքով, Սմբատ պատմիչի մոտ և
Հ. Ղ. Ալիշանի օգտագործած հիշատակարա-
նում եղած սխալ տեղեկությունը հետևանք է
գրիչների անզգուշության: Այսպես, մեր մա-
տենագրության մեջ, ինչպես գիտենք, թվերը
արտահայտվում են մեր այրուքների տառե-
րով: Մայիսը որպես հինգերորդ ամիս, ար-
տահայտվում է «Ծ» տառով, իսկ հուլիսը, որ-
պես յոթերորդ ամիս՝ «է» տառով: Զեռագրե-
րում ընդօրինակելու ժամանակ միանգամայն
հնարավոր է այդ երկու տառերի շփոթումը:
Սկզբնաղբյուրը եղել է Սմբատի գործը, ապա՝
հիշատակարանը, որից օտվել է Հ. Ղ. Ալիշա-
նը: Այսպիսով, եթե «Ծ» գրի տեղ ընդունենք
«է», կլինի մեր 7-րդ ամիսը՝ հուլիսը, այն
ամիսը, ինչպես ցույց են տալիս Հ. Մ. Զա-
մյանը¹¹ ու Հ. Աճառյանը¹², սակայն առանց
ամսաթվի: Նշանակում է, Սմբատի և հիշա-
տակարանի տվյալներով, Գրիգոր Տղան
վախճանվել է 1193 թվականի ոչ թե «Ծ», այլ
«է» ամսի 16-ին: Այսպիսով պարզվում է,
որ Գրիգոր Տղան վախճանվել է 1193 թվա-
նի հուլիսի 16-ին:

Այնուհետև, քստ Զամյանի, Գրիգոր Տղան
թաղվել է Հռոմկալում¹³, Բայց այդպես չէ:
Գրիգոր Տղան հունիսի վերջերին գնաց
Սիս՝ Լեոնի մոտ: Այնտեղ հուլիսի սկիզբնե-
րին հիվանդանում է և նույն ամսի կեսերին
էլ վախճանվում: Սիս քաղաքից մինչև Հռոմ-
կալ րավակա՞նք երկար, շաքաթների ճանա-
պարհ էր այն ժամանակվա հաղորդակ-
ցության միջոցների համար, հետևաբար
հնարավոր չէր այդպես՝ երկար ճանա-
պարհով կաթողիկոսի մարմինը փոխադրել,
այն էլ ամռանը: Զամյանը չի հաղորդում,
թե ո՞րտեղից է վերցրել իր տվյալը, բայց
մեր պատմագիրներից շատերը վկայում են,
որ Տղայի մարմինը ամփոփված է Սիս քա-
ղաքից ոչ հեռու, Դրազարկի նշանավոր վան-
քում: Սամվել Անեցին, պատմելով Գրիգոր
Տղայի եկեղեցական շինարարության և նոր
վանքեր կառուցելու մասին, վերջում գրում
է. «Եւ զկնի ինքն ևս փոխի մահուամբ առ

¹⁰ Հ. Ղ. Ալիշան, «Սիսունան, համագրութիւն հայկա-
կան եկեղիւոյ», Վենետիկ, 1855, էջ 532:

¹¹ Հ. Միքայել Վ. Զամյանց, «Պատմութիւն հայոց»,
Գ. Վենետիկ, 1784, էջ 159:

¹² Հրաչյո Աճառյան, «Հայոց անձնանունների քա-
ռարան», Ա. Երևան, 1951, էջ 582:

¹³ Հ. Մ. Զամյանց, նշված աշխատութիւնը, Գ,
էջ 159:

⁸ «Թուղթ ընդհանրական», էջ 490—491:

⁹ «Տարեգիրք...», էջ 106:

Քրիստոս և կայ հանգուցեալ ի սուրբ ուխտն Դրազարկ»:

Սմբատ պատմիչը նույնպես թվելով Գրիգոր Տղայի կատարած աշխատանքները, հզրափակում է. թե «քաղեցաւ ի Դրազարկ»¹⁴:

Գրիգոր Տղան ապրել է շուրջ 70 տարի, վախճանվել է 1193 թվականի հուլիսի 16-ին և թաղվել է Դրազարկում:

Գրիգոր Տղայի գործունեությունը չի սահմանափակվել միայն կրոնական, հայրապետական գործերով: Նա հղել է միաժամանակ հասարակական, պետական գործիչ և Վիլիկիայի հայկական իշխանության սյուներին մեկը: Ոչ Մլեհը, ոչ Ռուբեն Բ-ը, և ոչ էլ Լևոն Բ-ը պետական, մանավանդ արտաքին քա-

ղաքականության վերաբերող որևէ լուրջ գործի չէին ձեռնարկում, առանց Գրիգոր Տղայի խորհուրդների և մասնակցության: Իր նախնիների նման այս կաթողիկոսը նույնպես ամենից առաջ զբաղվեց վանքերի ու վանական դպրոցների շինարարությամբ և բարեկարգությամբ: Հատուկ հանգստարան կառուցեց Պահլավունի կաթողիկոսների աճյունների համար՝ որպես հրախտազիտության հուշարձան: Վեյս Տէր Գրիգորիս արկան է հիմնել Կլայն, և շինել հոյակապ եկեղեցի ի նմանություն արևելից տաճարացն. պատրաստեալ ի նմա զդիրս երկուց սուրբ լուսաւորյացն զհօրեղբարց իւրոց, Տէր Գրիգորիսի և Ներսէսի: Հաճէ և Սոփուց զնշխարս մեծին Վկայսերի զքեռոյն Ապիրատայ հաւուն իւրոյ զՏէր Վահրամայ և դնէ ընդ երկուց լուսաւորչաց»¹⁵:

¹⁴ «Տարեգիրք...», էջ 108.

(Շարունակելի)

¹⁴ Ստմունք ԱՆԵԿԻ, էջ 139.



2. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ

Ա.— ԶԱՐԿ ԿԱՐ ԱՅՍ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ

(Փոխան հառաջադրանքի)

Հայ ժողովուրդը տիտաններ շատ չունի, ոչ ալ բացառիկ հանճարներ կ'պնեն իր պատմութիւնը: Համեստ, հաճախ անուշադուր-ծավորներ են, որ կ'ոսած են հայ արվեստն ու գրականութիւնը. անոնց հասարակաց ճիգն է, որ հանճար մը ստեղծեն: Ի՛նչ,— հայ ժողովուրդի հավաքական հանճարը,— որ դարերուն մեջն պահեր է դաւեր պողոթնաւոր համար, մերթ տաճարներ կ'ոթողելով դարերուն դեմը, մերթ աշխարհը հեղեղելով իր ճիգերուն մեջ: Հայ արվեստագետը մասնիկ մըն է եղեր լոկ հասարակաց այդ երկունքին մեջ, ձուլվեր, նույնացեր է անոր հետ: Աշխատասեր հայ ժողովուրդը մեծ է իր հավաքական հոգիով առավելապէս:

Ու դարերու ժոցեն հայտնվեր են երբեմն բացառիկ մարդիկ, որոնք եկեր են հայ հողին գտնել, ամեն անգամ որ հայ ժողովուրդը կորսնցուցեր է զայն: Որովհետեւ շրջաններ են եղած, երբ հայ ժողովուրդը խարխափեր է խավարին ծոցը կուլի մը նման և մուրացիկի մը պէս ձեռք է կտրկառեր ամեն անցորդի, իր սևփական փղեցկութիւնները մոռցած: Ու պետք եղեր են մարդիկ, որպէսզի գան, իր գանձերը ճանչնան իրեն և զայն մղեն նոր երկունքի, նոր ճիգի, նոր ստեղծագործութիւն:

Կոմիտաս վարդապետ մեկն էր անոնցմէ:



Զարհուրելի բան է, երբ ժողովուրդ մը կ'կորսնցնէ իր հողին: Այլնս կուլը մըն է, որ կ'խարխափէ մութին մեջ, կ'ես մը դիակ, որուն ներսը ապրելու, դիմանալու, տենելու հույսը ա'լ չկա:

Այդպէս էր պատահեր և հայ ժողովուրդին: Ստրկութեան իր դարերուն մեջ կորսնցուցեր էր ան իր կերպարանքը, իր ոճը: Կ'խարխափեր, դարերով, ուրիշ ժողովուրդներու հետ-քերուն վրա, ընկճված, շվարուն, զրկված սթափելու ուժեն:

Տասնիններորդ դարը, որ իբրեւ թէ մեր վերածնութեան շրջանը բացավ, ի սկզբան ճիգ մըն էր միայն օտարին նմանելու, երբեմն և զայն կապկելու: Կարծելով, թէ լուսը Արեւմուտքն կուգա, գրեթէ ամբողջ դար մը զայն փնտռելու գացին հոն:

Մեր գրագետները օտար արվեստով սնան, ու օտար ամեն մեկ գրական շարժում միջուկ ստեղծեց իսկույն հայ կյանքի մեջ ալ: Նրա-ծիշտներ տնեցանք, որոնք գոհարներ ստեղծեցին, որոնց մեջ չէր թրթռար, ավա՞ղ, հայ հողին: Ըարտաքապետներ ունեցանք, որոնք հրաշակերտներ սփռեցին, իսկ անոնց մեջ հայ ոճ երբեք չկար: Ունեցանք և մեծ նկարիչներ, զորս օտարը իրավամբ խնց մեզմէ:

Եվրոպայի հետքերուն վրայն քալեցինք այսպես, մեր հոգեկան ստեղծագործությանց բոլոր մարգերուն մեջ:

Դարուն կեսերեն հետո էլ միայն, որ հայ ժողովուրդը իր դարավոր բռնան կարթննար, իր իսկ ընդերքը պեղել կսկսեր, իր հոգին կսկսեր փնտռել:

Հայտնված էր Սրվանձտյանց, ու անոր շնորհիվ հայ ժողովուրդի հոգվույն մայր երազն էր գտնված: Հեթաթներն ու առասպելները լեզու կառնեին, իմաստ կստանային առակ ու առած, հարուժույն կառնեին Դավիթ Սասունցին դարերուն խորեն, ու անոր հետ՝ հայ հոգին:

Կավե արձանները կփշրվեին ետեւ-ետեւ հայ Պառնասին մեջ, Պոլսո և Թիֆլիսի հայ վարժապետները իրենց ծոցը կդնեին իրենց երգարանները, ու փոխարեն՝ միջնադարյան մեր խեղճ երգիչները ու անոնց շարանին կցվող մեր հեթաշուղներն էին, որ կբարձրանային գահույթը, ու անոնց տաղերուն մեջ հայ ժողովուրդը ինքզինքը կսկսեր ճանչնալ, Քուչակն ու Սայաթ-Նովան կսկսեին մեր հոգվույն խոսիլ:

Ժիզը կանգ չառավ: Քիչ հետո, Անին կպեղվեր, հայ փյառակները լեզու կառնեին, ու տաճարները կփսփսային իրենց զաղտնիքը: Հայտնված էր Թորամանյանը, Հայ ժողովուրդը կսկսեր իր հոգին փնտռել քարերուն ու փոշիներուն մեջ:

Ու մյուս կողմն, վանքերու նկուղներեն դուրս կհանվեին տակավ հայ ձեռագրիները: Մագաղաթները կսկսեին խոսիլ, ու անոնց էջերուն վրա թուղուններն ու ծաղիկները մեզ կգեղեցնեին: Արեւուն ելած էին որդան կարմիրն ու որդան կապույտը, ու հայտնված՝ շնորհալի մանրանկարիչներ Սարգիս Պիծակն ու Թորոս Ռոսլինը: Հայ հոգին իր մեկ ուրիշ էջն էր բացած:

Ազատագրված էր հայ ոճը: Բայց ո՛չ, Դեռ լման չէր հայ հոգին: Ու ահա կհայտնվեր մեծ մոգը, որպեսզի լրացնե զայն:

Կոմիտասն էր:



Ի՞նչ քրավ Կոմիտաս:

Ան նախ իր ականջը դրավ հայ գեղջուկի սրտի զարկին՝ անոր հուզումները կարդալու համար: Եվ այդ հուզումներուն մեջն ան քամեց ինչ որ դարերը մեզի կբերեին այնքան վճիտ ու անուշ: Ըմբռնած, որ հայ ցեղը գտնելու համար պետք է հայ շինականին հոգին պեղել նախ, ան որոնեց զմայլելի գեղեցկությունը, զոր հայ գեղջուկը կծածկեր իր համեստ, պարզ, մանկունակ փրգերուն մեջ, երգեր, ուր բնութայունն ու ցեղը

կընդելուզվեին, ուր դարերն ու սերունդները կգրկվեին մեկտեղ, «խորհրդավոր ու պաշտօնի գաղտնիք», ինչպես կըսե ինքը Կոմիտաս, գաղտնիք, զոր ինքն իսկ հանեց արևուն լույսին:

Չէր բավեր հայ ժողովուրդի երգերուն մեջ քարախող այդ անուշ խոռվիքը գտնել. պետք էր մխրճվիլ դարերուն խորը, անոնց ևս գաղտնիքը կորզելու համար, դիտանալու համար, թե ինչպես կերգեին երբեմնի հայերը, Քսան տարի ան ինքզինք քամեց արդարև, որպեսզի գտնե խաղերու բանալին, որպեսզի կարգա մեր զմայլելի շարականները իրենց վաղեմի պարզությունն ու քաղցրության մեջ: Ու հաղթանակի սեմին հասած էր արդեն, երբ խավարեցավ իր հոգին:

Չէր բավեր նաև հայ հոգին գտնելու Պետք էր զայն մարդոց ալ պատմել, ու ականածանքի կանչել աշխարհը գեղեցկություններուն առջև, զորս գտած էր հոն: Կոմիտաս կրցավ արդարև հետաքրքրել աշխարհը հեթ ու փոքրիկ ժողովուրդի մը սրտին մեջ պահված այդ գոհարներով:

Բայց ան չկեղծեց գեղջուկին հոգին՝ պատմելու ատեն զայն մարդոց: Ան հայ երգը մեզ բերավ ինչպես գտեր էր շինականի շրթներուն, ջինջ ու հարազատ: Եթի առավ ու դաշնակեց, ինչպես կարձանագրեր ինք իր ներդաշնակած բոլոր երգերուն ճակտին:

Ան փորձեց միևնույն ատեն հայ երգը մաքրել իր ուրմեներեն: Հայ հոգիին խորթ դարերն ու դրացի խորթ ցեղեր խաթարեին էին հայ երգը, ու անոր հետ հայ հոգին, Անոնք իրենց դուռն էին երկարեր հայ ժաման ներս ալ, ու սրբապղծներ մեր շարականներն ու մեղեդիները: Կոմիտաս ջանք շինեց հայ երգը գտնելու համար, զայն բերելու համար իր տոհմիկ պարզությունը:

Ան կրցավ այսպես ակոսը բանալ: Հայ ժողովուրդը հպարտ է հիմա իր երգով, ու հպարտ կնայի մյուս ժողովուրդներուն: Հայ ժողովուրդը գտավ իր հոգին իր երգերուն մեջ, ինչպես զայն գտեր էր, մաս առ մաս, քարի ճեկորներուն մեջ, աշուղներու զմայլելի տաղերուն մեջ, մագաղաթներու շքնաղ զարդարանքներուն մեջ:

Կոմիտաս ցուցուց, թե ժողովուրդի հոգին է հիմքն ու խարխսին ավիստին, ու ով որ կկառչի անոր, ալիքներեն պիտի չբշվի՝



Հարկ կա՞ր սակայն այս աշխատությունը: Պետք կա՞ր գրելու մարդու մը մասին, որու շուրջ ամբողջ գրականություն մը կա արդեն: Քիչեր միայն այնքան պաշտամունքի առարկա եղած են մեր պատմության մեջ, որքան

ևղավ Կոմիտաս, որովհետև քիչեր միայն կրցած են անոր շափ հրախտիք ձգել: Հայ ժողովուրդի սերն ու գորգուրանքը դեպի Կոմիտասը հետևանքը չէ հղերական այն վախճանին, որ անորը հղավ: Զարհուրելի մահեր շատերը ունեցան մեր մտավորականներին, բայց ոչ մեկը այնքան խորունկ տեղ գտավ հայ հոգիին մեջ որքան Կոմիտաս, որովհետև ոչ մեկը անոր շափ կրցեր էր խորանալ հայ հոգիին մեջ:

Նվ քնական էր, հետևաբար, որ անոր կյանքը և գործը ես այդքան ուշադրության առարկա դառնային:

Արդարև, տասնյակ տարիներն ի վեր կխոսվի Կոմիտասի մասին անընդհատ: Բաղ՝ միցս զրեցին իր կարճ բայց բեղուն կյանքին վրա, անոր մասին անթիվ հուշեր տպեցին, պոեմներու և քերթվածներու նյութ ըրին դայն, վերլուծեցին անոր վաստակը իր այլազան երեսներուն մեջ: Բայց ինձի այնպես կթվի, թե դեռ ամեն յան ըսված չէ և իր կյանքը պատմված չէ լրիվ: Նախ չկա երկ մը, որ իր կյանքին ու գործունեության ամբողջական մեծագրությունն ըլլար և ուր ան ներկայանար իր բովանդակ առաքելությանն ու ճիգերուն մեջ: Հետո, իր մասին գրվածներուն մեջ ալ կան լուսարանության կարոտ անպիտի կետեր, որոնք պետք է պարզվին, բանի չէ շարադրված վերջնական այդ մեծագրությունը:

Ով որ Կոմիտասը ճանչցած է, ցավով կտեսնե, որ ան շերտի մեզ լրիվ իրեն նվիրված հուշագրության մեջ, Բերթերու հավաքածոները, իրենց կարգին, ամեն բան չեն պատմեր մեզ ճշգրիտ: Անդին իր՝ Կոմիտասի նամակները քացառիկ պահերը միայն կուտան իր կարճ բայց ալեկոծ կյանքին, մինչ իր ինքնակենսագրական նոթերուն մեջ ան շատ է ժլատ, որպեսզի տեղյակ դառնայինք բովանդակ իր ապրումներուն, ու անոնք իսկ գրի առնված են պահու մը, երբ ան նոր կսկսեր իր հիմնական առաքելությունը: Ու դեռ ավելին կա: Վրեպներ շատ կան իր մասին գրվածներուն մեջ: Ոմանք այնքան խանդավառված են, օրինակ, իրենց հուշերը գրելու ատեն, որ հաճախ դեպքերն ու դժբերը կխառնեն իրարու, կշփոթեն թվականներն ու վայրեր, կկարծեն մաս առած ըլլալ Կոմիտասի հետ կապված այս կամ այն դեպքին: Մեկը դայն շատ մոտեն ճանչցած ըլլալ հավակնողներն, կգրեն, օրինակ, թե 1915-ի վերջերը, Պոլսն մեկնելէ առաջ, այցելության է գացած Կոմիտասին Շիրազի բուժարանին մեջ, ուր ան կխնամվեր, ու կնկարագրեն ալ այդ այցելությունը, մոռնալով, որ... 1916-ի վերջերն էր միայն, որ Կոմիտաս պիտի դետեղվեր հոն:

Ուրիշ մը իր հուշերուն մեջ կենթադրեն նույնպես ներկա եղած ըլլալ, 1915-ին, Կոմիտասի աքսորեն դառնալեն հետո, անոր կատարած Դոնրացիքի արարողության Գուրուչեմի հայ եկեղեցվո մեջ: Այդ տարվան Դոնրացիքին Կոմիտաս դեռ աքսորի իսկ չէր գացած: Իսկ ակնարկված Դոնրացիքը 1916-ի Սաղկազարդի կիրակին է, որ պիտի կատարեր ան, երբ... հուշերն ստորագրողը վաղուց էր մեկնած Պոլսեն:

Ուրիշի մը հուշերուն մեջ կարդացած ենք զարմանքով, թե Կոմիտասի Փարիզյան ելույթներուն առթիվ անոր շնորհվեցավ... նորելի մրցանակը:

Այլուր կարդացած ենք, նույնպես զարմանքով, թե Կոմիտասը իր աքսորի օրերուն գուրգուրանքով շրջապատողներու մեջ եղած է միամտնթոն ալ: Այդ տողերը գրողը չէր անդրադարձեր, որ Զանգրըն էր Կոմիտասի աքսորավայրը, մինչ միամտնթոն Այալ աքսորված էր:

Անդին, մեծատաղանդ մեր մեկ բարեկամը Կոմիտասը տեսած ըլլալ կերակայն Պետի-Շանի մեկ կաֆեն, քովը... Երվանդ Թույալանը նստած, ու կհորինե վիպական դրվագներ, որպեսզի Կոմիտասը պտտցնե փառաներու հարեմը, ու թուրք կիները անոր սփոփել տա հոն:

Նթե հիշեցինք այս քանի մը փաստերը, ցույց տալու համար էր միայն, որ մարդոց հիշողությունը երբեմն կշեղի ճամբեն, ու քեզ ալ կմոլորեցնե հետը:

Ու դեռ խոսքը չըրինք անոնց, որոնք Կոմիտասի մասին հուշեր գրեցին, առանց նույնիսկ դանիկա ճանչցած ըլլալու, կամ երբ հազիվ թե դայն հնովեն տեսած էին...

Նթե մենք, որ այդ օրերն ապրեցանք, կշփոթինք նման հուշեր կարդալով, ինչքան դժբախտ պիտի ըլլան մարդիկ մեզմե սերունդ մը հետո...



Անցնող սերունդը քիչ բան թողուց մեզ իր հուշումներուն, իր խոհերուն, իր մտերիմ պահներուն մասին: Անոնք մտահոգությունը կարծես երբեք լուսեցան իրենց ներքին խռովքն ու մտածումները փոխանցելու իրենցմե ետքիններուն: Ոմանք ալ տիրաբար ինկան իրենց ուժերուն լրության և իրենց ճիգերուն թափին մեջ, կես ձգած իրենց գործը: Իրենց մտքեն չէր անցներ անշուշտ ներկայանալ վաղվան, այդպես կիսատ ու թերի: Ու անոնք առին, իրենց հետ գերեզման տարին շատ բան իրենց տեսածեն, իրենց դիտածեն, շատ բան նաև իրենց ապրած կյանքեն ու գործունեությունեն:

Ուրիշներ բախտն ունեցան մեծ սպանդան ճողողաբիշուս եվ սակայն անոնք ևս թերացան իրենց գիտցածը բսելու շրջանի մը մասին, որ այնքան ուշագրավ եղավ իր հույսերով և հուսախաբույթուններով, իր ցնծովյան պահե-րով և աղետներով, ինչպես և դեմքերուն մա-սին, որոնք իրենց աղքերուն տակ դեր էին կատարել բացառիկ այդ անցքերուն մեջ, Եվ, ամա ղ, հետզհետե կնոսրանան սակավաթիվ այդ վերապրողներն ալ, ու շատ բան մտթը պիտի մնա վաղվան պատմության համար, որ բերնե-բերան իրեն հասած լուրերուն և թերթերի մուրացված քանի մը դժգոյս տո-ղներու պիտի կառչի, անցյալը ճանշնալ փոր-ենու համար:

Վերապրողներուն մեջ անշուշտ շատերը կային, որ ճանլցեր էին Կոմիտասը, բայց անոնք իրենց բոլոր գիտցածը սպառնցի՞թուցիկ հուշերու մեջ, առանց կարենալու Լրիվ տալ շրջանը, ուր Կոմիտաս անցուցեր էր իր գործածունեության վերջին շորա-հինգ տարիները։ Ու այդ շորա-հինգ տարին մեկն էր այն քաջառիկ պահերն, ուր հայկական Պոպսը իր ամեննն ոգևոր օրերն ապրեցավ, դահիճին հանձնելն առաջ իր մտքին ու ար-վեստին ծաղիկը, և ուր Կոմիտաս, ինք ևս, գիմելն առաջ իր եղբորական վախճանին, մտած ըլլալ կարծեր էր իր առաքելության ամեննն ընդմնավոր հանգրվանը։

Հիմա այլևս անհնցմե ալ շատ քիչերը միայն կան: Եթե անոնք ալ իրենց գիտցածը թուղթին չհանձնեն, մեր մոտավոր երեկը շատ բան պիտի առնե տանի հետը, ու Կոմիտասը վաղովն ալ մարդոց պիտի երևա առասպելներու մեջ: Ժիշտ է, ահավոր դրվագներով լեցուն եղավ անոր կյանքը ու վաղը անոր կենսա-գրութունը պիտի կարդան եղբրավեպի մը պես, նույնիսկ եթե ան պատմի մամենե ժամտ գովներով, բայց անհրաժեշտ է իրա-կան զոհեր տալ իր վաղվայն կենսադրին, որ-պեսզի առասպել չկարծեն այն մեծ եղբրեր-գութունը, զոր Կոմիտաս ապրեցավ:

Դժբախտ բախտավորներին մեկը, որ այդ օրերը տեսավ և ղեռ բան մը կպահանջե՝ հիշողության մեջ՝ այս տողները գրողն է։ Ան հս ապրեցավ Կոմիտասի ապրած ժամանակին հետ, հուզումներով և երազներով բարախուն այն օրեր տարին, զոր մեծ վարպետը շնչեց Պոլսու մեջ, վերջին քանի մը տարին բուժա-րանի մը անկյունը։

Ան կոխտակցի, որ առանց կրիվ ճանջնեկու շրջապատը, որուն մեջ գործեցին մեր երեկ վան դեմքերը և խմորվեցան և ճիգի անցան անոնք, միշտ բան մը մուկ պիտի մնա անոնց կյանքին, որքան ալ առատ ու բազմազան մանրամասնություններ տանք և դրվագը կցենք զրվագին:

Ընթերցողը թող չգայթակղի, հորադիրը, ղոր այս հոգվածաշարքը կկրե, իր կարծած իմաստը լուսի, Ան չնթագրեր որեհէ հավակնություն այս տողերը գրողին կողմն՝ պատմության հանձնելու անձնական իր հարարերությունները կոմիտասիին հետ, միշտ է, ան ալ ունեցած է իր կապերն ու հանդիպումներն ողբացյալ արվեստագետին հետ, և պիտի հիշե զանոնք մամն մեկը իր տեղին։ Բայց այս աշխատությունը գրված չէ դիպվածական այդ հանդիպումները պատմելու համար։

Այս տողերը դրողին համար փոքր սփոփանք չէ՝ անշուշտ առիթ՝ եղած ըլլալ Կոմիտասի զանազան երաժշտական ելույթներուն և դասախոսութեանց, մանավանդ անոր հրապարակային ինչ-ինչ արտահայտութեանց և հոգովածներուն։ Այդ առիթները ան կ'աւարտի սակայն դիպվածներ։

Արդարև, ԵԱՀԿ-ում արտա-ի խմբագրութեան մէջ իր աշխատած տարիներուն, այս տողերը գրողին հանձնված էր ի միջի ալլոց հանդիսութեանց նկարագրութիւնը, ինչպէս և թատերական և գեղարվեստական քրոնիկներու հոգը: Այս պարտաւան իրեն համար առիթ մը նշանակ մտտեն հետեւելու Պոլսո գեղարվեստական կյանքին երկար տարիներ, ու շփում ունենալու քուրդ այն կարկառուն դեմքերուն հետ, որոնք փայլեցան իւրեւ ընթիւն հաճախութեան մարդ: Կոմիտասի հետ իր հանդիպումները մասամբ աղոյ արդունքն են:

Կոմիտասի հետ շփման առիթներ եղան, այս տողերը գրողի համար, նաև զանազան հանդիսությունները, որոնց կազմակերպման մեջ բաժին ունեցավ, ինչպես և ռեալիստարգա-ը, զոր հրատարակեց Վարուժանի հետ մեկտեղ և որուն աշխատակցեցավ նաև Կոմիտասը:

Օրհնենք դիպվածը, որ մեզ ժամանակակից
ըրավ քաջադիկ ինչ-ինչ դեմքերու և մեզ
պարգևենք շնչել միևնույն օդը, որ անոնց հու-
զումներուն ու տեսիլքներուն կայծով մեզ ալ
բռնկցուց մերթ ու երբեք մի ալ առիթներ տվա՞յ
շփում՝ ունենալու անոնց հետ, թայց գոհա-
նանք այդքան մը փառքով ու չհավակնինք
անոնց ճիգերուն մասնակցած ըլլալ, դեր կա-
տարած ըլլալ անոնց առաքելության մեջ,
եթե նույնիսկ շատ համատեղ անոնք՝
մեր գործակցութիւնը չարժատարհելու իրենց
այս կամ այն աշխատանքին պահուն:

Այս աշխատությունը առավելապես սե-
րունդի մը հանդիպումն է որ պիտի պատմե
Կոմիտասին հետ Ռոդֆհետե, արդարեւ, ամ-
բողջ հերոսները մըն է, որ շփման մեջ մտալի
հնար, անով ոգևորվեցաւ, անոր շունչին տակ

լծվեցա՞վ ճիգի: Շատեր, անշուշտ, անձնական, նույնիսկ մտերիմ պահեր ունեցան հետը, կամ գործակցեցան անոր: Բայց ան սեփականությունը մնաց բովանդակ սերունդի մը, ինչպես որ պիտի մնա հաջորդ, և բոլոր սերունդներուն ալ:



Վաղուց էի ծրագրած գրել Կոմիտասի մասին, Կուզիսի տալ, ծավալուն հատորի մը մեջ, անոր բովանդակ կյանքը, և հետևաբար, տարիներու ընթացքին, հավաքած էի նյութերու և նոթերու հսկա պաշար մը, որոնք ատաղձ պիտի ծառայեին աշխատությանս: Գրի առած էի նույնիսկ կարևոր մաս մը անկե:

«Էջմիածին» ամսագրի մեջ հոգվածներու այս շարքը ծրագրիս մեկ մասն է միայն: Զանց ըրած եմ, ինչպես պիտի տեսնե ընթերցողը, առաջին շրջանը իր կյանքին, սկսելու համար այն պահին, երբ պիտի սկսեի Պոլսո իր գործունեությունը: Ու հետո, պարբերականի մը չքերը չխճողելու մտահոգությամբ, հապաված եմ շատ քան նյութերին, որոնք տեղ պիտի կրնային գտնել ծրագրված աշխատության մեջ, եթե ան հատորով լույս տեսներ:

Հրատարակելով հոգվածներու այս շարքը, հապաղած պարտք մըն է, որ կհատուցանենք: Զիշտ կես դար կթափնե մեզ այն օրին, երբ ան մեր մեջ էր դեռ, մեր հետը, իր ուժերուն լրումին և իր կորուսիին բովանդակ թափին մեջ, ծրագրիներ որոճալով խանդավառ և մեղալ հետը խանդավառելով: Մարդ չի կրնար չապրիլ, կես դար հետո ալ, Կոմիտասի ստեղծած պահը Պոլսո մեջ, և լսարստալ, վերհիշելով այն բոլորը, որ կես թողուց մեծ առաքելություն մը, իր ամենեն ոգևոր վայրկյանին, Հանցանք պիտի ըլլար թուղթին չհանձնել ինչ որ դեռ կհամենա մեր հիշողության մեջ, ու զայն խառնած ուրիշներուն ալ հուշերուն, պատկերը լտալ շրջանի մը, և այն բացառիկ դերին, զոր Կոմիտաս ունեցա՞վ մեր ալի օրերու կյանքին մեջ:

Պիտի տանք, հաջորդական հոգվածներու մեջ, տարիները, զորս ան մեր մեջը անցուց,

սկսյալ այն պահին, երբ ոտք գրավ սուլթաններու մայրաքաղաքը, հայ կյանքին կրքերով բռնկած մեկ վայրկյանին, պատմելով իր սփռած խանդավառությունը առաջին օրին և իր հանդիպած խութերը, կրակը, զոր բռնկցուց երիտասարդության մեջ և ոգևորությունը, զոր արծարծեց ամենուրեք իր շուրջը, իր տքնության և հաղթանակի պահերը հավասարապես, հմայքը, զոր պտտցուց քաղաք քաղաք և ակնածանքը, զոր հարկադրեց նվառային հայ երգին փառքին առջև, հասնելով այսպես ահավոր այն օրերուն, երբ պիտի խավարեի իսպառ իր դիտակցությունը:

Սույն հոգվածաշարքի հիմնական մասը հետևաբար այն գլուխներն են, որոնք կվերաբերին Կոմիտասի Պոլսո տարիներուն, երբ հեղինակը մոտեն տեղյակ է անոր գործունեության: Բայց այս տողերը գրողը մտադրած ըլլալով լրիվ ներկայացնել այդ Կոմիտասը, ստիպված է նախ պատմել, զոնե հարևանցի, թե ի՞նչ փուլերն անցա՞վ հայ երգը Պոլսո մեջ մինչև Կոմիտասի գալը, այսինքն տալ այն միջավայրը, ուր պիտի գար ան գործել իր կյանքի վերջին շրջանին:

Այս աշխատանքը, ուրեմն, Կոմիտասի լրիվ կենսագրությունը չէ, ոչ ալ ամբողջական վերլուծումը իր գործունեության: Բայց ան փորձ մըն է ներկայացնելու դերը, զոր կատարեց ան հայ կյանքի մեջ, Կոմիտասը ըմբռնած պիտի ըլլայինք, եթե ղենեինք զայն հայ երաժշտության հետ իր առնչությանը մեջ միայն, առանց շոշափելու և այն բացառիկ դերը, զոր առհասարակ ունեցա՞վ հայ մշակույթի վերընձուլման համար: Ան մեծ եղա՞վ իրրե երաժիշտ, բայց և եղա՞վ նույնքան մեծ՝ խանդավառությանը համար, զոր ստեղծեց իր շուրջը, ճամբուն համար, զոր բացա՞վ: Ընթերցողը թող չզարմանա ուրեմն, եթե քաջ առ քաջ պիտի հետևինք Կոմիտասին, ինչպես իր բուն կոչման, նույնքան իր սփռած ոգևորության, Գողգոթա պիտի բարձրանանք հետը միասին ու պիտի հետը ման գանք տանջանքի բոլոր հանդերձվանները, մինչև որ փակենք աչքերը, և զայն տանինք պանթեոն՝ հայ հողին գիրկը:

(Շարունակելի)

Ա. Խ. ՍԱՖՐԱՍՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԽԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
ԹՈՒՐԻԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔՆԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ԵՎ ՎԱՆՔԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ՈՒ ԹԱՔՐԻՐՆԵՐԸ
(1912—1913 թ. թ.)

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանի կողմից, Հիշրեթի 330—331 թվականին (1912—1913) կազմված և թուրքական կառավարության հն ներկայացված Օսմանյան կայսրության մեջ գտնված վանքերի և եկեղեցիների ցուցակները և նորանց հետ համապատասխան թաքրիթները (ծանուցագրեր)՝ ուղղված արդարադատության և դավանանքների մինիստրության:

Այդ ցուցակներն ու թաքրիթները պահվում են Երևանի հանրային դրաղարանի թուրքերեն զրգերի շարքում 1—47 համարների տակ, Գրադարանում պահված թաքրիթներն ու ցուցակները Պատրիարքարանի սեագիր օրինակներն են, ինչպես նշված է ցուցակում, իսկ մաքրագրված օրինակները ներկայացված են կառավարության:

Ցուցակներն ու թաքրիթները բլանկի վրա գրված են և Պատրիարքարանի գրասենյակի կողմից հավաքված Պատրիարքարանի պաշտոնական մեծ թղթածրարում (դժբախտաբար կիսով չափ պատռված): Ցուցակների և թաքրիթների վրա կան փոփոխություններ, որոշ տեղերում նաև հայերեն լեզվով ծանոթություններ:

Պատրիարքարանի թղթածրարի վրա թուրքերեն լեզվով գրված է.

«Հայկական եկեղեցիների ցուցակը: Կոստանդնուպոլսի և այլ վիլայեթների եկեղեցիների ցուցակը: Արդարադատության մինիստրություն...» (պատռված է):

Վերոհիշյալ թաքրիթների սեագրությունները տրված են հետևյալ համարներով.

(Հիշրեթի 330 թ. փետրվար—1911—1912 թ. թ.) № № 1962, 1972, 1973, 1974, 1975, 1976, 1977, 1978, 1979, 1980, 1981, 1982, 1983, 1984, 1985, 1986,

(Հիշրեթի 330 թ. փետրվար—1911—1912 թ. թ.) № № 1987, 1988, 1989, 1920, 1921, 1922, 1993, 1994, 1995, 1998, 1999, 2000, 2001, 2003, 2010, 2015, 2016,

(Հիշրեթի 330 թ. մարտ—1911—1912 թ. թ.) № № 2020, 2021, 2022, 2024, 2029, 2031, 2032,

(Հիշրեթի 331 թ. ապրիլ—1912—1913 թ. թ.) № № 3036, 2047, 2048, 2049, 2050, 2053, 2057, 2058, 2059, 2061,

Թղթածրարում ընդամենը պետք է լինեն 51 թաքրիթներ, Այդ թաքրիթներից պակասում են հետևյալ համարները. 2000, 2016, 2020 և 2061,

Վերոհիշված թաքրիթներից բացի, կան նաև այլ թաքրիթներ հետևյալ համարներով. 2014, 2067, 2069, 2081, 2082, 2085, 2091,

2092, 2093, 2094, 2095, 2096 (12 թաքերի-
ընդամենը՝ 47+12=59 թաքերի)։

Թաքերիների բովանդակությունից երևում է, որ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիար-
քարանձավների և վանքերի մասին տեղեկությունները ստացել է վիլայեթների և քաղաքների հայոց առաջնորդարաններից։ Հետևաբար կարելի է ընդունել, որ վանքերի և եկեղեցիների ցուցակները վավերական են և եկեղեցիների մասին տրված տեղեկու-
թյունները, մասնավորապես նրանց կառուց-
ման թվականները ունեն սլատական ճշտու-
թյուն։

Ցուցակները ընդգրկում են Օսմանյան պե-
տության մինչև առաջին համաշխարհային
պատերազմի ժամանակվա սահմանները,
այսինքն ներառյալ Միջագետքը, Սուրբան,
Պաղեստինը և այլն։

Մեզ համար անհասկանալի պատճառով
ցուցակում չի մտցված Վանի վիլայեթը։

Թաքերիների բովանդակությունից պարզ-
վում է, որ Թուրքիայի սահմաններում
գտնվող բոլոր հայկական (հավանաբար նաև
հունական և այլ ազգային փոքրամասնու-
թյունների) եկեղեցիները և վանքերը պետք
է հաստատված լինեն, թաքերիների արտա-
հայտության մեջ՝ «կապված լինեն» (עմեր-
բոր) հատուկ սուլթանական ֆերմանի։ Այդ
պատճառով էլ ցուցակում ցույց տրված բո-
լոր եկեղեցիները և վանքերը բաժանվում են
երկու կարգի՝ «ֆերմանով հաստատված» և
«առանց ֆերմանի» թույլատրված եկեղեցի-
ներ և վանքեր։ Մինչև 1912—1913 թվական-
ները հայոց եկեղեցիների կարևոր մասը
(մեր հաշվով շուրջ 70—75 տոկոսը) հա-
ստատված չեն եղել ֆերմանով։ Հավանա-
բար, թուրքական կառավարության որոշակի
պահանջով, հայոց Պատրիարքարանը ներ-
կայացնում է բոլոր եկեղեցիների և վանքերի

լրիվ ցուցակը, միաժամանակ ցույց տալով
նրանց վայրերը, անունները, կառուցման
թվականները և ֆերմանով հաստատված
լինելը կամ չլինելը, ֆերմանով հաստատված
լինելու դեպքում՝ նաև ֆերմանի տարեթիվն
ու ամսաթիվը։ Մի շարք եկեղեցիների ու
վանքերի մասին ասվում է միայն «կառուց-
ված է հնուց»։

Պահպանելու համար Թուրքիայի վարչա-
կան բաժանման այդ շրջանին գոյություն ու-
նեցող միավորների անունները, չենք թարգ-
մանել այդ անունները։ Ինչպես հայտնի է,
մինչև 1914—1918 թվականների համաշխար-
հային առաջին պատերազմը, Թուրքիան ու-
ներ հետևյալ վարչական միավորները։ Վի-
լայեթ, սանջահ (կամ իվլա), կազա և ճա-
հիլ։ Տեղերի, եկեղեցիների և վանքերի ա-
նունները գրված լինելով արաբական տառե-
րով, հաճախ դժվար է լինում այդ անունները
կարդալ ճշտությամբ (մասնավորապես գյու-
ղական անունները)։ Հետևաբար թույլատր-
ված ստուգել ենք քարտեզներով, Այի
տեղանունները, որոնց ճշտության մասին
կասկածել ենք, ցույց ենք տվել հարցական
նշանով (?), ինչ վերաբերում է հայոց եկե-
ղեցիների և վանքերի անուններին, դրանք,
շատ չնչին բացառությամբ, ճիշտ են արտա-
հայտված։

Թաքերի բառը (ٽاڭ) պահպանել ենք
ինչպես հայտնի է, հայկական և հունական
պատրիարքարանների կողմից Բարձրագույն
Դուռն կամ մինիստրություններին ուղղված
պաշտոնական գրությունը կոչվում էր «թաք-
երի»։

Ցուցակում հիշված բոլոր եկեղեցիների
(ներառյալ վանքերի) ընդհանուր պատկերը
տալիս ենք առանձին ընդլայնակով, այնպես,
ինչպես զատավորված են Պատրիարքարանի
Թաքերներում և ցուցակներում։

եկեղեցիները և վանքերը ըստ վիլայեթների, սանջահների և կազաների	Ֆերմանով	Առանց ֆերմանի	Ընդամենը
--	----------	------------------	----------

Ստամբուլում և հարակից վայրերում	31	8	39
Էդրումի վիլայեթը			
Երզնկա, սանջահ	1	76	77
Քեմախ, սանջահ	—	43	43
Քոնյա, կազա	—	47	47
Ռիֆատիյե, կազա	1	4	5
Փիլիսոփայի, կազա	—	6	6
Բայրութ, կազա	—	57	57
Քիլիկի վիլայեթը			
Գենջ, սանջահ	—	26	26
Մուշ, սանջահ	—	82	82

եկեղեցիները և վանքերը ըստ վիլայեթների, սանջահների և կազաների	Ֆերմանով	Առանց ֆերմանի	Ընդամենը
--	----------	------------------	----------

Խուսիսի վիլայեթը			
Չարսանջաք, կազա	—	31	31
Չարսանջաք, լրացուցիչ	—	22	22
Դևրսիմ, կազա	—	28	28
Էդիս, կազա	4	7	11
Էդիս, լրացուցիչ	—	17	17
Արաբկիր, կազա	1	2	3
Դիարբեհլի վիլայեթը			
(Սանջահներում, կազաներում և նահիյեներում)			
Փալու, կազա	1	37	38

Եկեղեցիները և վանքերը ըստ վիլայիթների, սանջաքների և կազանների	Ֆերմաներ	Ասանց ֆերմաներ	Ընդամենը
Սվազի վիլայիթը			
Կենտրոնում և Հապրիք, Կակկերի,	26	38	64
Ազիզիյի և Բիրունի կազաններում	5	—	5
Փերուն, Կազա	—	22	22
Կանդալ, Քենես և Դարհնաի	6	34	40
Կազաններում	—	20	20
Կաթաչի-Ետրքի, սանջաք	—	5	5
Դիվրիկ, կազա	5	7	12
Փերուն, կազա	5	34	39
Ամասիա, սանջաք	—	3	3
Քաջաու, սանջաք	5	38	43
Ջանիկ, սանջաք	—	4	4
Ջանիկ, լրացուցիչ	11	34	45
Անկարայի վիլայիթը			
Զոբուս, կազա	2	5	7
Ասթանա, Նահիյի	—	1	1
Նալլու-Խան, կազա	15	33	48
Կեստրիայի վիլայիթը			
Այդընի (Իզմիրի) վիլայիթը	13	10	23
Բզմիտի սանջաք	14	36	50
Էրմիշի (Արմաշ)	3	—	2
Ադանայում	4	31	35
Մառաշում	3	13	16
Ուրֆայում	3	3	6
Բուսուայում			
Կեմիք, կազա	3	4	7
Իրիքի, կազա	4	—	4
Ալլի վայրերում	5	6	11
Բոլի Կադիում	3	2	5
Քյոքեքիայում	3	4	7
Կոնիայի վիլայիթում	4	1	5
Կասթամունիի վիլայիթում	3	5	7
Ռոսդըրմա-Բայի Բեռնում	1	1	2
Պառադիսարի-Սահիբում	—	1	1
Էգի-Նեում	3	1	4
Մուսուլում	1	—	1
Բազդադում	1	—	1
Բիլեյիում	5	—	5
Փյուրսում	—	3	3
Պյեքադում	1	3	4
Հայերում	—	3	3
Կրաքուցի	2	2	4
Անքուրիայում	—	7	7

Ընդամենը ցուցակներում՝ 197 1073 1270

Ինչպես վերևում հիշեցինք, ցուցակներում չկան վանի վիլայիթում եղած հայոց եկեղեցիների ու վանքերի ցուցակները։ Հետևաբար այս աղյուսակում բերված գումարը պետք է լրացնել վանի Նահանգի եկեղեցիների և վանքերի թվով։ Նկատի ունենալով, որ վանի վիլայիթը ուներ հոծ հայ ազգաբնակչություն, այդ շրջանում եկեղեցիների ու վանքերի թիվը, պետք է ենթադրել, որ պակաս չէր կարող լինել էրզրումի վիլայիթում եղած մոտ 250 վանքներից և եկեղեցիներից։

Այսպիսով ստացվում է ավելի քան 1 500 եկեղեցի և վանք։

Կոնստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանի պաշտոնական ցուցակների ոչ լրիվ տեղեկություններով, առաջին համաշխարհային պատերազմից առաջ գոյություն ունեցած 1500-ից ավելի եկեղեցիների կարևոր մասը կառուցվել են հետևյալ հայկական և հայաբնակ նահանգներում.

Էրզրումում	77 վանք և եկեղեցի
Մուշում	82 վանք և եկեղեցի
Դիարբեքիում	108 վանք և եկեղեցի
Սեբաստիայում	89 վանք և եկեղեցի
Ադանայում	25 վանք և եկեղեցի
Տրապիզոնում	63 վանք և եկեղեցի
Ջանիկում (Սամսոնում)	43 վանք և եկեղեցի
Կոստանդնուպոլսում և շրջակայքում	47 վանք և եկեղեցի

Հիմնվելով պաշտոնական գրությունների՝ Պատրիարքարանի թաղերիների վրա, կարելի է հստակորեն ասել, որ Օսմանյան կառավարությունը ամենախիստ նսկողության տակ է պահել նաև հայկական եկեղեցիներն ու վանքերը։

Համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին, 1912—1913 թվականներին, Թուրքիայի բոլոր հայկական վանքերի և եկեղեցիների թվովն ու վիճակովը թուրքական կառավարության հատուկ ճշտաբանությունը տրոշակի կապ է ունեցել արևմտահայության ֆիզիկական ոչնչացման դիվային ծրագրի՝ մեծ եղեռնի ծրագրի հետ։

Մի ամբողջ ժողովրդի նախնիի ու քննչման հետ ոչնչացվեցին նաև այդ ժողովրդի դարերի ընթացքում ստեղծած տնտեսական, քաղաքակրթական բազմաթիվ և բազմատեսակ արժեքները, հուշարձանները, ինչպես նաև մշակութային այդ արժեքների մասը կազմող վանքերն ու եկեղեցիները։

Ս Տ Ա Մ Բ Ո Ւ Լ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

ԳՐԱՍՆԵՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասեն- յակի №-ը	Կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Ուղանդակության համառոտագիրը	Կազմողը	Պետք	Սեպարատոր- ային թվականը	Մաքրա- գրության թվականը
279	1089					1330 թ. փետրվարի 2	1330 թ. փետրվարի 4

Արդարադատության և դավաճանների բաժնի
միջոցառումներ

1330 թ. 22 հունվար թվականի և № 130 արդարադատության և դավաճանների միջոցառումների պատասխանն է։ Ստանդարտում և երեք քաղաքներում գտնվող 39 եկեղեցիներից 31-ը կայսերական հրամանով հաստատված, մնացած 8 եկեղեցիները կայսերական հրամանով հաստատված չեն։ Այդ մասին հարկ եղած տեղեկությունները ստացված լինելով, կայսերական հրամանով հաստատված եկեղեցիների անունները և կայսերական հրամանով չհաստատված եկեղեցիների անունները, իսկ կայսերական հրամանով չհաստատված եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող ցուցակը երկու օրինակով սրահետ ներկայացնում ենք Ձեր քարտուղարությանը և խնդրում ենք, համաձայն կանոնի, հարկ եղած կարգադրությունները անել։

Այդ մասին հրամանն ու ֆերմանը նորին վսեմություններին է։
(Հայերենով հավելված)
Գրված է 1915 թ. փետրվարի 2-ին։
(Ստորագրություն)

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

ԳՐԱՍՆԵՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասեն- յակի №-ը	Կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Ուղանդակության համառոտագիրը	Կազմողը	Պետք	Սեպարատոր- ային թվականը	Մաքրա- գրության թվականը
		Ստանդարտում և երեք քաղաքներում գտնվող և կայսերական հրամանով հաստատված եկեղեցիների անունները, կայսերական հրամանագրերը և թվականները ցուցնող ցուցակ։					

1. Ենի-Քյոյում Մայր Աստվածածին եկեղեցի, նորոգումը հաստատված է 1248 թ. ջեմադուլ-էվվելի սկզբին տրված կայսերական ֆերմանով։
- 2—3. (ջնջված են)։
4. Կանաքա (Ղ) կղզում Ս. Լուսավորիչ եկեղեցի, Հաստատված է 1270 թ. գիլհիջջե ամսի սկզբում տրված կայսերական հրամանով։
5. Թոփ-Կափուում Ս. Նիկողայոս եկեղեցի, նորոգման կայսերական հրամանը տրված է 1247 թ. ռամազան ամսի սկզբին։
6. Բյույուք-Գերեում Ս. Հռիփսիմե (աղավաղված) եկեղեցին, նորոգման մասին 1311 թ. ջեմադուլ-էվվելի 22-ի կայսերական ֆերմանը ստացված է։
7. Ռումելի-Հիսարում Ս. Մանզուրտ եկեղեցին, Այս եկեղեցու զանգակատան

- նորից կառուցման մասին 1939 թ. մուհարրեմ 5 թվական... (պակաս է)։
8. Էյուբում Ս. Նդիա եկեղեցին, 1247 թ. ջեվվալի սկզբում... (պակաս է)։
9. (ջնջված է)։
10. Ակյուզարում, Ենի-Մահալում Ս. Կարապետ եկեղեցին, նորոգման մասին երկու հրաման կա—1141 թ. սեֆեր ամսի վերջին և 1140 թ. սեֆեր ամսի կեսին։
11. (ջնջված է)։
12. Կանդիլիում Ս. Առաքելոց եկեղեցին, նորոգման մասին 1310 թ. մուհարրեմ ամսի 6-ի կայսերական ֆերմանը ստացված է։
13. Նդի-Կուլում հիվանդանոցի եկեղեցին, Այս եկեղեցին գտնվում է հիվանդանոցի այգում, եկեղեցու և հիվանդանոցի կա-

37. Բոյաչի-Քյոյուն Ս. Երից Մանկանց եկեղեցին, Ֆերմանը 1301 թ. ուերի-ուլ-էվ-վելի 19-ին:
38. Պայաթուն Ս. Հրեշտակապետ եկեղեցին, Նորոզման մասին 1104 թ. սեֆեր ամսի

- կեսին և 1104 թ. ջեմադ-ուլ-էվվելի կեսին երկու ֆերման կա:
39. էյուբուն Ս. Աստվածածին եկեղեցին, Նորոզման ֆերմանը 1256 թ.¹:

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ
ԿՐԱՍՆՆԵԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրառն- յալի Ն-ը	Կարգի Ն-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակու թյան համառոտագիրը	Կադմոզը	Պետը	Սեղորու- թյան թվականը	Մաքրա- գրու թյան թվականը
			Ստամբուլում և երեք քա- ղաքներում գտնվող կայ- սերական ֆերմանով չհաստատված եկեղեցի- քի վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող ցուցակ:				

1. Բողազ-Իլիում (Բոսֆոր), Իսթենիյեում Ս. Հովհաննես եկեղեցին, 1203 թ.:
2. Բեյքուլում, Ս. Նիկողայոս եկեղեցին, 1250 թ.:
3. Մաքրի-Քյոյ կաղայում, Մյուղաֆ Ազեր-լի գյուղի եկեղեցին, 1251 թ.:
4. Կարթալի կաղայում, Ալեմ-Գաղի հայ-կական գյուղում, Ս. Նշան եկեղեցին, 1251 թ.:
5. Կեդիք-Փաշայում, Ս. Հովհաննես եկեղեցին, 1292 թ.:
6. Բեյօղլուում (Բերա), Բանկալթիի հայ-կական գերեզմանատան Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1281 թ.:
7. Նարլը-Կափուում Ս. Հովհաննես եկեղեցին, 1223 թ.:
8. Կում-Կափուից գուրս Ս. Հարություն եկեղեցին, 1274 թ.:

Է Ը Ը Ր Ո Ւ Մ Ի Վ Ի Լ Ա Ց Ե Թ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ
ԿՐԱՍՆՆԵԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրառն- յալի Ն-ը	Կարգի Ն-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակու թյան համառոտագիրը	Կադմոզը	Պետը	Սեղորու- թյան թվականը	Մաքրա- գրու թյան թվականը
381	3020					1220 թ. փետրվարի 28	1220 թ. փետրվարի 28

Արդարադատության և դավանանքների
միեկիստություն

Երզնկայի սանջաքում գտնվող Ս. Փրկիչ եկեղեցին 1262 թ. վերջերին կայսերական հրամանով հաստատված լինելով, վերոհի-շյալ լիվայում և նրան հարակից գյուղերում գտնվող կայսերական հրամանով չհաստատ-ված 76 եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող մեկ օրի-

նակ ցուցակը սրա հետ ներկայացվում է և խնդրվում, համաձայն օրենքի, Ձեր անհրա-ժեշտ կարգադրություներ:

¹ Պարզվում է, որ սույն ցուցակից շնչված եկեղեցիների մասին կազմված և առանձին ցուցակ, որովհետև այդ 8 (շնչված) եկեղեցիները կայսերական ֆերմանով հաստատված չեն, որով այս ցուցակում մնում է 21 եկեղեցի, ինչպես նշված է պաշտոնական գրու-թյան մեջ:

ԵՐԶՆԿԱ

Յերմանգ

առանց ֆերմանի


1

76

Կցված է 1930 թ. փետրվարի 28-ի
N 2020 թաղրերին:

Յետմանի ք. կառուցված ք.

1. Բուն Երզնկայում գտնվող Ս. Նշան եկեղեցին, 1250 թ.:
2. Բուն Երզնկայում գտնվող Ս. Երրորդուգություն եկեղեցին, 1252 թ.:
3. (ցնցված է):
4. Բուն Երզնկայում գտնվող Ս. Սարգիս եկեղեցին, 1255 թ.:
5. Բուն Երզնկայում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցին, 1305 թ.:
6. Երզնկայի սանջաքի Միթենի գյուղում, Ս. Հակոբ եկեղեցին, հնուց:
7. Երզնկայի սանջաքի Խեյրեթեք գյուղում, Ս. Լուսավորիչ եկեղեցին, հնուց:
8. Երզնկայի սանջաքի Ախուրչուխ գյուղում, Ս. Մինաս եկեղեցին, հնուց:
9. Երզնկայի սանջաքի Ս. Օհան գյուղում, Ս. Օհան եկեղեցին, հնուց:
10. Երզնկայի սանջաքի Միթենի գյուղում, Ս. Եղիա եկեղեցին, հնուց:



Երզրումի վիլայեթի Զեմախ գավառի Բալոց եկեղեցիների մի մասի ցուցակը:

11. Երզնկայի սանջաքի Միթենի գյուղում, Ս. Խաչ եկեղեցին, հնուց:
12. Երզնկայի սանջաքի Գյուլչեքեն Փալանգա (?) գյուղում, Ս. Հոգևորի եկեղեցին, հնուց:
13. Երզնկայի սանջաքի Ղարմրի գյուղում, Ս. Գևորգ եկեղեցին, 1277 թ.:
14. Երզնկայի սանջաքի Ղարմրի գյուղում, Ս. Օգոստոս վանքի եկեղեցին, հնուց:
15. Երզնկայի սանջաքի Գյուլչեք գյուղում, Ս. Գևորգ եկեղեցին, 1256 թ.:
16. Երզնկայի սանջաքի Գյուլչեք գյուղի մոտ, Ս. Ստեփանոս եկեղեցին, հնուց:
17. Երզնկայի սանջաքի Գյուլչեք գյուղի մոտ, Ս. Թորոս եկեղեցին, հնուց:
18. Երզնկայի սանջաքի Գյուլչեք գյուղին մոտ, Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
19. Երզնկայի սանջաքի Մահմուդլու գյուղում, Ս. Ստեփանոս եկեղեցին, հնուց:
20. Երզնկայի սանջաքի Մահմուդլու գյուղի մոտ, Ս. Աստվածամայր եկեղեցին, հնուց:
21. Երզնկայի սանջաքի Փիզվան գյուղում, Ս. Նշան եկեղեցին, 1289 թ.:
22. Երզնկայի սանջաքի Փիզվան գյուղի մոտ, Ս. Գևորգ եկեղեցին, հնուց:
23. Երզնկայի սանջաքի Կարադիքին գյուղում, Ս. Հրեշտակապետ եկեղեցին, 1255 թ.:
24. Երզնկայի սանջաքի Վերին Զիֆթլիք գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
25. Երզնկայի սանջաքի Ստորին Զիֆթլիք գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
26. Երզնկայի սանջաքի Կարա-Քիլիսե գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
27. Երզնկայի սանջաքի Աքլե-քենդ գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
28. Երզնկայի սանջաքի Փիթարիչ գյուղում, Ս. Սարգիս եկեղեցին, հնուց:
29. Երզնկայի սանջաքի Խնձորի գյուղում, Ս. Աստվածամայր եկեղեցին, հնուց:
30. Երզնկայի սանջաքի Շխիլի գյուղում, Ս. Խաչ եկեղեցին, հնուց:
31. Երզնկայի սանջաքի Մեղուսիկ գյուղում, Ս. Նշան եկեղեցին, 1261 թ.:
32. Երզնկայի սանջաքի Մեղուսիկ գյուղում, Ս. Գևորգ եկեղեցին, հնուց:
33. Երզնկայի սանջաքի Կարա-Քուս գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
34. Երզնկայի սանջաքի Բյուլուք-Էքրեք գյուղում, Ս. Գևորգ եկեղեցին, 1245 թ.:
35. Երզնկայի սանջաքի Զաթ գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, 1275 թ.:
36. Երզնկայի սանջաքի Մոնլու գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, 1275 թ.:

37. Երզնկայի սանջարի Ռում-էքրեք գյուղում, Ս. Կիրակոս եկեղեցին, 1245 թ.
38. Երզնկայի սանջարի էրքան գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, 1274 թ.
39. Երզնկայի սանջարի Գյուլնեսիք գյուղում, Ս. Թադեոս եկեղեցին, հնուց:
40. Երզնկայի սանջարի Գյուլնեսիք գյուղի մոտ, Ս. Կարապետ եկեղեցին, հնուց:
41. Երզնկայի սանջարի Դաջրաք գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, 1235 թ.
42. Երզնկայի սանջարի Ս. Լուսավորչի Չարաբանաց վանքում գտնվող հայոց եկեղեցին, հնուց:
43. Երզնկայի սանջարի Զորս գանձ վանքում² հայոց եկեղեցին, հնուց:
44. Երզնկայի սանջարի Ս. Գեորգ վանքում, Ս. Գեորգ եկեղեցին, հնուց:
45. Երզնկայի սանջարի Ս. Ներսես Հայրապետի վանքում, հայոց եկեղեցին, հնուց:
46. Երզնկայի սանջարի Ս. Կիրակոս վանքում, հայոց եկեղեցին, հնուց:
47. Երզնկայի սանջարի Ս. Հակոբ Մծրնա հայրապետի վանքում, հայոց եկեղեցին, հնուց:
48. Երզնկայի սանջարի Ս. Շողակաթ վանքում, հայոց եկեղեցին, հնուց:
49. Երզնկայի սանջարի Միամոր Ս. Կարապետ վանքի եկեղեցին, հնուց:
50. Երզնկայի սանջարի Ս. Պողոս-Պետրոս վանքի հայոց եկեղեցին, հնուց:
51. Երզնկայի սանջարի Ս. Նիկողայոս վանքի հայոց եկեղեցին, հնուց:
52. Երզնկայի սանջարի Սըրբլի (?) Ս. Թորոս վանքի հայոց եկեղեցին, հնուց:
53. Երզնկայի սանջարի Ս. Թադէոս առաքյալի վանքի հայոց եկեղեցին, հնուց:
54. Երզնկայի սանջարի Խնդրակատար Ս. Աստվածածին վանքի եկեղեցին, հնուց:
55. Երզնկայի սանջարի Ս. Թադեոս Առաքյալի վանքի եկեղեցին, հնուց:
56. Երզնկայի սանջարի Ս. Աստվածածին վանքի եկեղեցին, հնուց:
57. Երզնկայի սանջարի Օրի գյուղում, Ս. Մինաս եկեղեցին, հնուց:
58. Երզնկայի սանջարի Օրի գյուղում, Ս. Թորոս եկեղեցին, հնուց:
59. Երզնկայի սանջարի Ս. Գեորգ վանքի հայոց եկեղեցին, հնուց:
60. Երզնկայի սանջարի Քիլիշի գյուղի Ս. Թորոս եկեղեցին, հնուց:
61. Երզնկայի սանջարի Կոմքիզ գյուղի Ս. Բաթթողիմեոս եկեղեցին, հնուց:
62. Երզնկայի սանջարի Կոմքիզ գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին, հնուց:
63. Երզնկայի սանջարի Քիլ գյուղի Զուխտակ Հայրապետ (?) վանքում գտնվող հայոց եկեղեցին, հնուց:
64. Երզնկայի սանջարի Ս. Քառասուն Մանկունք եկեղեցին, հնուց:
65. Երզնկայի սանջարի Ռում-էքրեք գյուղի Ս. Անարծաթ վանքի հայոց եկեղեցին, հնուց:
66. Երզնկայի սանջարի Մահսուղլի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
67. Երզնկայի սանջարի Միթենի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց:
68. Երզնկայի սանջարի Դինքերթիք գյուղի Ս. Գրիգոր եկեղեցին, հնուց:
69. Երզնկայի սանջարի Փալանգա գյուղի Ս. Գայանե վանքի հայոց եկեղեցին, հնուց:
70. Երզնկայի սանջարի Ս. Քրիստափոր վանքի հայոց եկեղեցին, հնուց:
71. Երզնկայի սանջարի Ս. Ստեփանոս վանքի հայոց եկեղեցին, հնուց:
72. Երզնկայի սանջարի Ս. Մինաս վանքի հայոց եկեղեցին, հնուց:
73. Երզնկայի սանջարի Փեզվան գյուղի Ս. Եղիա վանքի հայոց եկեղեցին, հնուց:
74. Երզնկայի սանջարի Էրզան գյուղի Ս. Կարապետ վանքի եկեղեցին, հնուց:
75. Երզնկայի սանջարի Թիլ գյուղի Ս. Կաթողիկե եկեղեցին, հնուց:
76. Երզնկայի սանջարի Կալեջիք գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին, հնուց:
77. Երզնկայի սանջարի Խեզուրթի գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, հնուց:

² 43—56 համարներում «վանք» բառը զրված է հայերեն:

ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՅՋԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՋՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ՝

Այս բոլորի մասին առաջինը վկայել է ԺԸ դարի հեղինակ Պրայը⁴¹, Մինաս եպիսկոպոսի մասին ցանկանում ենք անել մի քանի անհրաժեշտ ճշտումներ՝ Վերջերս գոկտ. Զ. Օրենքինսկին հայտնել է այն կարծիքը, ըստ որի իբր գեոհս 1669—1672 թվականներին Մինասը Տրանսիլվանիայի Բիստրիցա քաղաքում է բնակվել բաղամթիվ հայ եկեղեցականների և պաշտոնյաների հետ և կամ մինչև 1672 թվականը, ինչպես դարձյալ գրում է նա. «պատմականորեն ստույգ է, որ այս քաղաքը կրնակեր»⁴², մինչդեռ, ինչպես երևում է նույն Մինաս եպիսկոպոսի ձեռքով 1676 թվականին Տրանսիլվանիայի Զուրբով քաղաքում նորոգված ձեռագրի կապակցությամբ գրած իր հիշատակարանից, Ժողովուրդի կեսը մեկնելուց հետո Տրանսիլվանիա, ինք դեռ չէր հրաժարվել վանքից (նկատի ունի անկասկած Սուլավայի Զամբա վանքը—Ս. Ք.): Սակայն Մինաս եպիսկոպոսը հետագայում, միայն 1676 թվականին, կրկնակի կողոպտվելով ասպատակողների կողմից, մերկ և դիտարաց մի մորթի կապած,

հարկադրվում է փախչել Տրանսիլվանիա և միանալ իր ժողովրդին⁴³,

Թե ինչքան դժվար է եղել Մինաս եպիսկոպոսին համոզելու գործը, երևում է նաև այն փաստից, որ նրան դավանափոխ անելու առիթով Մուլդովայի հայերի երբեմնի առաջնորդին լվով էր ուղեկցել ոչ այլ ոք, եթե ոչ լեհաստանի հայ կաթողիկ թեմի առաջնորդ Վարդան Հունանյանը⁴⁴, Ցարդ ուսումնասիրողների աչքից վրիպած մի այլ փաստ վկայում է, որ Վրդարյանը Մինասի դավանափոխ լինելու տարին՝ 1686 թվականին դարձյալ լվովում է եղել և Մինաս եպիսկոպոսի համար մի պարտավորագրի է գրի առել⁴⁵, Այստեղից էլ շատ հավանական է կարծել, որ Տրանսիլվանիա գաղթող մուլդովահայերի հոգևոր առաջնորդ Մինաս եպիսկոպոսը փաստորեն բռնի տարվել է լվով 1686 թվականին Վարդան Հունանյանի և Օքսենտ Վրդարյանի միջոցով և դավանափոխվել յատին հոգևորականների ներկայությամբ, Մինասը նշված դեպքից հետո հազիվ մի քանի ամիս պետք է ապրած լինի, քանի որ, ինչպես նշում է Ստեփանոս Ռոշքան, Մուլդովայի հայոց եպիսկոպոսը նույն 1686 թվականին

⁴⁰ Եսրուկակված «էջմիածին» ամսագրի 1964 թվականի № ԺԲ-ից.

⁴¹ Pray G., «Dissertationes historico-criticae...», Vindobonae, 1775, p. 171.

⁴² Գոկտ. Զ. Օրենքինսկի, «Լեհահայերը և անոնց Անդրեաս արքեպիսկոպոսը Ցաղովիցի մեջ» (Քրդմ. Հ. Հ. Ոսկյան), «Հանգիստ ամսորեայ», 1963, էջ 90—91, 102.

⁴³ Հ. Ղ. Ալիշան, «Կամենից», էջ 196—197.

⁴⁴ Նույն տեղում, էջ 127.

⁴⁵ Նույն տեղում, էջ 199, Հ. Վ. Ըսակարյանը ևս նշում է, որ Մինասը Օքսենտի հետ լվով է դնացել (տե՛ս նրա նշված աշխատությունը, էջ 384).

նին վախճանվում է⁴⁶, նա թաղվում է Բիստ-րիցայի ումիսնական գերեզմանոցում⁴⁷ և ոչ թե լվովում, ինչպես գրում է դոկտ. Զ. Օրբեր-դինսկին⁴⁸:

Մինասի դավանափոխությունը մեծագույն հաջողություններից մեկն է համարվել և մեծ հույսեր են կապել նրա հետ Մոլդովայում միացող անհոլով հայկական թեմը ևս միաց-նելու համար: Այդ է վկայում այն, որ Մի-նասի դավանափոխության մասին հատուկ արձանագրել է Վարդան Հունանյանը Եվդո-կիայի հայ կաթողիկոսների գրած իր ընդար-ձակ «Թուղթ քաջալերական»-ում: Ահա Վ. Հունանյանի գրած տողերը.

«Մինաս վարդապետ էվդոկացի, Զիրիֆ-տար օղլու մականունանցեալ, եպիսկոպոս Պուլտանու, եկն ընդ իս ի Լեօպոլիս, ի դառ-նալ իմում, և առաջի գարտինային Փալապիլի-նի Լէկադի Փափին, որ յայնժամ էր ի Լեօպո-լիս, արար զգաւանութիւն հաւատոյ կաթո-ղիկէի յամի Տեառն ՌՈԶԶ-ին (1686): Եւ ի թվ. Հայոց ՌՃԼԵ-ին (1686)»⁴⁹.

Ստեփանոս Ռոշեան իր ժամանակագրու-թյան մեջ համարյա սորացնելով Մինասին, գրում է, սակայն, որ ինք 1680 թվականին նրանից չորս աստիճան է ստացել և ականա-տես է եղել նրա ջերմեռանդությանը⁵⁰: Այս թվականը եթե գրչության սխալ չէ (1680-ի տեղ կարող էր լինել 1686 թ.), պետք է կար-ծել, որ Ռոշեան հավանաբար Տրանսիլվանիա վաղ դադթողներից մեկի որդին էր և կամ Մոլդովայից Լեհաստան և ապա Տրանսիլվա-նիա ապաստանող մի անձնավորություն: Որ Ռոշեան ծնվել էր Կամենիցում, այդ մեզ հա-ղորդում է լեհահայ պատմիչ Բարոնյը⁵¹, սա-կայն, որ նա կապ ուներ Մոլդովայի հայերի հետ, այդ վկայում է իր Ռոշեա տոհմանունը (որոշա ումիսներեն նշանակում է «կար-միր»), որը ումիսնական ծագում ունի⁵², և այն, որ նա 1729 թվականին, երբ այցե-լել է Տրանսիլվանիայի հայ կենտրոնները,

գրում է, որ եղել է այնտեղ նաև իր ազգա-կանների տեսություն⁵³, Հավանաբար Ռոշեան հետաքալում Լեհաստանում հարեց կաթոլի-կության, քանի որ Մինասը անվիճելի է, որ 1680 թվականին կաթոլիկության հարած չէր կարող լինել, որպեսզի Ռոշեային հիշյալ հոգևոր չորս աստիճանները տար: Հայտնի է, որ Վրզառյանը իր կաթոլիկական քարոզու-թյունը Տրանսիլվանիայում սկսել է 1684 թվականին, երբ նշեցինք, որ նրան ամենից ավելի ընդդիմացողներից մեկն է եղել Մի-նաս եպիսկոպոսը: Մենք նույնպես կարծում ենք, որ 1687 թվականին Տրանսիլվանիայի Զուրջով քաղաքում հիշվող կաղմարար Ստե-փանոս դպիր Կամենիցացին⁵⁴ նույն Ռոշեան պետք է լինի: Որ նա կաղմարարությամբ ևս զբաղվել է, այդ երևում է նրանից, որ նույն Ռոշեան 1707 թվականին կաղմել է մի այլ ձեռագիր Կամենիցում⁵⁵:

Մինաս եպիսկոպոս Զիրիֆտար օղլուի կա-պակցությամբ անհրաժեշտ է կատարել ևս մեկ ճշտում: Պատմագրության մեջ տիրել է այն կարծիքը, ըստ որի Տրանսիլվանիա գաղթող Մինաս եպիսկոպոսը և 1649 թվա-կանին Սուլավայում գրված⁵⁶ և այժմ Բուխա-րեստում պահվող ձեռագիր մի Ավետարա-նում հիշվող Մինասը, որը դարձյալ Մոլդո-վայի հայոց առաջնորդն է հանդիսացել, իբր նույն անձնավորությունն է եղել⁵⁷, Ժա-մանակի փաստերի ուղադիր ընկերուհի, սակայն, մեզ բերում է այն հզրակացության, որ 1676 թվականին Մոլդովայից Տրանսիլ-վանիա գաղթող Մոլդովայի հայոց թեմի ա-ռաջնորդ Մինաս Զիրիֆտար օղլու կոչված եվդոկացի եպիսկոպոսը ոչ մի կապ չուներ 1640-ական թվականներին դարձյալ Մոլդո-վայի հայոց թեմի առաջնորդ Մինասի հետ: Տրանսիլվանիա գաղթող Մինասը հայոց ա-ռաջնորդ կարող էր դարձած լինել ոչ շուտ քան 1669 թվականը, քանի որ դեռ նույն թվականին Պիտուն իբրև Մոլդովայի հայոց

⁴⁶ «Կամենից», էջ 144:

⁴⁷ Գ. Գովրիկյան, «Տրանսիլվանիո հայոց մետրապո-լիսը», էջ 119—120:

⁴⁸ Գոկտ. Զ. Օրբերդինսկի, Նշված աշխատությունը էջ 91:

⁴⁹ «Կամենից», էջ 127: Մաշտոցի անվան Մատե-նադարանի ձեռագիր № 9748, էջ 80ր:

⁵⁰ «Կամենից», էջ 144:

⁵¹ Sadok Baracz, «Rys Dziejow Ormianskich.. Tamopol, 1869, p. 193.

⁵² Szongott Kristof, «A Magyarhoni őrmény csa-ladok genealogiaja», Szamosújvár, 1898, p. 152. Ռումիսներին Ռոշեա (Roșca) նշանակում է կարմիր մաշ (տե՛ս Lazar Sămeanu, «Dicționar universal al limbii române», ed. VI, 1929, p. 553.

⁵³ Գ. Գովրիկյան, Նշված աշխատությունը, էջ 52, 74—75 և այլն:

⁵⁴ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 6485:

⁵⁵ Լ. Լ. Տաշյան, «Ճուշտակ ձեռագրաց», էջ 882:

⁵⁶ Frédéric Macler, «Rapport... en Roumanie...», p. 52.

⁵⁷ Chr. Lukacs, «Historia...», p. 66: Գ. Տաե, Նշված աշխատությունը, էջ 33—Լ. Լ. Տաշյան, «Ճուշտակ ձեռագրաց», էջ 1118: Ա. Զամիլյան, «Հայոց եկեղեցու պատմություն», Թ մասն, Նոր Նախիջևան, 1899, էջ 125 և 128: Ն. Լորգա, «Armenii și Români...» p. 68 և այլն: Վերջերս, անկախ մեզանից, այս հարցում ճիշտ հզրակացության է հանգել դոկտ. Զ. Օրբերդինսկին (տե՛ս Նշված աշխատությունը, էջ 80):

թեմի առաջնորդ հիշատակում է իսահակ Եպիսկոպոսին⁵⁹, իսկ նախորդ Մինասը զեռ սրանից ավելի քան տասը տարի առաջ զոհ գնացել Սուլավայում տեղի ունեցող ասպատակութունների ժամանակ⁶⁰։

Պետք է նշել սակայն, որ Մինասի և հայոց մի մասի կաթողիկոսության հարելուց հետո իսկ, դեռ Տրանսիլվանիայի հայերի մի կարևոր մասը, իր հնագույն դավանութունը շարունակեց պահպանել։ Մինասի մահից հետո Օքսենտը Լվովի արքեպիսկոպոս Վարդան Հունանյանի կողմից նշանակվեց եպիսկոպոսական փոխանորդ և շարունակեց մնացյալ հայերին ևս կաթողիկոսացնելու գործը։ Ըստ Գ. Գովրիկյանի, այդ ժամանակ ադարձի գործը դյուրացավ, որ քան զոր հառաջացավ ու ավելի տարածություն ստացավ, Եկեղեցականաց այն մասն ալ, որ մինչև հիմակ ուղղափառ հավատքին սկզբունքներն ընդունելու կրնդդիմանար, հայտնեց, թե՛ Հռոմ գահուն հետ կմիանա⁶¹։ Սրանից հետո է, որ աշխատացելու ժողովը Մատուլ գլխավոր քահանան ութ ուրիշ քահանայի հետ Լեմպերկ խրկեց, որոնք Վարդան Հունանյանի առջև հանուն ըստ Դրանսիլվանիո Հայոց, Ս. Հոր հավատարմութուն խոստացան, Խնդրեցին միանգամայն իննովկենտիս ԺԱ պապին, որ իրենց վրա եպիսկոպոս զին զՎրդարյանն⁶²։ 1689 թվականին պապը մահանալով միայն, նրա հաջորդ Աղեքսանդր Ը պապը Օքսենտին 1690 թվականի հոկտեմբերի 3-ին հայոց առաքելական փոխանորդ և երեսփոխան անվանեց, Պապը իր գրության մեջ նշում է, որ կամենալով ռոգնել Մուղովայից Տրանսիլվանիա գաղթող հայերին, Օքսենտին պաշտոնով ուղարկում է՝ այնտեղ մի շարք լիազորութուններով, ռ... զի ընդունիցին զթեզ ամենայն պատուով, և մեծարանօք, զոր կարգեցաք ի քործ առաքելական երեսփոխանութեան, գործակալութեան, և վեքիութեան,

⁵⁹ Եթե մի Թեոֆիլ...», էջ 10—11։

⁶⁰ Գեոլայի Թանգարանում այժմ պահվող մի ձեռագրում, № 2 (18), գրված 1659 թվականին Սուլավայում, Ավետիք սարկավադի կողմից, գրելը հիշատակարանում գրում է. «Եմ որդի Մինաս եպիսկոպոսի Սէրովցի, որ զինքն զազախնին սպանեցին։ Գովրիկյանի մոտ այս պարբերութունը սխալ է բերված. «Ձեռամբ... Անտիգ օտարկապի և իմ որդի Մինաս եպիսկոպոսի Սէրովցի, որ զինքն զազախնին սպանեցին» (Շիրանսիլվանիո Հայոց մեարապոլիսը, էջ 336)։ Այստեղից էլ դուրս է գալիս, որ իբր Ավետիքի որդին է Մինասը, այնինչ հակառակն է հղել։ Որդիք այստեղ պետք է հասկանալ անշուշտ ճշգրտորդ որդիք իմաստով։

⁶¹ Գ. Գովրիկյան, նշված աշխատությունը, էջ 120—121։

⁶² Նույն տեղում, էջ 121։

այսու մերովս կոնգակաւ աւանդեցնալ։ Եւ ձանալիցն զթեզ ինքեան հովիւ և առաջնորդ...»։ Կոնգակի վերջում պապը սահմանում է, որ քուրդը Օքսենտին հնազանդ և ձեռնտու լինեն, իսկ իր հակառակորդներին և անհնազանդ եղող մարդկանց նկատմամբ սահմանելի վճիռները և պատիժները պապը ևս պատրաստ է նույնպես հաստատելու. «զվճիռս, զպատիժս, զորս դու ըստ իրաւանց և կանոնաց սրբոց սահմանիցես կամ հրատարակիցես, ընդդէմ հակառակաց քոց. և արանց անհնազանդից, մեք ևս զայնոսիկ հաստատելոց եմք...»⁶³։

Վրդարյանի կյանքի և գործունեության սկզբնական շրջանի վերաբերյալ շատ ավելի ուշագրավ են հայերի կողմից Լեոպոլդ կայսրին գրված այն աղերսագրում եղող տողերը, որոնք ինքնակենսագրական արժեք ունեն, քանի որ աղերսագիրը անպայման պետք է որ գրված լինի նույն ինքն Վրդարյանի ձեռքով։ Այդ հաստատվում է նույն գրության մեջ նույն Վրդարյանի մասին գրված նվաստացուցիչ տողերով⁶⁴, որոնք միայն թույլ կարող էր տալ աղերսագրի հեղինակ հանդիսացող Վրդարյանը։ Աղերսագրից մեջ ենթերևում Վրդարյանի կյանքին վերաբերող հետևյալ պարբերությունը. «1676-ին, Սուլավայից Պոթուշան (իմա՝ Ռուտշան) հասարակության դատավորին, Լուսիկ Վերդիրես-զա վաճառականին որդին, Ավքսենտիս, որ ավելի մեծ սեր ուներ դիտությանց քան ապրանքներու, և որ մայրենի լեզվին մեջ ինքզինք կատարելապես կրթելն ետև, լատին դիտութունները հատկացնելու նպատակով սաստիկ փութով սորվելու սկսավ, ծնողաց տունը թողլով՝ Լեմպերկ քահանայապետական վարժարանը մտավ։ Բայց հայրն այս որդյան ամենևին զիշանել չուզելով՝ դինքը ժուրճով բերել տվավ. ուր որ—որովհետև ինքն ալ զեռ Եկեղեցիում էր (ընդգծումը մերն է—Ս. Ք.)— հայ մուրթությանցը վրա իմաստությամբ լուց, Որպեսզի հորն դիտավորութունը—որ զինք ամեն կերպով ճուրճվցի օրինորդի մը հետ ամուսնացնել կուղեր—պարպի հանե, ծնողացը տնեն նորեն Լեհաստան փախավ, և ասկե Մարթելի լեհական արքունյաց քով գտնվող քահանայապետական նվիրակին խորհուրդովը Հռոմ գնաց։ Ուր հերձվածեն հանդիսական կերպով հրա-

⁶³ Նույն տեղում, էջ 122—123։

⁶⁴ Աղերսագրում գտնում ենք հետևյալ տողերը. «Այս միությունը, չէ թե պարզապես Ավքսենտիս Վրդարյանի—միայն անկասկած գործիքի և անօգուտ ծառայի (ընդգծումը մերն է—Ս. Ք.)—հապա ամենակարողին գործը...» (Տե՛ս Գ. Գովրիկյան, «Հայ յնդիսաբնութապետ», Բ, էջ 167)։

ժարեկեն ետև՝ տարածման հավատո Ուրբանյան վարժոցին աշակերտեցավ, Քանի մը տարի հոն մնալով՝ երբ սրբազան գիտությունները կատարելապես սորվեցավ, առաջնորդները՝ դերիտասարդ քահանան իբրև առաքելական քարոզիչ՝ իր ազգականներն ու բոլոր հայերը դարձնելու համար Դրանսիլվանիա իրկեցին, հանձնելով իրեն որ ամեն ջանք ունենալու և հայերը բոլոր արագ շոտմեական Ս. Եկեղեցւոյն հետ միացնեն⁶⁴ (ընդգծումը մերն է—Ս. Ք.):

Այսպիսով Ուրբանյան քարոզչական վարժարանի ղեկավարութունը, հանձին Վրդարյանի, գտել էր քարոզչական գործի լավագույն թեկնածուին և պետք է ասել, որ ղեկավարութունը չսխալվեց այդ ընտրության մէջ: Ուշագրավն այն է, որ, ինչպես ասված է նույն աղերսագրում, Վրդարյանը 1684—1690 թվականներին ավարտած էր համարում Տրանսիլվանիայի հայերին կաթոլիկացնելու գործը: Սակայն հետագայի ղեկները ցույց տվեցին, որ իրականում այդ միացումը առերես է եղել և հիշյալ թվականից հետո, դեռ կես դար շարունակ, բռնի միջոցների օգնութեամբ, պայքար է մղվել հայերին վերջնականապես կաթոլիկացնելու համար:

3. ՄՈՂԴՈՎԱՅԻ ՀԱՅՅԵՐԻՆ ԵՎՍԻ ԴԱՎԱՆԱՓՈՒՆ ԱՆԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԶԱՆՈՂՈՒՄԸ

1672—1684 թվականներին Մոլդովայից շուրջ 10 000 հայեր, և կամ, ըստ ոմանց, 3000 հայ ընտանիք էին գաղթել Տրանսիլվանիա: Սակայն և այնպես փաստերը անվիճելիորեն վկայում են, որ հիշյալ գաղթից հետո Մոլդովայի հայ գաղութը չթաքալվեց, ջնայած այն բանին, որ ժէ դարի վերջին տասնամյակներում շատ ծանր էր դրութիւնը Մոլդովայում, քանի որ անվերջ պատերազմները, սույն ու համաճարակը, կոդուպուտը և իրար հաջորդող պայքարը Մոլդովայի զահի շուրջ, ծայր աստիճան դժոգակ վիճակ էին ստեղծել երկրում, այնուամենայնիվ հայերը շուտով վերսկսում են կազմակերպել իրենց հնազույն գաղթավայրերը: Հայերի վերստին հավաքմանը նպաստում էին նաև Մոլդովայի տվյալ շրջանի մի շարք իշխանների կողմից հայերին տրված արտոնութունները: Մոլդովայի քաղաքների զարգացմանը դեռևս ԺԴ դարից նպաստող, հատկապես առևտրին ու արհեստագործությանը զարկ տվող հայերի գաղթը չէր կարող իր զարգասական ազդեցութիւնը չունենալ երկրի կյանքում: Անշուշտ այդ է պատճառը, որ

1677 թվականի ապրիլի 21-ին իր հրովարտակով Մոլդովայի Անտոնիե Ռուսետ (1675—1678) իշխանը Մոլդովայի հայոց եպիսկոպոսարանին առանձնաշնորհումներ է տալիս և նշում, որ անհրաժեշտ է սրանից հետո կանչել շատ հայերի թուրքական երկրից կամ լեհաստանից և նրանց ազատել հարկերից⁶⁵, ժողովրդական երկիրն ասելով, իշխանը, անշուշտ, բացի բուն թուրքիայից, նկատի ուներ նաև Տրանսիլվանիան՝ ապաստանած հայերով, քանի որ այդ երկիրը տվյալ թվականին դեռևս գտնվում էր թուրքական տիրապետութեան տակ: Իշխանը, նույն ժամանակ, ծանրագույն պատժի սպառնալիքով, կարգադրում էր քաղաքացւոյն պաշտոնատարներին չնեղել հայերին, Հայերին նույնպիսի առանձնաշնորհումներ են տալիս նաև հետագա իշխանները: Մոլդովայի Անտոնիե Կանտեմիր իշխանը, 1705 թվականի հունիսի 8-ին, բոլոր տեսակի հարկերից ազատում է Յաշի հայոց երկու եկեղեցիների հոգևոր պաշտոնյաներին⁶⁶, նույն առանձնաշնորհումը հաստատում են նաև հաջորդ իշխաններից Միհայ Ռակովիցը (1707 թ. նոյեմբերի 18-ի հրամանով)⁶⁷, Ն. Ալեքսանդր Մավրոկոորտադը (1710 թ. մարտի 15)⁶⁸, Դիմիտրիե Կանտեմիրը (1711 թ. դեկտեմբերի 18)⁶⁹, Գրիգորե Գհիկան (1727 թ. օգոստոսի 17)⁷⁰ և ուրիշները: Սակայն մինչև ժէ դարի վերջը խաղաղութիւնը չէր հաստատված Մոլդովայում: Պետք է նշել, որ նույն ժամանակաշրջանում Վալաքիայում ևս նպաստավոր չէին պայմանները, Հավանաբար այս պատճառների և Տրանսիլվանիա զնալու մտադրութեան հետևանքով է, որ տվյալ ժամանակաշրջանի մոլդովական փաստաթղթերում մեզ հանդիպում են նաև հայերի կողմից մի շարք հողամասերի և տների վաճառքի գործարքներ⁷¹:

Սակայն, հակառակ տիրող աննպաստ պայմանների, Մոլդովայում դեռևս հայեր էին ապրում: Այդ շրջանից մեզ են հասել մի շարք հայերեն ձեռագրեր, որոնք արտագրվել են հիշյալ վայրում: Այսպես, հայերեն ձեռագրեր են գրվել 1684 թվականին Իորայիում (Բրուլիա)⁷², 1697 թվականին Քիլիում

⁶⁵ Teodor Bălan, „Documente Bucovinene“, vol. 4, p. 237.

⁶⁶ „Ion Neculce“, Iași, 1923, p. 116.

⁶⁷ Նույն տեղում, էջ 118.

⁶⁸ Նույն տեղում, էջ 119.

⁶⁹ Նույն տեղում, էջ 119.

⁷⁰ Նույն տեղում, էջ 120.

⁷¹ Նույն տեղում, էջ 176—177.

⁷² Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր թ. 6582.

⁶⁴ Գ. Գովրիկյան, նշված աշխատութիւնը, էջ 165—

Այստեղ ընդունում ենք մի հասկացած կարիքների վերահիշյալ կանոնադրությունից.

«Նախ ի փառս ամենայն Սրբոց Երբորդութեան Հօր և Որդւոյ և Ոգւոյն Սրբոյ, երկրորդ ի յիշատակ ապագայից մերազնեայց և երրորդ վասն կառավարութեան եկրայրակցութեան երկրասարգաց, այսինքն կտրեվորացն Պաշտու, Սաշու և Ուսմանու, ի ժամանակս ընդհանրոյ Հայրապետին և սրբազան փափին Տեառն Ազգասանդուրու և Հայոց կաթողիկոսին Տեառն Եղիազարու և փոխանորդութեան առաջնորդին տեղւոյն Սէշով վանիցն Տեառն Օգոստինոսի մակ[անուանեալ] Վրժնագու վարդապետի և յաւագեթնութեան Տեառն Եղիայի մակ[անուանեալ] Մնարուկին...»:

Նույն կանոնադրության վերջում գրված է. «... և մեք ևս աստուածային օրհնութեամբն և նախախնամութեամբն օրհնեմք և հաստատեմք զպրաստաւաս այս յանուն Հօր և Որդւոյ և Ոգւոյն Սրբոյ և խոստանամք սիրելի լինիլ, սիրեցելեաց նորա և թշնամի թշնամեաց նորայ, Ուստի և ի հաստատութիւն յիշատակարանիս դրի ևս Օգոստինոս» [վարդապետ] Վ[րժնագու] դիմ մոհրն և պիմ ձեռագիրն ի վերայ սորա, թվ. ՌՃԼԲ (1690) սեպտեմբեր ԺԲ (12), ի Ճուրճով Սնմիպուշն»⁸⁰:

Այս անհաջողությունից հետո, հետագա տասնամյակներին Տրանսիլվանիայի հայերի մոտ կաթողիկական քարոզչության դեմ մղվող պայքարը շարունակվում էր, այդ պատճառով էլ Վրդարյանը չէր կարող, դեռևս գաղթող հայերին կաթողիկ լղարձրած, զրադվել նաև րուն Մուղովայի հայերի օգարձա-ի հարցով, լվովի հայ կաթողիկ թեմը պարդ տնսնելով, որ րացի Վրդարյանից, այդ շրջանում Տրանսիլվանիայում նույնիսկ կաթողիկության հարած հոգևորականները այնքան էլ վստահելի չեն կարող համարվել, ուստի նկատի ունենալով նույն Վրդարյանի դժվարին կացությունը, Մուղովայում կաթողիկական քարոզչության գործը կրկին իր ձեռքն է վերցնում:

1672—1684 թվականներին, Մուղովայի հայերի գաղթի ժանր օրերին, տեսնում ենք, որ Վարդան Հունանյանը իր օղնական Աստվածատուր եպիսկոպոս ներսեսովիչին է ուղարկում Մուղովայ նա կեդպուղ կայսրից և Ավգոստոս թագավորից հանձնարարագրեր

առնելով, ներկայացավ Դուկա իշխանին, որպեսդի հայ եպիսկոպոսությունը, որ թափուր է մնացել, լվովի թեմին միացնի⁸¹, Ամենայն հավանականությամբ ներսեսովիչը Մուղովայ գնացած պիտի լինի Իուկայի երկրորդ իշխանության ժամանակ (1678—1683), Միքիլ ավելի ուշ, նույն ներսեսովիչը կրկին Մուղովայ է գալիս և տեղի հայերին հոռմեագավան դարձնելու նպատակով ներկայանում է երկրի իշխան Անտոհ Կանգեմիրին (1695—1700, 1705—1707)⁸², ինչպես նշում է Դանը, նույն ներսեսյանը, որ եպիսկոպոս էր «Տրայանուպոլսոյ ի կողմանս անհաւատից», Մուղովայի իշխանի մոտ ներկայացել էր կեդպուղ Ա կայսրից, կհաստանի Օգոստոս Բ թագավորից և Առաքելական Աթոռից, այսինքն պապից, «որ ամենայն կերպով կջանար Մուղովայի հայերն ի միություն բերել», հատուկ թղթեր բերելով, ներսեսյանի դիտավորությունն էր իշխանից հրաման ստանալ, որ Մուղովայի արևելյան հայ եկեղեցիները լվովի կաթողիկ հայ արքեպիսկոպոսի իրավասության ենթարկվեն, Բայց նրա փորձերը անհաջողությամբ վերջացան⁸³, Պարզ է, որ րացի Մուղովայի հայերի կոպված ընդդիմությունից, երկրի իշխանը ևս, իրեն հունագավան, երբեք չէր կարող ցանկալ, որ իր երկրում ապրող մի հնամենի և վստահելի ազգաբնակչություն կաթողիկ դառնար, այդ նշանակում էր նաև հեղինակության անկում հանդիպ կաթողիկական քարոզչության մարմացով տարված ալատրիական և լեհական պետությունների և պապի, Ինչպես երևում է հիշյալ Անտոհ Կանտեմիր իշխանի եղբայր, հայտնի պետական և դարձյալ Մուղովայի իշխան Իիմիտրին Կանտեմիր (1693, 1710—1711) իշխանի մի աշխատությունից, Մուղովայի հայերը այս շրջանին ունեին տեղական ուղղափառ եկեղեցիների մեծության և գեղեցկության շղիջող տաճարներ և վալելում էին իրենց դավանությունը դործադրելու ազատություն⁸⁴:

Կհահայերի կողմից սրբագրված և կամ բուրրովին լատիներենից թարգմանված եկեղեցական գրքերը, որոնք, ինչպես տեսանք, մեծ տարածում էին դուել Տրանսիլվանիայի հայ կաթողիկների մոտ, մուտք էին գործում նաև Մուղովայի հայկական եկեղեցիներում:

⁸¹ Ձ. Որեդիկսկի, նշված աշխատությունը, «Հանգև աւստրուա», 1962, էջ 275:

⁸² Վ. Վ. Լսուկուրյան, «Եկեղեցական պատմություն», էջ 383:

⁸³ Դիմ. Տան, նշված աշխատությունը, էջ 39:

⁸⁴ Dimitrie Cantemir, „Descrierea Moldovei, traducere de pe originalul latinesc de G. Pascu“, București, 1936, p. 205.

⁸⁰ Ս. Փոլալայան, «Ցուցակ Ռումինիայի գնանգան քաղաքներում ցրված հայերի ձեռագրերին (անտիպ)» — «Արարատ»-ի 1889 թ., էջ 398—402, ապադրված Կանոնադրության մեջ, րացակայում է Ազգասանդ պապի անունը, կան նաև այլ տիպի աղավաղումներ և թերացումներ:

սակայն բացահայտվելով այդ գրքերի ինքնությունը՝ ոչնչացվում էին, Ստեփանոս Ռոշան ցասումով նկարագրում է, թե ինչպես Սուլավայի եկեղեցիներից մեկում 1734 թվականին կիրակոս անուն մի վարդապետ, նման մի հորհրդատետր, պատառ-պատառ անելով, այրում է և նրա կողերով քահանայի թուխը ծածում ժողովրդի առաջ: Ահա թե բազում ժողովրդի թուխը այրում է իր 1736 թվականի մարտի 10-ի նամակում՝ ուղղված Աբրահամ Արծիվյան հայ կաթողիկոսին կաթողիկոսին. «Խայց լուել ոչ կարեմ զանօրէն արարն կիրակոս վարդապետին, որ երկու ամօք յառաջի Սնչով քաղաքին ի մէջ եկեղեցւոյն առաջի ժողովրդեան զհորհրդատետրն մի ծիւ ծիւ արարեալ այրեաց և կողիքն զգլուխ քահանայի միոյ ծածեաց: Գարշելի է ինձ զայսպիսեաց գրելն, բայց զանգատքն ոչ տան թուլ»⁸⁵, ինչպես նշում է Գաթրճյանը, «այն հորհրդատետրն անշուշտ լինահայոց փոփոխյալ օրինակներն էր»⁸⁶:

Ուշագրավ է, որ հետագայում ևս Մուղղվայի հայոց մոտ կաթողիկական քարոզչությունը չի ընդհատում իր գործունեությունը, այլ ընդհակառակը այն կրում է սիստեմատիկ բնույթ: Զինք կարծում, որ հետաքրքրությունից զուրկ լինեն հետևյալ մեջբերումները՝ Մուղղվայի հայերի մոտ կատարվող կաթողիկական քարոզչական գործունեության մասին:

Լվովի արքեպիսկոպոս Հովհաննես Տորիա Ավիկուստինովիչը (1716—1751) ևս շարունակում է օգտագործել նիկոլական հին անվանական տիտղոսը, իբրև ճեպիսկոպոս Մուղղվայի նույն ազգին Հայոց, ըստ 1728 թվականի մի հիշատակագրության⁸⁷, Այս տիտղոսը կրկին օգտագործվում էր, հավանաբար այն պատճառով, որ այս շրջանին, բացի այցելու նվիրակներից, Մուղղվայի հայոց թեմը փաստորեն հիմնական առաջնորդ չունեի այլևս, այնպես, ինչպես որ ունեցել էր մինչև հայերի մի մասի Տրանսիլվանիա գաղթելը: Իհարկե, այս փորձը ևս ոչ մի արդյունք չտվեց:

1757 թվականին, Հոռմում, Ուրբանյան դպրոցում ուսած Հովհաննես Հակոբյան տրանսիլվանիացի քահանան Հոռմի Պրոպագանդայի կողմից առաքելությամբ Մուղղվա ուղարկվեց: Սակայն, ըստ երևույթին, նա ուժեղ հակահարված էր ստացել տեղի հայերից, քանի որ Լուսկարյանը հետևյալ ձևով է նկարագրում նրա վախճանը. «չմիաց-

յալ հայերեն շատ նեղութուն կրելով 1791-ին լի արդյամբք վախճանեցավ»⁸⁸:

1775 թվականին Բուկովինան, հայաշատ Սուլավա քաղաքի հետ, երբ անցավ Ավստրիական կայսրության կազմում, ինչպես նշում է Լուսկարյանը, Հովսեփ Բ կայսրի առաջին հոգը եղավ Մուղղվայից այնտեղ եկած ոչ կաթողիկ հայերին Տրանսիլվանիայի հայոց նման Հոռմի Եկեղեցուն միացնել: Բայց նրա ևս ամեն ջանքերը իդուր անցան⁸⁹: Այս նպատակով առաջինը ուղևորվեց Քրիստափոր Քորպուլի հայ կաթողիկ վարդապետը, որը Տրանսիլվանիայի հայերի հոգևոր հովիվն էր. նա 1782 թվականի մայիսի 10-ին հասավ Սուլավա և փորձեց հայերին կաթողիկոսության մղել, սակայն նա ևս անհաջողության մատնվեց⁹⁰: Ավստրիայի գնեբրալ էնցենթերգը աշխատեց աջակցել Քորպուլիին, սակայն գնեբրալը շուտով համոզվելով այդ գործի վտանգավորության մասին՝ փոխեց իր միտքը⁹¹:

Ճիշտ է, որ այդ շրջանում Սուլավայում ճիզվիտների համար գործունեության ուժեղ հող կար, սակայն նրանք չէին կարող պետությունից բացարձակ օժանդակությունը վայելել, քանի որ պետական մարդիկ այժմ նպատակահարմար էին գտնում Բուկովինան վերածել առևտրական խոշոր կենտրոնի և որտեղ հայերը կարող էին կարևոր դեր ստանձնել:

Այժմ Ավստրիայի մեծամեծները գտնում էին, որ կրոնական ճնշումները կխրտնեցնեն հայերին, և ինչպես գրում էր հետո գնեբրալ էնցենթերգը, այդ կարող էր նրանց արտագաղթի պատճառ դառնալ. այն ինչ դավանական կատարյալ ազատությունը հավանորեն չգրասի հայերին էլ կգրավի մեր երկրում...»⁹², նման ազատության կողմ էր այժմ նույնիսկ Հովսեփ Բ կայսրը, որը 1783 թվականին այցելել էր Սուլավայի հայերի մեծամեծներին և նույնիսկ ներկա էր եղել հայոց եկեղեցում կատարված արարողությանը⁹³, Սուլավայի հայերը, պաշտպանվելու նպատակով, դիմում էին հաճախ էջմիածին, որին ի պատասխան Ղուկաս կաթողիկոսի հանձնարարությամբ այս գործով զբաղվեց Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղուիսյանը: Ղուկաս կաթողիկոսի մի շարք կոնդակների իբր հետևանք,

⁸⁵ Վ. Վ. Լուկաշույե, Նշված աշխատությունը, էջ 383:

⁸⁶ Նույն տեղում, էջ 386—387:

⁸⁷ Գեմ. Տեմ, Նշված աշխատությունը, էջ 43:

⁸⁸ Լ. Բաբայան, «Հայերը Մուղղվայում և Բուկովինայում», Թիֆլիս, 1917, էջ 113:

⁸⁹ Նույն տեղում, էջ 110:

⁹⁰ Նույն տեղում, էջ 111:

⁸⁵ «Կամենեց», էջ 146 և Հ. Վ. Գաթրճյան, «Աբրահամ և պատարագամայոց հայոց», էջ 598:

⁸⁶ Հ. Վ. Գաթրճյան, Նշված աշխատությունը, էջ 598:

⁸⁷ «Կամենեց», էջ 199:

Հովսեփ Բ կայսրը 1786 թվականին իր հրովարտակով իրավունք տվեց Բուկովինայի հայազավան հայերին հպատակվելու էջմիածնի կաթողիկոսին և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքին⁹⁴։ Հովսեփ Բ-ի մահից հետո, հայերը գիմեցին նրա հաջորդ Լեոպոլդ Բ-ին, սակայն հնարավոր չեղավ հայ հոգևոր առաջնորդությունը վերահաստատել։

Վերոհիշյալ բոլոր ժամանակաշրջանում և նրանից հետո էլ կաթոլիկական քարոզչությունը կանգ չէր առնում։ 1796 թվականին Սուլավայի հայոց մոտ ղրկվեց Հովսեփ Մոշորոյ հայ կաթոլիկ վարդապետը⁹⁵։ 1824 թվականին Վիեննայից ուղարկվեց Քարաչոնեի քահանան⁹⁶։ Ուշագրավն այն է, որ վերոհիշյալ երկու հոգևորականների անուններից դատելով, նրանք տրանսիլվանացի հայեր պետք է լինեին։ Այս, վերոհիշյալ Հովհաննես Զակորյան, Կորպուլի և Քարաչոնեի տրանսիլվանացի քահանաների անունները ցույց են տալիս, որ այդ վայրի հայերի բռնի կաթոլիկացումից հետո, Լվովի թեմը երբեմն ոգտագործում էր նաև տրանսիլվանացի հայերին, քանի որ նրանք Բուկովինայի և հատկապես Սուլավայի հայերի հետ սերտ ազգակցական կապեր ունենալով, հնարավոր էին համարում, որ իրենց քարոզչությունը որոշ նպատակի կարող է հասնել։

Ըստկարյանը գրում է, որ նույնպես առանց հետևություն ևն մնացել Լվովի հայ արքեպիսկոպոս Ստեփանյանի «ջանքերը», որ Բուկովինայի հայ կաթոլիկ եկեղեցիները այցելելու ժամանակ, անձամբ «չմիացելոց զարձին սկսավ պարապել»⁹⁷։ Հիշյալը Լվովի Սամվել Ստեփանովիչ հայ կաթոլիկ արքեպիսկոպոսն էր (1831—1858)⁹⁸։ Այս վերջինը իրականում երկու անգամ եկել էր Սուլավա

և հաճախակի քարոզչություններ կատարել և նույնիսկ վիճել էր տեղի հայոց ժողովրդապետական եկեղեցում, Հովհաննես Բողոչյան անունով հայ քահանայի հետ։ Ինչպես գրում է Դանը, հիշյալ հայ քահանայն անոր (իմա՝ Ստեփանովիչի) այս միացնելու փորձին համար՝ հրապարակավ անհեծք կարգաց անոր վրա⁹⁹։

Լեհահայ գիտնական Բարոնը գրում է, որ 1828 թվականին, Ավստրիայի կայսրի հրամանով, Վիեննայից Պոդոս վարդապետ Հովհանյանը ղրկվեց Սուլավա, որը ևս տեղի հայերին հայերեն լեզվով հորդորում էր միանալ, սակայն արդյունքի չհասավ¹⁰⁰։

Դարձյալ անարդյունք մնացին Ֆլորիան Միտուլսբի 1839 թվականին և ավելի ուշ Իսակովիչի, Իգնատիոս Ստեփանովիչի և Դավիթովիչի քարոզչական փորձերը¹⁰¹։ ԺՔ զարի վերջին էր, որ Լվովի հայ կաթոլիկ թեմի արքեպիսկոպոս Իսակ Իսակովիչը Սուլավայի և Բուկովինայի «մոլորյալ» ազգակիցներին միություն հրավեր է կարդում¹⁰²։ Մեր դարի սկզբներին ևս հայ հոսմական մի եպիսկոպոս Սուլավա է գալիս հայերին կաթոլիկացնելու նպատակով, սակայն նրան ևս չի հաջողվում ոչինչ անել¹⁰³։

Այսպիսով, դարերի պատմություն ունեցող կաթոլիկական քարոզչությունը Մուլավայի հայերի մոտ հաջողություն չունեցավ, քանի որ համոզորեն կրկնվող առաքելությունները մեկը մյուսի հետևից փշրվեցին ավանդապահ հայերի անհողողղ և աննկուն կամքին և նրանց հայրենասիրական հակազդեցությանը բախվելով։

(Շառունգյան)

⁹⁴ Գեմ. Տաե, նշված աշխատությունը, էջ 46։

¹⁰⁰ Sadok Barącz, նշված աշխատությունը, էջ 171—172։

¹⁰¹ Գեմ. Տաե, նշված աշխատությունը, էջ 44։

¹⁰² «Արմենիա», Մարտի, 1886, ժՐ տարի, № 34։

¹⁰³ Փ. Սլյուցյան. «Պոդոլինայի հայերը», «Ռիդան-դին», 1910, № 146։

⁹⁴ Լ. Բարոյան, նշված աշխատությունը, էջ 187։

⁹⁵ Գեմ. Տաե, նշված աշխատությունը, էջ 43—44։

⁹⁶ Վ. Վ. Ըստկարյան, նշված աշխատությունը, էջ 367։

⁹⁷ Նույն տեղում, էջ 337։

⁹⁸ Զ. Ղ. Ալիյան, «Գամեհից», էջ Ը։



Ե. ՄՈՄՋՅԱՆ

(Կիրովականի գովառագիտական
բանագրության ավագ գիտաշխատող)

ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Աշխարհագրական այն տարածությունը, որին կոչված է սպասարկելու Կիրովականի ընդամենը 27 տարվա կյանք ունեցող գավառագիտական թանգարանը, հնում մտել է պատմական Հայաստանի Գուգարքի կամ Գուգարաց աշխարհի մեջ՝ Տեղանվան այս ձևերը սերտորեն առնչվում են հայոց լեզվի հնագույն՝ արմատական կամ անջատական վիճակի հետ։ Սրանցից ագուգա՝ թե՛ արմատական հայերենում և թե՛ սումերերենում նշանակել է ռազմիկ, որով կազմված է հայերենի ագուգազ բաղադրությունը ռազմական միավորումն իմաստով, ագուգարքա՝ ռազմիկ-մարդիկ կամ ռազմիկ ցեղերն, իսկ ագուգարաց աշխարհ՝ ռազմիկ մարդկանց կամ ցեղերի երկիրն։

Մեր լեոնաշխարհի նման բովանդակությամբ անվանումը ցույց է տալիս, որ հին հայերը առևտրական և ռազմական հարաբերությունների մեջ էին մտել հնագույն բնակիչների հետ, մինչև որ նրանց ենթարկել էին իրենց մշակութային-քաղաքական ազդեցությանը։ Մեր պատմաբանների կարծիքով, Գուգարքի և ընդհանրապես Հայաստանի ժայռագավառների նվաճումը կատարվել է Ուրարտական իշխանության անկումից հետո՝ 5—3-րդ դարերում մ. թ. ա., հայկական էթնոսի կազմավորման հետ զուգընթաց կամ Արտաշեսյան թագավորության ռազմական ձեռնարկումներով՝ 3—1-ին դարերում մ. թ.

ա. ագուգարքա բառի մեջ ստուգաբանությունը ցույց է տալիս, որ սխալ են թե՛ հայկական էթնոսի կազմավորման և թե՛ Գուգարքի նվաճման մեր պատկերացումները։ Նրանք հակասում են գրաբարի կազմավորման և հայկական մշակույթի տարածման դարավոր ու դանդաղ ընթացքին։ Նախքան Արտաշեսյանների ռազմական նվաճումները, հայ էթնիկական ցեղերը մշակութային որոշ հոգ պատրաստած կլինեին դեռ ուրարտական ստրկատիրությունից առաջ, որի հետ կրնդ հարվել նրանք, Ասորեստանի հետ կազմակերպելով Ուրարտական ժայռամասերի մըշտապես կրկնվող ապստամբությունները։ Այս հանգամանքը բացատրելի է նրանով, որ հայկական ցեղերը, նախքան Ուրարտոի ասպարեզ գալը, հանդիսացել են մետաղների, շինանյութերի և մասամբ ստրկական ձեռքերի գլխավոր արտահանողները։ Ասորեստանի և Բաբելոնիայի շուկաներում, Ուրարտոի ասպարեզ գալով ընդհատվել է նրանց տնտեսական և մշակութային հետագա զարգացումը։ Այս հանգամանքը հայկական ցեղերին մղել է Ասորեստանի հետ կրնքի հակաուրարտական ռազմական դաշինք, որն արտացոլված է Խորենացու պատմության առաջին գրքում և հայ ժողովրդական դուցազնավեպում, ուր առաջին սերնդի հերոսներին՝ Սանասարին և Պաղտասարին վերագրվում է ասսուրական ծագումը։

Մեր նախնիների առաջադացումը դեպի հյուսիս՝ մետաղահանքերի հետքերով, որի

¹ H. de Barenton, „Lexique Sumérien“, Idéographie 315, Paris, 1932.



1. Չբացված վիճակում

2. Բացված վիճակում

3. Մացրված վիճակում

Նկար 1.— Զարթոնկային դամբարանի երեք ձևերը պեղման ընթացքում:

մասին ակնարկում է խորհնացին, կատարվել է նախաուրարտական ժամանակաշրջանում, աստիճանաբար, հավանաբար ոչ խաղաղ ներթափանցումներով: Դրա մասին վկայում է Գուղարքի հարավային զավառներից մեկի՝ Կանքարք անվան ստուգարանությունը:

Սումերներենում պահպանված հին հայերենի «կան-ակա»² արմատների միկրո-կապակցությունից սղված այս «կան» բաղադրությունը հնում բառացի նշանակել է «պաշտպանություն-դուռ», որով «կան-ակա-արք» ունեցել է «պաշտպանության-դուռի մարդիկ կամ ցեղեր» իմաստը: Հայտնի չէ, ո՞ւմ դեմ է ուղղված եղել այդ պաշտպանությունը, ուրարտական ամայացնող արշավանքների՞, թե՞ Գուղարքի անհանդիստ ցեղերի դեմ:

Մեր կարծիքով Կան-Ական որուես «պաշտպանության դուռ կամ կիրճ», ուր կենտրոնացել են հայկական ցեղերը, հնարավոր է զետեղել արդի Կիրովականի շրջակայքում, որովհետև միակ վայրը, որ լեռնային կիրճերի առկայությամբ կատարում է ճամբարածան դեր, դա Կիրովականն է: Այժմ էլ Կիրովականը հանդիսանում է զենայի վրաստան և Աղվանք տանող ճանապարհների հանգուցակետը: Այս տեսակետն արդարացնող փաստերից է այն, որ Կիրովականի շուրջն են գտնվում բրոնզեդարյան ամրությունների և բնակավայրերի ավերակները: Խնձորուտում, Կիրովականում և Ժղանով գյուղի բարձունքներում: Այդ երեքմանի ամրացված բնակավայրերը դասավորված են միմյանցից ոչ հեռու, 2—3 կմ. տարածության վրա, Դվալի լեռնանցքի, Բաղումի և Փամբակաձորի ելուստների դեմ հանդիման: Այդ բնակավայրերի շուրջն են տարածված քարարկղային հաղարավոր դամբարաններ:


որոնք պատկանած կլինեին ոչ թե մեկ, այլ մի քանի տասնյակ սերունդների (նկար 1):

Այդ դամբարանադաշտերը շատ կարևոր հուշարձաններ են այն պատճառով, որ մեծիկների հետ թաղված են լինում կենցաղային բաղմապիսի առարկաներ, որոնք սերտորեն կապված են եղել նրանց առօրյա կյանքի հետ: Այդ առարկաները, որոնք թվին են պատկանել որոշ զենքերում նույնիսկ հանդուցյալի կինը, ծառաները և երեխաները, գերեզմանում դրվել են որպես «հոգեբաժին» ըստ այն հավատալիքի, որ մեռնելուց հետո մարդու «հոգին» քառասուն օր շարունակ վրեժխնդրությամբ և ցասումով թափառում է ցեղի բնակավայրում և իր գերեզմանի շուրջը, ընդունելով ամենասոսկայի գազանակերպեր: Որպեսզի մեռնողի ծալքը ետին չմնա և կատաղած ոգին չվնասի ապրողներին, անհրաժեշտ են համարել սիրաշահել նրան, այն բոլոր առարկաների և բարիքների թափնով, որոնք ծանոթ են եղել նրա կյանքում:

Հոգեպաշտական այս հնագույն հավատալիքները պատճառ են դարձել, որ հոգեբաժին առարկաներով հարստանան մեր թանգարանները և հնարավոր լինի ճանաչել այդ դարաշրջանի հասարակության պատմությունը:

Կիրովականի կամ հնագույն Կան-Ակայի դամբարանների ընձեռած կենցաղային իրերի նշանակությունը շատ մեծ է հատկապես որոշելու համար Հայաստանի էթնիկական մշակույթի հիմնական գծերը և նրանց տարածման ուղղությունները: Անշուշտ, այս մտորումների հիմնական նպատակն է գրտնել հայկական ցեղերի ելման կենտրոններն ու աշխարհայացքի և արվեստի այն հատկանիշները, որոնք վերջին հաշվով ատաղձի դեր են կատարել հայկական մշակույթի կաղմավորման ընթացքում: Այս տեսակետից օգտակար բաղմակողմանի նյութ է հավաքված ոչ միայն Կիրովականի, այլև նրանի պե-

² 2. Ղը ԲաբեՆՈՒՆ, նշված աշխատությունը, գաղափարագիր 92, 31:



Նկար 2.—Կիրովական, Ժղանով. 1961 թվականին բացված դամբարանի իրերից՝ բրոնզե ապարանջաններ, սարդիոնե ուլունքներ և այլ պարզեր:



Նկար 3.—Կիրովական, Ժղանով. 1961 թվականին բացված դամբարանի իրերից՝ ձիու սանձի պղնձե եռասաններ, բրոնզե վանդակներ և սնամեջ կախիչներ:

տական պատմության թանգարանում: Առ այդ՝ արժի հիշատակել 1938 թվականի աշնանը մեր կողմից Հայտնաբերված Դիմաց

թաղամասի քարարկղային № 20 դամբարանի իրերը, որոնք ժամանակին հանձնվել են պետական պատմական թանգարանին: Այդ դամբարանից հայտնաբերվել են 46 հատկավիճակով, որոնք պատկանում են միևնույն դամբարանադաշտի հետագա Կուրդիյան փողոցի մեջ ընկնող դամբարանների նյութական տիպերին: Անոթների հետ հայտնաբերվեցին մեծ քանակությամբ երկաթե իրերի ժանգ, ոսկերչական բարձր արվեստով կերտված արծաթե և ոսկե նշանակալի քանակությամբ կանացի զարդարանքներ, ածուր բանված բրոնզե կախիկ թուղուններ և բոժոժներ, այլ և սարդիոնե, սերդուլիկե և ծարիրի ամենատարբեր ձևերի և մեծության ուլունքներ, որոնց ընդհանուր շարանը կազմեց ավելի քան 5 մետր երկարությամբ: Այդ նյութերը գեոլոգիկ ուսումնասիրվել պատմական համեմատության տեսանկյունով: Դրանց մասին չի եղել նույնիսկ զիտական որևէ լուրջ հաղորդում:

1961 թվականին, Կիրովականի Հյուսիսային լանջերից մեկում բացվեց մի շատ հետաքրքրական քարարկղային դամբարան, ուր թաղված են եղել քրմական պաշտոններ ունեցող բարձրաստիճան մարդ ու կին: Դամբարանից հայտնաբերվեցին ձիու ոսկորներ, պղնձե զույգ սանձի երասաններ, բրոնզե զանգակներ, տղամարդու սպառազինության խառնուրդով բրոնզե նուրբ և սպիտակ ապարանջաններ և այլ կանացի զարգեր (նկար 2, 3):

Հայտնաբերված 14 կավանթների մեջ առանձնահատուկ ուշադրության արժանի են արևի և աստղագույնակության խորհրդանշաններով զարդարված սևաթույր սափորները, կավե ծիսական կրակարանը և բրոնզե զույգ դոտիները, որոնցից մեկը բոլորովին քայքայված: Մյուսի վրա նուրբ գծերով փորագրված են երեք խոշոր աստղեր, համաստեղային նշաններ և աստղագույնակային տոմարի հաշվումները պատկերող խորհրդանշանական նկարներ: Սրանց ուսումնասիրությունը որոշ լույս է սփռում այդ հասարակության աշխարհայացքի և աստեղային դիտելիքների վրա: Այդ գոտու տոմարական պատկերացումները առնչվում են Հին Քարելոնի աստեղային դիցաբանության պատկերացումների հետ: Վերջինից գոտու տոմարական պատկերացումների այդ փորագրությունները բանալի են ժառանգում Հայաստանի և Անգրեկովկասի տարբեր վայրերից գտնվող դոտիների կենդանակերպային ֆանտաստիկ ձևերով դրսևորվող տոմարական և

դիցարանական բովանդակությունները վեր-
ծանելիս:


Հայագիտության համար ամենահետա-
քրքրականը այդ գոտու վրա նշված ամիս-
ների դրսևորումն է թուշական թևերի գծա-
նկարներով, որոնք, շնորհիվ լեզվական հա-
մապատասխան փաստերի, նոր լույս են
սփռում այդ դամբարանային տիպերի և
նրանցում հայտնաբերվող առարկաների
հայկական հնագույն ծագման մասին (Նկար
4ա, 4բ):

Տարվա ամիսները ներկայացնող այդ
զարդերը թևավոր ձևով են փորագրված այն
պատճառով, որ լուսինն Հայաստանի քնիկ-
ների մոտ պատկերացված է եղել թևավոր
ծիծեռնակի տոտեմական կերպարանքով:
Դրա համար լուսնի տոմարական փուլերի ա-
նուններն հայերենում կազմված են ծիծեռ-
նակի նախնազարյան սի (Si) անվան հիմ-
քում կատարվող արմատական տարբեր ա-
ծանցումներով, որոնք մենք փորձել ենք վե-
րականգնել սումերերենում պահպանված
հայերենի նախնական բառերի օգնությամբ:

Բերում ենք դրանց գծանկարն ըստ վերա-
կանգնված անունների, որոնք այնքան տա-
րածված են եղել հին հայերի տոմարական
պատկերացումներով (Նկար 5):

Ըստ այդ պատկերացումների, լուսնի յու-
րաքանչյուր փուլը ներկայացնելով 3 օրվա
շրջան, կրկնվող 10 փուլերի պայմաններում՝
30 օրվա ամիսը բաժանված է եղել 6 օրից
բաղկացած 5 շաբաթների:

Ըստ այնմ լուսնի աճող եռօրյա բարսի
մահիկը կոչվել է Սի-նու (Si-Nu), որ բառա-
ցի նշանակել է «Ծիծեռնահարս»: Վեցօրյա
աճող մահիկը՝ Սի-նուի-Ակ (Si-Nui-Ak),
«Ծիծեռնահարսի շրջան», իննօրյա աճող կի-
սալուսինը՝ Լու-Սի-նու (Lu-Si-Nu), «Հզոր
Ծիծեռնահարս»: Տասներկուօրյա օվալաժի-
ն աճող փուլը՝ Լու-Սի-նուի-Ակ (Lu-Si-Nui-
Ak), «Հզոր Ծիծեռնահարսի շրջան», Տասն-
հինգօրյա լիալուսինը՝ Լու-Սի-նու-Կա (Lu-
Si-Nu-Ka), «Հզոր Ծիծեռնահարս կատար-




Նկար 4բ.— Տոմարական գոտու մանրամասները:

յալ»: Սրանցից հետո կրկնվում են փուլերու
նվազած ձևով, մինչև որ հասնում են 30-օր-
յա չերևացող նորալուսինին, որը կոչվել է՝
Սի-նու-Անակ (Si-Nu-Anak), «Ծիծեռնա-
հարս անշրջան»:

Այս բոլորը հանդիսանում են լեզվի անջա-
տական վիճակի միկրո-կապակցություններ,
որոնք իմաստների մթազնման հետևանքով
սղվել են և զարգացման բաղադրական վի-
ճակում ծնունդ տվել հայերենի բոլորովին
տարբեր բովանդակությամբ սին, սենյակ,
լուսին, լուսնյակ, լուսնկա և սնանկ բառերին:

Սրանով վերանում է հնդեվրոպաբանների
այն սխալ կարծիքը, որ իբր հայերեն լուսին



Նկար 4ա.— Տոմարական գոտու թևավոր ամիսների
մասերը:

³ 2. Ղր Բաբեևտոն, Եշված աշխատությունը, զաղա-
փարագիր 604, 647, 533, 15, 428:



Նկար 5. — Լուսնական ամսվա փուլերը և նրանց հնագույն հայկական անունները:

բառը ծագել է ինչ-որ սեռախալեզվում⁴ ևն-թագրվող loucsnâ¹ (լուկսնա) բառից և թե լուսնկա բառն իբրեւ եղել է լուսին բառի բարբառային տարբերակը:

Սղվելով լեզվական Սի-նու (սփծեռնահարա) կապակցությունից, Սին է կոչվել սուամերական Ուր քաղաքի հովանավոր աստվածը, որ, ստրկատիրական դարգացած հարաբերությունների ազդեցության տակ, փոխել է իր սեռը և ընդունել հասարակական նոր րոպանդակություն: Մինչդեռ դիցաբանական միևնույն անձնավորությունը հայկական լեռնաշխարհի նյութական տարրեր պայմաններում մնացել է որպես լուսնական մայր աստվածուհի, որ հետագայում կոչվել է Անահիտ: Այդ աստվածուհու հետ են կապված եղել Հայաստանի վաղ հեթանոսական տաճարներում կատարվող տոմարական հաշվումները, աստղագիտականությունները, երազահանումներն ու կանացի դաշտանի և ծնունդաբերության վերաբերյալ կիսաբժշկական գործառնությունները: Պատմական այդ իրողությունից լուսնի նկատմամբ պահպանվել են վերապրուկային բավական թվով հավատալիքներ հայ ազգագրության մեջ:

Գոտու ծիծեռնակային թևերով ամիսները ցույց են տալիս ոչ միայն դամբարանի և նրանից հայտնաբերվող առարկաների հայկական ծագումը, այլև այն մշակութային

պատմական ընդհանրությունները, որ եղել են հին սումերական և վաղագույն շրջանի հայկական հասարակությունների միջև: Դեռ 14 դար առաջ Մովսես Խորենացին եկել էր այն համոզման, որ «ի Քաղդէացւոց և յԱսորեստանեայց մատենից ցանկագոյն են մեր իրքս»⁵, Այդ է պատճառը, որ Խորենացու պատմության դիցաբանական հերոսների անուններն ու Հայաստանի հնագույն տեղանունները՝ Գուգարք, Կանքարք, Այրարատ, Սեան, Երևան, Սյունիք, Տարոն, Տուրուբորան, Մոկս, Արտագերս և ուրիշներ հիանալի կերպով բացատրվում են սումերներենում պահպանված, եթե կարելի է ասել, հայերենի բառարմատներով:

Կիրովականի հնագույն քնակավայր Կան-Ակայի պատմության կապակցությամբ մենք տեսանք այն կարևոր գերը, որ լեզվական հնարանության զուգընթաց կատարում են նյութական կուլտուրայի հուշարձանները:

Հայաստանը, որպես հնագույն մշակույթի երկիր, ներկայացնում է մի ընդարձակ յուրահատուկ թանգարան, որի գիտական նշանակությունը չի սահմանափակվում միայն հայ ժողովրդի և հայկական ինքնուրույն մշակույթի կազմավորման հարցերի շրջանակով: Նրա ընդերքում պահպանված նյութական մշակույթի արժեքներն առնչվում են մարդկային հասարակության կազմավորման ամենավաղ շրջանի գործունեության հետ: Նրանց միջոցով են գրանցվում նախնադարյան հասարակության համառոտ, բայց ստույգ էջերը: Նրանց միջոցով հնարավոր է լինում թափանցել ժողովրդական ֆանտաստիկ պատմվածքների և դիցաբանական առասպելների հասարակական րոպանդակության խորքը և նրանց դարձնել պատմության սեփականությունը: Ահա այդպիսի հնագույն հասարակության հուշարձաններ են Փամրակաձորի այն ավերակ քնակավայրերը, որոնք հայտնաբերվել են՝

1. Կիրովականի «Թագավորանիստ» բլրի վրա և նրա հարավ-արևելյան գետափնյա ստորոտներում:

2. Մեսրոպ-Մաշտոցի բլրի հարավային լանջերում՝ 8-րդ միջնակարգ դպրոցի շերտակայքում:

3. «Յաթաղներ» կոչված գետափնյա լանջերում:

4. Կիրովականի Հյուսիս-արևելյան մասում՝ Սուռ փողոցի գետափնյա թեքության վրա:

5. Կիրովականի 3-րդ տեղամասի «Բոսի ճոթեր» կոչված բարձունքի վրա և նրա ստորոտներում:

⁴ T. korst, „Mythologie arméno-caucasienne“, Strassbourg, 1948, p. 71.

⁵ Մովսես Խորենացի, «Հայոստանի Հայոց», Ա գիրք Բ:

6. Լեռնապատ գյուղի կիկլոպյան բերդի շրջակայքում:

7. Մեղասու կոնդա-ի վրա, Սպիտակի շրջանի կրաքարի հանքավայրում:


8. Նալբանդ գյուղի դպրոցի հարավային լանջերում:

9. Մեծ Պառնի գյուղի բլրի հարավ-արևմտյան լանջերում:

10. Գեղարուտ դուղի բլրի հարավ-արևմտյան լանջերում:

Այս հուշարձանները վերադրվում են 4—2-րդ հազարամյակներին մ. թ. ա. և կոչվում պղնձաքարային կամ էնեոլիթային բնակավայրեր:


Այդ հասարակության մշակութային հատկանիշն է բարձր զարգացման հասած ձեռքի կավադործությունը, կավանոթները նուրբ են, ունեն փայլուն՝ սև մակերես և ներձկված դարդեր, որոնք թողնում են բարձրաքանդակ ժապավենավոր տեխնիկայի տպավորություն: Մեր լեռնաշխարհի բնակավայրերում կավանոթներն ունեն պարուրային կոմպոզիցիայի այնպիսի ներդաշնակ և բազմազան




Նկար 8.— Էնեոլիթյան կավանոթ Մեսրոպ Մաշտոցի բլրից:

զարդեր, որոնք այժմ էլ իրենց թարմ փայլով մեծ հաճույք և հիացում են պատճառում դժվարահաճ դիտողներին (Նկար 6, 7, 8, 9, 10, 11):


Ինչպես Շենգավիթի համապատասխան բնակավայրում, այնպես էլ Փամբակաձորի և Կան-Ակալի պղնձաքարային դարաշրջանի բնակարաններն ունեն կիսագետնափոր բուրձնե կառուցվածք՝ կենտրոնում ունենալով սրբազան թոնիրը: Հնագետ է. Խանդադյանի փորձնական պեղումների ժամանակ, այդպիսի բնակարանից հայտնաբերվել են ընտանի այծի ածխացած եղջյուրներ, բարձր թեղի և կուրց, այծի և եղջերվի ոտնոսկրներից կանաչի մանյակ և ամենից կարևորը՝ կենտրոնական անցքով բարձր կամ քարմաններ, որոնք ծառայել են ուսարանի և երիզային կուպիտ հազուատներ պատրաստելու համար բրդե ուսարաններ ոլորելու նպատակին: Եթե դրանց վրա ավելացնենք մեր ջանքերով ձեռք բերված քարե և ոսկրե ամենատարբեր գործիքների և թվով 7 կավանոթների հիանալի ժողովածուն, որոնք կազմում են Կիրովականի թանգարանի պարծանքը, մենք կզանք այն եզրակացության, որ այդ հասարակությունը յեռնային շրջաններում դրադվել է մանր եղջերավոր կենդանիների հիմքում զարգացող անասնապահությանը, մանածադործությանը և վարդաքանդ կավադործությանը, ուր աշխատանքների ստեղծագործական հիմնական մասը ընկած է եղել կանանց ուսերին: Համապատասխանորեն տնտեսության ղեկավարությունը՝ արտադրությունն ու ուսուցումը տեղի է կանանց վերահսկողության տակ: Այդ մասին է վկայում հայերենի մայր բառի անշատական մա-իտ կապակցության սկզբնական ձևերով պահպանված են սու-




Նկար 6.— Էնեոլիթյան կավանոթ Մեսրոպ Մաշտոցի բլրից:



Նկար 7.— Էնեոլիթյան կավանոթ Մեսրոպ Մաշտոցի բլրից:



Նկար 9.— Էնեոլիթյան կավաման Մեսրոպ Մաշտոցի բլրից:



Նկար 10.— Էնեոլիթյան կավանոթ Մեսրոպ Մաշտոցի բլրից:


մերերենում⁴ Արմատական իր բառը սումերերենում ունի «տոհմ», «ունեցվածք» և «մանր եղջերավոր կենդանի» իմաստները: Մի հին բառարմատ, որից առաջացել են հայերենի և սումերերենի 1Ի (իր)⁵ ձևով վերաբերական հայտնի դերանունները:

Ըստ հնագիտական շերտերի ցուցմունքի, մեր լեռնաշխարհի պղնձաքարային հասարակության անմիջականորեն հաջորդում է այն հասարակությունը, որի դամբարանից հայտնաբերվել են ժապավենավոր կավանոթները և բրոնզե աստղազարդ գոտին: Այս մշակույթը հանդիսանում է այն միջին օղա-

կը, որ իրար է միացվում ուրարտականն ու պղնձաքարայինը, կազմելով զարգացման մի տեսակ անընդմեջ շղթա: Այդ հասարակությունը, որ ծանոթ է բրոնզե և երկաթի րերի արտադրության բարդ տեխնիկային և ապրում է դասակարգային նախնական հասարակություններ, նախորդ հասարակությունից մասամբ ժառանգել է նրա աշխարհայացքի, զարգարվեստի և կավագործության որոշ գծերը: Բրոնզեդարյան այս ժամանակաշրջանից Կիրովականի թանգարանն ունի հիանալի նյութեր, որոնք բացառաբար ձեռք են բերված քարակղզային դամբարաններից:

Լոռի-Փամբակի հայտնի հուշարձաններից են քաղմաթիվ քարայրները, որոնք լին հետազոտված հանգամանորեն: 1962 թվականին Նղեզնուտ գյուղի մի քարայրից հայտնաբերվեցին կենտրոնում քառակուսի անցքով և տարբեր բաժանումներով ինչ-որ միջնադարյան գործիքի՝ կաղնու փայտե մակուկաձև երկու մասերը, որոնք ունեն մոտ 80 սմ. երկարություն և 27 սմ. լայնք: Մեր կարծիքով, դրանք եղած պիտի լինեն զոտեգործական սարքի զլխավոր մասերը, որոնք հավանաբար թաքցվել են ժամանակին թըշնամիների ավարտություններից:

Հայաստանի պատմական հուշարձանների փառքն են կազմում նրա ճարտարապետական կառուցվածքները, որոնց հույակով հայկական մշակույթը իր պատվավոր տեղն է գրավել արվեստի համաշխարհային պատմության մեջ: Այդ քնազավառում միջնադարյան Լոռին ունի փառքի իր արժանի բաժինը: Հատկապես Ալավերդու շրջանը հարուստ է հայ մտավոր կյանքի զարգացման կենտրոնների հույակապ հուշարձաններով, որպիսիք են Սանահինի, Հաղբատի, Ախթալայի և Օձունի վանքերի ճարտարապետական



Նկար 11.— Էնեոլիթյան կավանոթ Կիրովականի Մոս փողոցի գետափնյա լանջերից:

⁴ Զ. Պր Բաբենտոն, Նշված աշխատությունը, գաղափարագիր 541, 216:

⁵ Նույն տեղում, գաղափարագիր 415:

կոմպլեքսները, որոնք գտնվում են պետական հսկողության և խնամքի տակ, Լոռվա ճարտարապետական հուշարձանների մեջ արժանի են հիշատակության շնեվան և Խորակերտ, Հոռոմայր, Քորայր, Ս. Նշան, Բարձրաքաշ վանքերն ու Սպիտակի շրջանում Ղուրսալու գյուղի խաչաձև կենտրոնադմբժ սիրուն եկեղեցին, Ճարտարապետական հուշարձանների մաս են կազմում Լոռվա մի շարք մահարձաններն ու խաչքարերը, որոնց վրա փայլում է միջնադարյան քանդակագործությունը:

Լեզվական հնարանության դուզրեթաց, չափազանց կարևոր է պատմական հուշարձանների դերը գիտության մեջ, նրանց միջոցով են ստուգվում և ճշտվում գրավոր պատմության ամենակասկածելի էջերն ու զրվագները՝ սկսած ուրարտական արձանագրություններից մինչև միջնադարյան պատմագրությունը, դասակարգային բախումների և հարաբերությունների մոտ երեքհարյարամյա մի ժամանակաշրջան, որն ամենից շատ կարիք է դրում ճշտումների և յուսարանության:

Կիրովականի զավառագիտական թանգարանը նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանների պահպանմամբ և ուսումնասիրությամբ կատարում է մեծ, շնորհակալ գործ:

Անհրաժեշտ է լավ ճանաչել մեր երկրի պատմական հուշարձանները և պաշտպանել նրանց ավերումից ու քայքայումից, Այդ նպատակին է ծառայում հուշարձանների պահպանության պետական կոմիտեն և համաժողովրդական կամավոր ընկերությունը, որ կազմակերպվեց 1964 թվականին Հայաստանի բոլոր շրջաններում:

Այդ տեսակետից հայրենասիրական գիտական պատասխանատու դեր է վերապահված շրջանային բոլոր թանգարաններին և գյուղական ու քաղաքային դպրոցների պատմության և աշխարհագրության բոլոր դասատուներին, որոնք ի պաշտոնն շահագրգռված պիտի լինեն պատմական հուշարձանների ճակատագրով, նրանց պահպանմամբ և ուսումնասիրությամբ:

